



ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ա Ր Ո Ւ Ճ


ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ
ԿՈՒՆՏՐԱՅԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԹԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ա Ր Ո Ւ Ճ .

Գրախոս՝ պատմական գիտությունների
դոկտոր Պ. Մ. ՄՈՒՐԱՂՅԱՆ

Մասն. խմբագիր՝ ճարտարապետության
թեկնածու Մ. Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ



Մաթևոսյան Կ. Ա.

Մ 151 Արուճ /մասնագետ խմբ.՝ Մ. Մ. Հարությունյան, ՀՍՍՀ Միջնադպրոցների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպան. և օգտագործման գլխ. վարչ.—Եր.: Հայաստան, 1987.—140 էջ, նկ.:

Աշխատությունը նվիրված է Արուճ բնակավայրի պատմամշակութային անցյալին և միջնադարյան ճարտարապետական հուշարձաններին (ս. Կրիգոր տաճար, պալատ, բերդ, քարավանատուն): Ներկայացված են նաև Արուճում պահպանված վիմագիր արձանագրությունները:

Նախատեսված է հայ ժողովրդի պատմության և մշակույթի հարցերով նետաքրքրվող ընթերցող լայն շրջանների համար:

ԳՄԴ 85.113 (2Հ)1

0505040000
Մ 701 (01)—87 Պատվեր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեծ Հայքի Այրարատյան աշխարհի Արագածոտն գավառում է գտնվում Հայաստանի հնագույն և պատմական հուշարձաններով հարուստ բնակավայրերից մեկը՝ Արունը, այժմ՝ ՀՍՍՀ Աշտարակի շրջան, գյուղ Արուն: Կրա պատմության արմատները գալիս են դարերի խորքից և անցնելով ժամանակի քաղաքական, տնտեսական ու մշակութային ելևէջների բովով, հասնում են մինչև մեր օրերը:

Արունը վաղ միջնադարում, խաղաղասեր և շինարար հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի (661—685 թթ.) օրոք շուրջ քառորդ դար հանդիսացել է Հայաստանի վարչական կենտրոնը: Այդ ժամանակաշրջանում է, որ հայ վարպետների ստեղծագործ ոգու նրկունքով ծնունդ են առել Արունի հուշարձանախմբի գեղեցկաշեն կառույցները՝ իշխանական պալատը, ս. Գրիգոր տաճարը: Վերջինս մեծավաստակ Թորոս Թորամանյանի բնութագրմամբ «մի գոհար է 7-րդ դարու մեջ»:

Արունը բազմիցս հիշատակվել է հայ մատենագիրների երկերում սկսած V դարից, երբ արքունական գորքերի ձմեռանոց էր: Այն հարուստ ու շեն ավան էր ոչ միայն VII դարում, այլև IX—XIII դարերում, Անիի ծաղկման շրջանում: Այդ ժամանակ Արունը մայրաքաղաք տաճող առևտրական քարավանային ճանապարհի գլխավոր օղակներից մեկն էր և այգեգործական ու առևտրատնտեսական նշանավոր կենտրոն:

Արունում և նրա մոտակայքում պահպանված պատմական հուշարձանները պատմամշակութային կարևոր արժեքներ են հայ մշակույթի ու արվեստի պատմության համար: Դրանք են ս. Գրիգորի տաճարը՝ իր կոտ ճարտարավետությամբ, հետաքրքրական փնագրերով և քարձարվեստ որմնանկարով, Գրիգոր Մամիկոնյանի կառուցած երբեմնի շքեղաշեն պալատը, հին բերդը, քարյավանատունը և միջնադարյան այլ հուշարձաններ:

Արունի հուշարձաններին և նրա պատմության դրվագներին տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով անդրադարձել են հայագիտության

շատ երախտավորներ՝ Ղևոնդ Ափշյանը, Ն. Մառք, Հ. Օրբելին, Թ. Թորամանյանը, Յ. Ստրժիգովսկին, Ն. Տոկարսկին, Լ. Դուրնովն, Ա. Տեր-Ներսեսյանը, Վ. Հարությունյանը և այլք: XIX դարում Արուճ են այցելել նրա հուշարձանների նոր ժամանակների առաջին գնահատողները՝ Ռոբերտ Կեր Փորտրը, Հովհաննես Ծախաթունյանցը, Լիմչը, Աբել Մխիթարյանը և ուրիշներ:

Մեր նպատակն է սույն աշխատության մեջ ի մի բերել Արուճի հուշարձանախմբին վերաբերող հարուստ փաստական նյութը, հնարավորին չափով ամբողջականորեն ներկայացնել նրա պատմության նշանակալից փուլերը՝ հատկապես միջնադարյան շրջանն ու հուշարձանները: Արուճի մի շարք հուշարձաններ (քառակող կոթողներ, խաչքարեր) և փմագիր արձանագրություններ ներկայացվում են առաջին անգամ: Ուշագրավ նյութ ենք բաղել Անհի, Հոռոմոսի և Հաղիճի արձանագրություններից, որոնցում հիշատակվում են XII—XIII դդ. Արուճում գտնվող շուրջ 15 ագի՝ իրենց անուններով: Միաժամանակ փորձել ենք պարզաբանել Արուճի հուշարձանների հետ առընչվող որոշ տարակուսելի հարցեր՝ տաճարի հիմնադրման և շինարարության ավարտի թվականները, պալատի բազիլիկ կառույցի սկզբնական նշանակությունը և այլն:

Արուճ բնակավայրը գտնվում է Արագած լեռան հարավային ստորոտում ծավալված ընդարձակ սարավանդի հյուսիս-արևմտյան կողմում, բազմաթիվ ձորերով կտրատված հարթ տարածության վրա: Արուճի արևմտյան կողմով անցնող **Աղբթի ձորով**¹, ուր այժմ միայն մի առու կա, ժամանակին հավանաբար բավական առատ ջուր է հոսել, հնարավոր է, որ այն կոչվել է Արուճ գետակ: Ա. Էփրիկյանի *Բնաշխարհիկ քառարանում Արուճը հիշատակվում է որպես «հին առան կամ գիղաքաղաք... համանուն գետակի մոտ»*²: Բնակավայրի արևմտյան կողմում է գտնվում **Վանքաձորը**: Սա ավելի փոքր ձորակ է, որի աջ կողմում է գտնվում Արուճի տաճարը: Բուն բնակավայրն ընկած է այս երկու ձորերի միջև: Վանքաձորից արևելք անցնում է **Գյուրջու խոր ձորը**³, որը գյուղի հարավ-արևելյան կողմում հատվում է առաջինի հետ: Հատման հրվանդանի եզրին պահպանվել է խոշոր անմշակ քարերով կառուցված մի ուղղանկյունաձև հին շինության ավերակ:

¹ Ձորերի և Արուճի մոտակա մյուս տեղանունների անվանումները գրում ենք բարբառային տարբերակներով, այնպես, ինչպես կիրառվում են ներկայիս արունեցիների կողմից:

² Ա. Էփրիկյան, *Բնաշխարհիկ քառարան*, հ. Ա, Վենետիկ, 1903, էջ 322:

³ Արուճի բնակիչներից մի քանիսը XIX դ. եկել են Վրաստանից (Գյուրջուտան): Երանցից մեկի հիշյալ ձորում գտնվող հողամասի հետևանքով ձորը ունի սագալում կոչել են «Գյուրջու հոր ձոր»: Բայց քանի որ «Հ» տառով սկսվող բառերը արունեցիները արտասանում են «խ»-ով, տեղանունը դարձել է «Գյուրջու խոր ձոր»:

Գյուլջու խոր ձորին զուգահեռ, արևելյան կողմից անցնում է ձորերից ամենամեծը՝ **Շամիրամաձորը**, որի ձախ կողմում է գտնվում Շամիրամ գյուղը: Զորամիջյան հովիտների այս ողջ շրջանը հարուստ է հատկապես Հայաստանի նախնադարյան մշակույթի հուշարձաններով: Արուճում և նրա շրջակայքում տարեցտարի կատարվող հնագիտական պեղումները հաստատում են Թ. Թորամանյանի մարզարեական խոսքերը. «Այս Արուճ գյուղն ունի պատմական մեծ անցյալ, նույնիսկ նախաքրիստոնեական դարերում, որովհետև շրջանում շատ են տեսնվում հին ամրոցների և այլ շինությունների մնացորդներ. չափազանց հետաքրքիր կլինի այդ շրջանի հնագիտական հետախուզությունը, պատմական շատ առեղծվածներ կլուծվեն և նորություններ կարձանագրվեն»¹: Այնուհետև բազմահմուտ գիտնականը մի արժեքավոր դիտողություն է անում պատմական Արուճի ընդգրկած տարածքի վերաբերյալ, որն անհրաժեշտ է նկատի ունենալ Արուճ և Շամիրամ գյուղերի մերձակայքի հնագիտական հետազոտությունների ժամանակ: Թ. Թորամանյանը գրում է. «Փոքր մի ձորով բաժանված է Շամիրամ կամ Շամիրամ գյուղը, որ ամբողջովին նախապատմական հուշարձաններով շրջապատված է, որ թերևս ի հնումն մեկ շրջան էր կազմում Արուճի հետ»²:

Արուճի պատմական անցյալի հնագույն շրջանին վերաբերող հուշարձանների թվնույթունը դուրս է մեր բուն նպատակից, ուստի կբավարարվենք այդ հուշարձանների մասին համառոտ պատկերացում տալով:

Արուճ և Շամիրամ գյուղերի շրջանում պահպանված հուշարձանները (նախաուրարտական քաղաքատեղին, մենհիրներ, դոլմեններ, դամբարանկրոմլեխներ) գիտնականներին ծանոթ էին դեռ մեր դարասկզբին, սակայն դրանց կազմակերպված պեղումներն սկսվեցին միայն 1975 թ. Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնին հնագիտական արշավախմբի կողմից. և շատ արդյունավետ էղան: Պեղման աշխատանքների ղեկավար Գ. Արեշյանը նշում է, որ տեղի դամբարանադաշտը Անդրկովկասում մ. թ. ա. III—I հազարամյակներին պատկանող խոշորագույն դամբարանադաշտն է: «Այն զբաղեցնում է ավելի քան 20 հեկտար տարածություն, որտեղ կատարվել է շուրջ 8—12 հազար թաղում: Չնայած դամբարանների մի մասն ավերված է, սակայն այսօր էլ պահպանված դամբարանների թիվն անցնում է 5 հազարից»³: 1976 թ. ընթացքում Արուճի մոտ բացվեց երեք դամբարանաբլուր, որոնք «շուրջ 4 հազար տարվա հնություն ու-

¹ Թ. Թորամանյան, Նյութեր հայկական հարտարապետության պատմության, աշխատությունների երկրորդ ժողովածու, Երևան, 1948, էջ 120—121:

² Նույն տեղը:

³ Գ. Արեշյան, Հին Շամիրամի առեղծվածները, Գիտություն և տեխնիկա, 1980, № 4, էջ 41:

նեցող ցեղային վերնախավի ներկայացուցիչների դամբարաններ են»¹։ Գ. Արեշյանը նշում է, որ պեղված նյութերը հնարավորություն են ստեղծում մտովի վերականգնելու թաղման ողջ արարողությունը։ Սկզբում փորվել է մինչև 18 քառ մետր մակերեսով դամբանախոց, մուտքը՝ արևելյան կամ հարավ-արևելյան կողմից։ Ներսում տեղադրվել է մահացածի դին և գույքի մի մասը, որից հետո դամբանախոցը լցրել են փայտով և այրել են։ Այլվող փայտը վերջում հավանաբար հանգցրել են և ածխացած մակերեսի վրա կատարել կենդանիների զոհաբերություն։ Դրանից հետո դամբանախոցը ծածկել են քարով և հողով լցրել դամբանաթումբը։ Դամբարաններում հայտնաբերվել են գունազարդ, ինչպես և սև փայլեցված խեցեղենի նշումներ, բրոնզե կաթսաներ, միզակների գեղարդներ, կայծքարից կամ վանակատից պատրաստված նետալարքներ և այլն։ Դամբարանների նյութերը վկայում են մ. թ. ա. II հազարամյակի կեսերին ծավալված սոցիալական ուժեղ շերտավորման մասին։

Ծառ հետաքրքրական են նաև Ծամիրամի մեծ դամբանադաշտի դամբարանները, ուր հանդիպում են տարբեր տիպի, երբեմն բոլորովին իրար չնմանվող թաղումներ²։

Արուն բնակավայրը չի կորցրել իր դերը Ուրարտական (Արարատի) պետության ժամանակներում։ 1912 թ. Արունում պատահաբար գտնվել է Սարդուր II-ի (մ. թ. ա. 764—735) սեպագիր արձանագրություններից մեկի մի մասը³։ Ուշագրավ է, որ աչդ նույն արձանագրության մեկ այլ հատված գտնվել է Արմավիրում (Արգիշտիխիմի)։ Երկուսն էլ մեծ արձանագրության մասերն են։ Արձանագրության մեջ մասնավորապես ասվում է, որ Սարդուրը խաղողի նոր աչքի և պտղատու ագի հիմնեց քաղաքում և վիթխարի գործեր կատարեց⁴։ Ենթադրվել է, որ Արունում գտնված արձանագրության հատվածը այտուղ է բերվել Արմավիրից⁵։

Քանի որ ստորև հանգամանորեն խոսելու ենք Արունի միջնադարյան՝ V—XIII դդ. պատմության և հուշարձանների մասին, նպատակահարմար ենք գտնում այստեղ ներկայացնել նաև բնակավայրի պատմության համեմատաբար նոր շրջանին վերաբերող ոչ շատ հարուստ տեղեկությունները։ VII ասպ IX—XIII դարերի քաղաքական ու տնտեսական վերելքից հետո մոնղոլների և նրանց հաջորդած զանազան նվաճողների հարվածների տակ

¹ Գ. Արեշյան, նույն տեղը, էջ 37։

² Նույն տեղը, էջ 41։

³ Լեո, Երկերի ժողովածու, 6. Ա, Երևան, 1966, էջ 16։

⁴ Լ. Мелкишвили, Урартские клинообразные надписи. М., 1960, с. 317, № 172. И. Мещанинов. Новая залуская надпись из села Тилыш. «Известия АН СССР. VII серия отд. общ. наук. 1932, № 4, с. 341—348.

⁵ Նույն տեղը, էջ 317։

Արուճը Արագածոտնի շատ այլ բնակավայրերի պես կորցնում է իր նախկին դերը և անկում է ապրում:

Թուրք պատմիչներից մեկը հայտնում է, որ 1514 թ. թուրք-պարսկական պատերազմի ժամանակ Արուճում է եղել սուլթան Սելիմը¹: XVII դարի սկզբին Արուճի բնակչության ճակատագիրը կապվել է Այրարատի բազմաթիվ շրջանների հայ բնակչության տխուր ճակատագրի հետ, երբ 1604 թ. Շահ Աբաս I-ը օսմանյան բանակի առաջխաղացման ճանապարհին ամայացնելու համար կարգադրում է բռնությանը Իրան գաղթեցնել ճանապարհամերձ շրջանների գրեթե ողջ բնակչությանը: Դեպքը նկարագրող պատմիչ Իսքանդար Մուճիհն գրում է. «Որոշվեց, որ այն ճանապարհներում, որոնցով պետք է անցնեն զորքերը (օսմանյան, Կ. Մ.), մի քանի օրվա ճանապարհի տարածության վրա գտնվող շեն վայրերն ամայացվեն, իսկ դաշտերում եղած ցանքերից, արոտավայրերից ու բնակավայրերից ոչ մի հետք չմնա»²: Բնակչություն է, որ այս բարբարոսական արարքից հետո անմարդաբնակ ու ամայի դարձավ նաև Ծիրակից Արարատյան երկրամաս տանող ճանապարհի կարևոր կետերից մեկը՝ Արուճը: Դրանից հետո այնտեղ բնակություն հաստատեցին թուրքական թախիշ ցեղին պատկանող մի քանի ընտանիքներ և բնակավայրն էլ վերանվանեցին Թալիշ: XVIII դարի 20—30-ական թվականների թուրք-պարսկական պատերազմների առիթով Արուճը հիշատակող Աբրահամ Երևանցին այն արդեն կոչում է Թալիշ անվամբ. «... ցեյալ էր բանակ նորա (Ղազար խանի, Կ. Մ.) յԵրեվանայ մինչև յԷջմիածին: Եր յետ ամենայն պատրաստութեան ել անտի գնալ ընդդէմ օսմանցոց և եկն ի Թալիշ: Եր ի Թալշու ելեալ ի ճանապարհ՝ եկն ի տեղի մի Մաղարա անուանեալ, որ մեջ է ի դաշտն յԱրփայ-Չայ»³: Արշավանքի նկարագրությունից երևում է, որ Էջմիածնից Ծիրակ անցման ճանապարհին Արուճը շարունակում էր ճանապարհակետի հանգրվանի դեր կատարել:

Հ. Շահխաթունյանը 1842 թ. Արուն այցելելուց հետո գրում է, որ գյուղում ընդամենը 13 տուն մահմեդական բնակչություն կար: Միաժամանակ նշում է, որ գյուղի շուրջը երևում էին Թրքեմնի մշակելի ու ծառապատ, սակայն անուշադրությունից խամ ու խոպան դարձած շատ հողամասեր. «գտանին և բազում տեղիք անդաստանաց մաքրեալը ի քարանց և ի խճոյ և աւեր տեղիք այգեաց և ծառաստանաց»⁴: Իսկ նրանից էլ առաջ՝ 1817 թ. անգլիացի Ռոբերտ Կեր Փորտրը անցնելով Արուճի մոտով գրում է. «Մեր ճանապար-

¹ Ղ. Ալիշան, Այրարատ, Վեներտիկ, 1890, էջ 144:

² Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 99:

³ Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն (1721—1736) Երևան, 1938, էջ 90:

⁴ Հ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 59, 62:

հին անցանք Թալիշ անունով բավական մեծ մի ավանի ավերակներով... գետնի վրա կանաչության ոչ մի հետք չկար, ամեն կողմ ծածկված էր հրաբխային քարով, կամ ավելի ճիշտ կլիներ ասել անյունների զանգվածով»¹:

XIX դարի կեսերից սկսած գյուղը նորից բնակեցվում է Հայաստանի տարբեր շրջաններից՝ Մակվից, Բայազետից, Մուշից, ավելի ուշ Բասենից, Վրաստանից, Ժիրակից եկած հայ բնակչությանը: 1893 թ. լինելով Արուճում անգլիացի Լինչը այն արդեն կոչում է. «Թալիշ հայկական փոքր գյուղ»²: Ժամանակի հետ, վաստակած հողագործի բահը ծնունդ է տալիս նոր ազգիների ու ծառաստանների և բնությունից արգավանդ Արուճի բազմադարյան հողը նորից ծածկվում է ծառ ու կանաչով:

1918 թ. մի խումբ արուճեցիներ մասնակցում են Սարդարապատի հերոսամարտին: Երկու տարի անց գյուղացիներից ոմանք իրենց ակտիվ մասնակցությունն են բերում Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման համար մղված պայքարին: 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմին հիսունից ավելի արուճեցիներ մասնակցեցին, որոնց շուրջ կեսը չվերադարձավ:

Այժմ Արուճը փարթամ աչգեստաններով շրջապատված բազմամարդ ու բարգավաճ գյուղ է: Մինչև վերջերս այն դեռ կոչվում էր Թալիշ, սակայն 1970 թ. բնակիչների ցանկությանը բնակավայրը վերստացավ իր հնավանդ անունը՝ Արուճ:

¹ Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, Երևան, 1984, էջ 753.

² Լինչ, Հայաստան, Կ. Պոլիս, 1913, էջ 267:

ՄԱՍՆ Ա

**ԱՐՈՒՂԻ
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱՆՑՅԱԼԸ**

ՄԱՏԵՆԱԴՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՈՒԾԻ ՄԱՍԻՆ

Արուճը բազմիցս հիշատակվել է հայ պատմիչների երկերում: Վերջիններիս հաղորդած բազմազան արժանահավատ տեղեկությունները Արուճի պատմության ուսումնասիրման համար եղած կարևորագույն աղբյուր են: Արուճին վերաբերող մատենագրական ամենավաղ հիշատակությունը պատկանում է Եղիշեի գրչին: Պատմիչը խոսելով 450—451 թթ. դեպքերի շուրջ, թվարկում է Վասակ Սյունեցու կողմից ավերված արքունական ձմեռանոց-գորակայանները, ի թիվս այլ բնակավայրերի նշելով և Արուճը. «... անրեալ գբազում տնչիս Հայոց աշխարհին, մանաւանդ զձմեռոցս արքունի, որ կայանք զորացն էին, զԳառնին և զԵրաման... զԿուաշն աւան, զԱրուճն, զԱշնակն և զամենայն ոտն Արագածո...»¹:

Արուճի անվան երկրորդ հիշատակությանը հանդիպում ենք Գիրք թղթոցում: Այստեղ նյութեր կան Աքրահամ Ա կաթողիկոսի հրավիրած Դվինի երրորդ եկեղեցական ժողովի վերաբերյալ (609 թ.): Ժողովականների անվանացանկում մասնակիցները թվարկված են անուններով և իրենց բնակության վայրերով: Նրանց մեջ է արուճեցի Գիրոզիսը: «... Միքայէլ Սղցից, Գիրոզիս Արճոյ... և այլ վանից երիցամբ հանդերձ եկեալ...»²: Սույն տեղեկությունը շատ կարևոր է Արուճի պատմության համար, որովհետև այստեղ գրեթե ուղղակիորեն վկայված է, որ Արուճում VII դարի սկզբին եկեղեցի կար:

Արուճի մասին ժամանակագրական առումով հաջորդ վկայությունը պահպանվել է Սեբեոսի պատմության մեջ: Այստեղ մեզ նետաքրքրող հատվածում նկարագրված է 654—656 թթ. արաբական արշավանքների ժամանակ տեղի ունեցած մի դեպք: Բարեպաշտ ուն Արտավազդ Դիմաքսյանը իր եղբոր նախանձի նետահանքով մատնվում է արաբ զորապետ՝ արյունարբու Հա-

¹ Եղիշե. Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Թիֆլիս, 1913, էջ 100—101:

² Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 151—152:

քիբի (Հաքիբ իբն Մաալանա) ձեռքը, որի գորակայանք գտնվում էր Արու-նում: Արտավազդը հենց այստեղ էլ դաժանորեն սպանվում է: Սեբեոսի պատ-մությանը նշված հատվածում Արուճ տեղանունը հիշվում է «յկրուն Աշնակի» ձևով: «Յամին յաշնակի ի ձեռն նախանձու եղբար իրոյ մատնեցաւ երա-նելի այրն աստուածաւ:» Արտավազդն Դիմաքսեան և տուա ի ձեռն անո-ղորս դահճի Հաքիբն անուանեալ զարավարի, որ նստէր յԱրուն Աշնակի: Եւ սպան զնա աստկմամբ չարաչար մահուամբ»¹:

Արունը հիշատակվում է Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղ-վանից աշխարհի» երկում (VII դար): Այստեղ ժամանակակից պատմիչը խո-տում է արդեն Գրիգոր Մամիկոնյանի կառավարման շրջանի մասին: Մաս-նավորապես նկարագրում է Աղվանքի իշխան Ջվանշիրի Արուն կատարած այցելությունը՝ Գրիգոր Մամիկոնյանի ու Անաստաս կաթողիկոսի կողմից նրա հյուրընկալվելը: Այստեղ առաջին անգամ Արունը կոչվում է գյուղաքա-ղաք: «(Ջվանշիրը Կ. Մ.) գալո հասանէր յԱրարատեան գաւառն, ուր ընդ առաջ լինէր նմա ի Մամիկոնեան տոհմէն քաջն Գրիգոր, համօրէն ազատօքն և ածէ զնա ի գիւղաքաղաքն իւր Արուն: Գալո հասանէր անդր աղանին ստրբ՝ սինէն եկեղեցայ՝ մեծն հայրապետն Հաւոց Անաստաս»²: Կաղանկատ-վացու մտտ կան նաև Գրիգոր Մամիկոնյանին և նրա կառավարման շրջանի անցողարձերին վերաբերող այլ տեղեկություններ, որոնց կանդրադառնանք ստորև:

Արունի մասին հաղորդող հաջորդ մատենագրական աղբյուրը Ղևոնդի VIII դարում գրված «Արշաւանք արաբաց ի Հայս» պատմագրական երկն է: Այստեղ պատմիչը ոչ միայն ներկայացնում է VII դարի 60—80-ական թվա-կանների քաղաքական նկարագիրը, Գրիգոր Մամիկոնյանի կառավարման շրջանի բարենպաստ կացությունը, այլև նշում է Արունու իշխանի կողմից շքեղագործ եկեղեցու կառուցման մասին: Ղևոնդ համակրում է շինարար և խաղաղասեր Գրիգոր Մամիկոնյանին, ուշագրավ բնութագրում տալով նրա անձին: Այստեղ Արունն առաջին անգամ անվանվում է «ուան»: «Իսկ Գրի-գոր իշխանն Հայոց յաւորս իրոյ իշխանութեանն խաղաղացոց շաշխարհս Հայոց յամենայն հիւնից եւ յարձակմանց. զի է: ալ երկիւլան յԱւտոծոյ, եղբարասւր եւ օտարասւր եւ դարմանիչ աղլւտուսց, եւ կատարեալ ի հա-ւատս աստուածպաշտութեան: Եւ շինեաց նա տուն աղօթից ի գաւառն Արա-գածոյ ոտին ի յաւանն Արուն՝ տաճար փառաց անուան Տեառն՝ գեղեցիկ վա-յելութեամբ զարդարեալ ի լիշատակ անուան իրոյ»³:

¹ Պատմութիւն Սեբեոսի, Երևան, 1979, էջ 173—174:

² Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 195:

³ Ղևոնդ, Արշաւանք արաբաց ի Հայս, Փարիզ, 1857, էջ 34—35: (Ղևոնդ, Պատ-մություն, Երևան, 1982, էջ 26):

Ղևոնդի պատմության մեջ երկրորդ անգամ Արուճը հիշատակվում է 774 թ. Մուշեղ Մամիկոնյանի ապստամբության կապակցությամբ: Արարա-կան 4000 հոգոց բաղկացած զորախումբը դուրս գալով Դվինից արշավում է հազարվան, ապստամբ հայերին պատժելու համար: Այստեղ տեղի ունեցած ճակատամարտում փոքրաթիվ հայ զորականները փայլուն հաղթանակ են տանում և խուճապահար թշնամուն հետապնդում մինչև Արուճ: «... զմնացեալսն ի փախուստ դարձուցեալ հետամուտ լինեին մինչև յաւանն Արուճ...»¹: Հ. Մանանդյանը «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» գրքում Ղևոնդի պատմության այս նույն հատվածի մեջբերումից հետո գրում է. «Այս Արուճը անշուշտ ոչ թէ: Արագածոտն, այլ Կոզովիտ գավառի Արուճն է, որը գտնվում է Դվին հազարվան «արքունի պողոտայի» մոտ: Միանգամայն անհավանական կլինի ըստ իս ենթադրել, որ Մուշեղ Մամիկոնյանը հայածելով փախստականներին, կարող էր հասած լինել մինչև մյուս Արուճը...»²: Սակայն չի բացատրվում փախստական թշնամու (որն անկասկած հեծելագոր էր) մինչև Արագածոտնի Արուճ հասնելը: Մանավանդ որ Ղևոնդի մոտ հետապնդման տեսարանի նկարագրությունը ավելի երկար ու պատկերավոր է, քան բուն ճակատամարտինը. «... հետամուտ լինեին մինչև յաւանն Արուճ, եւ զբազումս ճոսքաղ առնեին, մինչև զնոյն ինքն զզորացուլիսն ՚հայեալս սատակեին: Եւ մեծա յաղթութեամբ դարձեալ ի հետոց նոցա՝ լնուին զբազում աւարսւս, յաւարէ թշնամեացն»³: Մյուս կողմից, դեռ պատմության սկզբներում պատմիչը հիշատակում է Գրիգոր Մամիկոնյանի աթոռանիստը «յաւանն Արուճ»: Փախստական արաբների հասած վայրը նույնպես կոչում է «յաւանն Արուճ», եթե խոսքն այլ բնակավայրի մասին լիներ, թվում է թե Ղևոնդը կնշեր այդ:

Գրիգոր Մամիկոնյանի իշխանության շրջանի կապակցությամբ Արուճը հիշատակող հաջորդ պատմիչը Հովհաննես Դրասխանակերտցին է: Վերջինս հայտնում է ոչ միայն Արուճի տաճարի կառուցման մասին, այլև եզակի և մեծարժեք տեղեկություններ է հաղորդում Գրիգոր Մամիկոնյանի շինարարական լայն գործունեության՝ պալատի կառուցման, Արուճի պարսպապատման, ինչպես նաև Եղվարդի մոտ ս. Ջորավար եկեղեցու շինարարության մասին: Ընդ որում, Դրասխանակերտցին հատկապես իշխանի արքունիքի տեղադրության, ձորակի ու արլբյուրի նկարագրության և այլ մանրամասների կապակցությամբ այնքան իրապատում նկարագրություն է անում, որ կասկածի տեղիք չի տալիս, թե նա անձամբ եղել է Արուճում⁴: Դրասխա-

¹ Կոյն տեղը, էջ 172:

² Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936, էջ 26:

³ Ղևոնդ, նույն տեղը:

⁴ Տեղին է հիշել, որ Դրասխանակերտցին մի տևական ժամանակ բնակվում էր Արուճի ոչ շատ հեռու գոնավոր հյուրականում: Այստեղ կաթողիկոսը կառուցել է մի ինքնատիպ եկեղեցի (ս. Հովհաննես), որի մասին նշում է նաև իր Պատմության մեջ:

նակերտցին արժեքավոր տեղեկություններ է հայտնում Գրիգոր Մամիկոնյանի արդարադատ կառավարման և այդ ժամանակաշրջանում կատարված մի շարք պատմական դեպքերի վերաբերյալ, որոնք կվկայակոչենք իրենց տեղում: Այժմ ծանոթանանք Գրիգոր իշխանի շինարարական գործերի, պատմիչի կողմից արված գեղեցկաճ նկարագրությանը. «Հայսու ժամանակաբարեպաշտ իշխանն Գրիգոր Մամիկոնեան աստուածային այցելութեամբ հիմնադրեալ գշքնաղագել եկեղեցին, որ ի աստակերտին Արուն՝ շինէ զնա ստիպով, երկնային իմն ճեմարան յարդարեալ ի վերայ երկրի: Եւ ի հարաւոյ կողմանէ դէճ զարքունիս իւր յեզր քարածայտ ձորակին, յորում բոլիւտ ակնանկիտ աղբիւր պղպշակեալ ընդ քարածերպս փմարդ քարանցն. որ զեզերս ունի իբրև զպսակ պատուարի: Եւ ապա հաստահեղոյս քարամբք և կրով պարսպեալ՝ կարգէ տուն բնակութեան իւրոյ: Ծիւն նաև նուիրանոց ուխտի կրօնաւորական դասուց, յորում և եկեղեցի պաշտաստպանոյն ի մնա յարդարեալ ըստ յարեւելից կուսէ դաստակերտին մեծի Երիվարդայ՝ տուն բնակութեան կուսակրօնից զնա հաստատէ ի փրկութիւն հոգւոյ իւրոյ»¹:

Դրասխանակերտցու մոտ Արունը երկրորդ անգամ հիշատակվում է X դարի սկզբներին ծավալված դեպքերի կապակցությամբ: Ատրպատականի ամիրա Յուսուֆը, փորձելով իրենից կախման մեջ օգել Սմբատ Ա Բագրատունի թագավորին, զորքով շարժվում է Հայաստան և հաստատվում Դվինում: Սմբատն իր հերթին բանակ է կուտակում Արունում. «իսկ արքայ (Սըմբատ Բագրատունին Կ. Մ.)... գումարտակ շինէր ի քաղաքագիղն Արուն, ի ծործորս Արագած լեռին»²: Հետագա շրջանի հայ պատմիչները Արունի հիշատակման հարցում որոշ խմբագրություններով կրկնում են Ղևոնդին և Դրասխանակերտցուն, սակայն նրանց հիշատակությունները նույնպես արժեքավոր են: Մասնավորապես Սամվել Անեցու և Կիրակոս Գանձակեցու մոտ է, ուր կոնկրետ նշվում է Արունի տաճարի կառուցման տարին և այլն:

Իր պատմության շարադրանքը մինչև 1004 թ. հասցրած Ստեփանոս Տարոնացի Աստղիկը երկու անգամ անդրադառնում է Արունին, գրելով որ Գրիգոր Մամիկոնյանը «շինեաց զկաթողիկէն, որ յԱրուն»³ մեկ այլ տեղ. «Գրիգոր իշխանն Հայոց խաղաղեցոյց աշխարհս Հայոց և շինեաց զեկեղեցին, որ յԱրուն...»⁴:

Սամվել Անեցու ժամանակագրության (XII դ.) մեզ հետաքրքրող հատվածում, ինչպես ասվեց, տրված է Արունի տաճարի կառուցման ճիշտ տարին: Նրա հայտնած այդ խիստ արժեքավոր տեղեկությունը, սակայն, ժա-

¹ Հովհաննես Դրասխանակերտցի. Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 90—91:

² Նույն տեղը, էջ 196:

³ Ստեփանոս Տարոնացի Աստղիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 99:

⁴ Նույն տեղը, էջ 122:

մանակագրական որոշ շեղման հետևանքով պարզաբանման կարիք ունի: Սամվել Անեցու «Հավաքմունք ի գրոց պատմագրաց» երկի 1893 թ. վաղարշապատյան հրատարակության մեջ կարդում ենք.

«Ոկթ (669) Տէր Անաստաս՝ ամս Զ:...

ՈՀԲ (672) Ծինուած կաթողիկէին յԱրուճ, յորում մկրտի նահատակն Քրիստոսի Դափթ՝ որ յաշխարհէն Պարսից եկն՝ Սուրհան անուն, և վասն վկայութեան Քրիստոսի կախեցաւ զփայտէ ի Դւրին:

ՈՀԳ (673) Հաչոց Գրիգոր՝ ամս Ժ»¹:

Ինչպես տեսնում ենք նախ խախտված է ժամանակագրական ընդհանուր կարգը (Անաստասը աթոռակալել է 662—667 թթ., Գրիգոր Սամիկունյանը 661—685 թթ.) և երկրորդ ստացվում է այնպես, որ Սյունի տաճարը կառուցվել էր, Սուրհանը՝ մկրտվել, վերջապես Անաստասն էլ վաղուց մահացել էր, նոր միայն իշխան դարձավ հայոց Գրիգորը «ամս Ժ»: Այս թյուրիմացությունը ուղղելու է գալիս Սամվել Անեցու ժամանակագրությունը պարունակող, Մատենադարանի հնագույն ձեռագիրը (№ 5619), գրված է 1176 թ.: Այստեղ աղյուսակներով ներկայացված համապատասխան բաժնում, «Տէր Անաստաս՝ ամս Զ» հատվածի տակ, քառակուսիների մեջ, հերթականությամբ գրված ա-գ թվաշարքի «ե» թվականի դիւսաց կարդում ենք. «Ե (5) Ծինուած կաթողիկէին յԱրուճ...» և այլն: Այսինքն՝ խոսքը վերաբերում է Անաստասի աթոռակալության հինգերորդ տարվան: Մատենագրական բազմաթիվ աղբյուրների վկայությամբ հայոց Անաստաս Ակունքի կաթողիկոսը աթոռակալել է վեց տարի (662—667): Հետևաբար նրա հինգերորդ տարին 666 թվականն է:

Անեցուց մի քանի տասնամյակներ հետո (XIII դ.) Արուճի մասին իր պատմության մեջ հիշատակող Կիրակոս Գանձակեցին ակներևորեն օգտված լինելով Սամվելի ժամանակագրությանից, հենց այդպես էլ հաւակցել և ներկայացրել է նրա հաշուած իրողությունը: Գանձակեցին գրում է. «**Ի հինգերորդ ամի Անաստասայ եղև շինուած կաթողիկէին՝ որ յաւանն Արուճ**, զոր շինեց Գրիգոր պատրիկն, յորում մկրտի նահատակն Քրիստոսի Դափթ, ազգաւ պարսիկ, որ յառաջն Սուրհան կոչէր և վասն վկայութեանն Գրիստոսի կախեցաւ զփայտէ ի Դուին»²: Ինչպես տեսնում ենք Սամվել Անեցու և Կիրակոս Գանձակեցու հայտնած տվյալները դեպքերի նույն հերթականությունը և մինևնույն բովանդակությունն ունեն: Նրանք ցույց են տալիս, որ Արուճի տաճարը կառուցվել է Անաստաս կաթողիկոսի աթոռակալության հինգերորդ տարում, 666 թ.:

¹ Սամվել Անեցի, Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 84: Սուրհան-Դափթի (Դավթ Դվինցի) վերաբերյալ արաբին և հանգամանակից տեղեկությունը հաղորդում է Հովհ. Դրասխանակերտցին:

² Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 62—63:

Վերը նշված իրադարձությունների կապակցությամբ Արուճը հիշատակում են նաև Վարդան Արևելցին, Մխիթար Այրիվանեցին և Մխիթար Անեցին: Վարդանը գրում է. «Յաւորս սորա (Անաստաս կաթողիկոսի, Կ. Մ.) շինեաց Գրիգոր Մամիկոնեան զկաթողիկէն Արճոյ և զվանքն Եղիվարդայ...»¹: Ալվելի հակիրճ է Այրիվանեցու հիշատակությունը. «Գրիգոր իշխանն շինէ զԱրուճայ եկեղեցին...»²:

Մխիթար Անեցին իր երկում երկու անգամ նշում է Արուճի տաճարի շինարարության փաստը: Ընդ որում, եթէ երկրորդ հիշատակությունը վերաբերում է Գրիգոր իշխանի ապրած ժամանակի դեպքերի շարադրմանը, ապա առաջին հիշատակությունն արված է աշխատության սկզբնամասում՝ հայոց մարզպանների, հայոց իշխանների, ապա և թագավորների թվարկման ժամանակ: Այսպես. «... Մեծէժ Գնունի՝ ամս Լ: Պարսիկք՝ ամս ԼԶ: Դաւիթ Սահառունի՝ ամս Լ: Թէոդորոս Ռշտունի՝ ամս ԻԵ: Ի սորա Ժ ամից և Ի ՂԵ թոյին երևեցաւ Մահմետ սոտ մարգարէն: Համազասպ (ամս) Է: **Գրիգոր (ամս) Ժ: Սա շինէ զկաթողիկէն յԱրուճ:** Ներսէս՝ ամս Գ: Աշոտ՝ Գ: Ներսէս Կամսարական՝ Գ: Սմբատ Բագրատունի՝ Ի...»³: Մխիթար Անեցին փաստորեն Վարդան Մամիկոնյանից սկսելով մարզպանների, ապա Հայոց իշխանների թվարկումը մինչև Բագրատունի թագավորներին հասնելը, նշում է միայն մեկ շինարարական իրագործում և դա Արուճի տաճարի կառուցումն է: Պատմիչի երկրորդ հիշատակությունն ավելի ընդարձակ է: Այն կազմված է Ղևոնդի, Հովհաննէս Դրասխանակերտցու և Սամվել Անեցու հայտնած տվյալների բամադրությունից, իսկ Ղևոնդի կողմից Գրիգոր Մամիկոնյանին տրված բնութագրումը Մխիթար Անեցին բերում է նույնությամբ: «(Մուսվիհան Կ. Մ.) զԳրիգոր կացոյց իշխան հայոց, զշինողն սուրբ կաթողիկէին Արճոյ: Եւ դարդարեալ յաւորս նորա խաղաղեցան Հայք ի հարկս տալոյ և ի հինգէ...»⁴:

Եզրափակելով Արուճի վերաբերյալ եղած մատենագրական տեղեկություններին նպիրված մեր խոսքը, նկատենք, որ Արուճը իրենց երկերում հիշատակում են V—XIII դարերի թվով տասնմեկ հայ պատմիչներ, որոնցից ութը (Ատողկև ու Մխիթար Անեցին երկուական անգամ) նշում են Գրիգոր Մամիկոնյանի կողմից Արուճի տաճարի կառուցման փաստը: Արուճ բնակավայրը հիշվում է կամ պարզապես Արուճ ձևով, կամ (սկսած VII դ.) Արուճ ավան, Կաղանկատվացու մոտ՝ գյուղաքաղաք, Դրասխանակերտցու մոտ՝ քաղաքազյուղ:

Պատմիչների նման ուշադրությունը Արուճի VII դարում ունեցած վի-

¹ Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. Վեներիկ, 1862, էջ 70:

² Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 69:

³ Մխիթար Անեցի, Մատեան Աշխարհավիպ հանդիսարանաց, Երևան, 1983, էջ 67:

⁴ Նույն տեղը, էջ 101:

ճակի վերաբերյալ ունի իր պատճառները: Նախ Գրիգոր Մամիկոնյանը VII դարի ամենաճանաչվոր հայոց իշխաններից մեկն էր՝ հայտնի խաղաղ կառավարմամբ, շինարարական գործունեությամբ: Երկրորդ. Արուճը ոչ միայն VII, այլև հետագա դարերում (մինչև XIII—XIV դդ.), այսինքն, այդ ժամանակաշրջանի պատմիչների կենդանության օրոք, նշանակալից տնտեսական դեր ունեցող բարգավաճ ավան էր: Եվ երրորդ. Արուճի տաճարի օծման ժամանակ՝ 666 թ., այստեղ տեղի էր ունեցել հայկական քրիստոնեական սըրբերի շարքը դասված Դավիթ Դվինցու մկրտությունը կաթողիկոսի ձեռքով, որը ևս կարևոր հանգամանք էր մեր պատմիչների համար:

Վերը մենք ներկայացրինք միայն մատենագրական այն հիմնական աղբյուրներն ու տվյալները, որոնք վերաբերում էին Արուճին: Սակայն հայ պատմիչների երկերում, կան Արուճի պատմության այս կամ այն կերպ առընչվող այլ փաստեր, որոնց մասին խոսք կլինի ստորև:

Արուճի անվան հետ կապված է մի ժողովրդական ավանդություն, որը պահպանվել է Ղ. Ալիշանի մոտ: Ավանդությունը բավական հին է, քաղված «Ի քարոզգիրս ստորին դարոց ի յիշատակի սրբոյ Լուսավորչի»¹:

ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆ ԳՐԻԳՈՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ (661—685)

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԸ

Արուճի պատմության ամենավաղ շրջանը կապվում է հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի անվան հետ: Վերջինս արաբական խալիֆայթից տակ ձևական կախման մեջ գտնվելով, շուրջ 24 տարի հանդիսանում էր երկրի փաստական տերը, իսկ իր կառավարման վերջին տարիներին դադարել էր արաբների հարկ վճարել, դառնալով լրիվ ինքնիշխան:

Հայաստանում այդ պատմաշրջանում, ինչպես և հետագայում՝ հագրատունիների գահակալման սկզբնական փուլում, երկրի վարչական կենտրոնը հաճախ էր տեղից տեղ փոխադրվում: Դա պայմանավորված էր ժամանակի հողատիրության բնույթով, քանի որ յուրաքանչյուր հայոց իշխան միաժամանակ լինելով խոշոր հողատեր, ուներ իր սեփական տիրույթների վարչական կենտրոնը: Վերջինս նրա իշխանության տարիներին դառնում էր իշխանանիստ և կատարում էր ողջ երկրի վարչական կենտրոնի դեր²: Գրի-

¹ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 145:

² Բագրատունիների շրջանում այս երևույթը վերջ գտավ 961 թվականից հետո, երբ Աշոտ Ողորմած թագավորը մշտական մայրաքաղաք դարձրեց Անին: Տե՛ս Ռ. Մաթևոսյան, Անին արքունի-աթոռանիստ և մայրաքաղաք, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 5, էջ 89—94:

չոր Մամիկոնյանի օրոք այդ վարչական կենտրոնը Արուճն էր, թեև երկրի պաշտոնական կենտրոնը էր ճանաչվում Դվին քաղաքը¹:

Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի կառավարման ժամանակահատվածը միանգամայն տարբերվում էր VII դարի նրա թե՛ նախորդ, թե՛ հաջորդ հայոց իշխանների տիրապետության ժամանակներից: Դա խառնադրության, երկրի շենացման ու բարգավաճման մի շրջան էր, որը պայմանավորված էր բարենպաստ արտաքին քաղաքական պայմաններով և Գրիգոր իշխանի հեռատես ու արդարադատ կառավարմամբ: Ինչպես նշում է Ա. Տեր-Ղևոնդյանը. «Գրիգոր Մամիկոնյանի իշխանության շրջանը VII դարի Հալաստանի տնտեսության և մշակույթի զարգացման ամենափայլուն շրջանն է»²:

Նկատի ունենալով այն, որ Արուճի պատմության ամենանշանակալից յնտվածք թերի կլինի առանց Գրիգոր Մամիկոնյանի կառավարման ժամանակաշրջանին ըստ էության ծանոթանալու, հարկ համարեցինք ստորև անդրադառնալ այդ հաշիւնաշումչ իշխանի կյանքին ու գործունեությանը, որն սկզբից ևեթ Ալիքովմ էր հայրենի երկրի ու ժողովրդի բարօրությանը և ընդհատվեց պատերազմի դաշտում՝ հերոսական նահատակությամբ, հանուն այդ նույն երկրի ու ժողովրդի ազատության:

Նրա Դավիթ Մամիկոնյանի որդի Գրիգորը հայոց իշխանի տիտղոսն ստալով Թեոդորոս Ռշտունուց (639—654) և իր եղբայր Համազասպ Մամիկոնյանից (654—661) հետո, երբ գտնվում էր Դամասկոսում, արաբական պատերազմության մեջ: Մինչ այդ, արաբա-բյուզանդական հակամարտությունների ու բախումների խառնակ մթնոլորտում հայոց տերությունը մեկընդմեջ փոխում էր իր քաղաքական կողմնորոշումը դեպի հույները կամ արաբները³: Բյուզանդական կողմնորոշում ընտրած Համազասպ Մամիկոնյանի մահից հետո հայ նախարարները և Ներսես Գ Տաչեցի (641—661) կաթողիկոսը դիմում են արաբական նորահաստատ խալիֆ Մուավիային (661—680) խնդրելով հայոց իշխան նշանակել հանգուցյալ իշխանի եղբորը՝ Գրիգոր Մամիկոնյանին: Մուավիան, որը հեռատես քաղաքագետ էր և հակաբյուզանդական ընդարձակ ծրագրեր էր փայլփայլում, հեծարությամբ ընդառաջեց հայերի խնդրանքին և պատանդության մեջ գտնվող Գրիգորին տալով հայոց

¹ Դվինը 640 թ. հոկտեմբերի 6-ին գրավվեց արաբների կողմից և զգալի ավերածությունների ենթարկվեց: Հաղաքից շուրջ 35 հազար բնակիչ գերության տարվեց: Դրանից հետո Դվինը զգալիորեն կորցրեց իր դիրքը երկրի քաղաքական կյանքում, մանավանդ, որ շուտով պլանեղից Ջլաբթնոց տեղափոխվեց նաև հայոց կաթողիկոսարանը:

² Ա. Տեր-Ղևոնդյան, Հայոց իշխան տիտղոսի ծագումը և հայոց տերությունը VII դարում, «Բնաբեր, Երևանի համալսարանի» 1969, № 1, էջ 244:

³ А. Тер-Гевондян. Армения и арабский халифат, Ереван, 1979, с. 36—52: Ս. Մուխր-Բախչյան, Հայաստանը VII—IX դարերում, Երևան, 1988, էջ 44—87:

իշխանի պատիվներ, պատշաճ շուքով նրան առաքեց Հայաստան: Ղևոնդ պատմիչն այդ մասին գրում է. «Մուսիս կոչէ զԳրիգոր եւ զԱմբատ (Բագրատունի, Կ. Մ.), որ էին պատանոք ի դրանն արքունի, եւ տայր Գրիգորի զպատիւ իշխանութեանս Հայոց եւ առաքէ զնոսա բազում մեծարանօք յաշխարհս Հայոց»¹:

Ակսկում է Գրիգոր Մամիկոնյանի երկարատև իշխանությունը, երբ նա, Լեոյի բնորոշմամբ, «մի կորովով, էր իր տոհմին էր հատուկ, կառավարում էր երկիրը»²: Ժամանակի և հետագա դարերի հայ պատմիչները դրավատանքով են հիշատակում Գրիգոր իշխանին³: Ուշագրավ է հատկապես Ղևոնդի բնութագրական խոսքը. որ իշխանին որակում է «եղբայրսւսէր, եւ օտարսւսէր եւ դարմանիչ աղքատաց»⁴: Հովհաննես Դրասխանակերտցին Գրիգոր Մամիկոնյանին անվանում է մեծ իշխան. «իշխանն մեծ՝ Գրիգոր»⁵, իսկ Մովսես Կաղանկատվացին՝ «Մամիկոնեան տոհմէն, քաջն Գրիգոր»⁶:

Արտաքին քաղաքականության բնագավառում Գրիգոր Մամիկոնյանի իշխանության հիմնական շրջանը (մինչև 680 թ., Մուսիսայի մահը) բնութագրվում է կաշուն քաղաքական կացությամբ: Տակավին Գրիգորին Հայաստան ուղարկելուց առաջ, խալիֆ Մուավիան նրա հետ վերահաստատել էր դեռևս Թեոդորոս Ռշտունու հետ 652 թ. իր իսկ կնքած հայ-արաբական պայմանագիրը, որը սուլայ քաղաքական իրավիճակում խիստ բարենպաստ էր հայերի համար⁷: Գրիգոր Մամիկոնյանի ժամանակ հին պայմանագրին ավելացվում է միայն մեկ կետ՝ տարեկան 500 դահեկան հարկի մուծում հայերի կողմից⁸: Սակայն պայմանագրում հայերի համար ամենաէականն այն էր, որ ոչ մի արաբական զորամաս՝ անգամ զինվոր, ոտք չէր դնելու Հայաստան (եթե հայերն իրենք այդ չցանկանային) և հայկական 15 հազարանոց հեծելազորը չէր կանչվելու Ասորիք՝ ուստի չէր մասնակցելու արաբաբյու-

¹ Ղևոնդ, էջ 33—34:

² Լեո, Երկերի ժողովածու, հ. Բ, Երևան, 1967, էջ 819:

³ Մատենագրական ամենավաղ հիշատակությունը Գրիգորի վերաբերյալ պահպանվել է Սեբեոսի պատմության մեջ, ուր հեղինակը դեպքերի շարադրանքը հասցրել է մինչև Համազասպ Մամիկոնյանի իշխանության շրջանը: Պատմագիրը չի տալիս Գրիգորի անունը, սակայն ճշում է, որ Համազասպի մի եղբայրը պատանոք էր արաբների մոտ. «եւ էլ Համազասպայ եղբայր մի ի պատանոքի», որը հենց ապագա իշխան Գրիգորն էր: Տե՛ս Պատմություն Սեբեոսի, էջ 175:

⁴ Ղևոնդ, էջ 34—35:

⁵ Դրասխանակերտցի, էջ 91—92:

⁶ Կաղանկատուացի, էջ 195:

⁷ А. Тер-Гевондян, Грц. яз.ч. էջ 35—36, Ս. Մելիք-Բախչյան, Грц. яз.ч. էջ 87—70, և այլն:

⁸ Ս. Մելիք-Բախչյանը մի շարք հաշվարկներով ցույց է տալիս, որ հայերի մուծարարեկան հարկը (500 դահեկան) շատ փոքր գումար էր և այսօրվա մեր դրամով հավասար է 1320 ոտրլու: Տե՛ս Գր. աշխ. էջ 87—88:

գանդական պատերազմներին ու սահմանամերձ քնդհարումներին¹։ Փաստորեն երկրի ներքին կյանքը ամբողջապես գտնվելու էր հայոց իշխանի իրավասության տակ, իսկ արտաքին հարաբերություններում Հայաստանը, որոշ իմաստով չեզոք դիրք էր գրավելու։ Ինքը՝ խալիֆ Մուավիան, դառնալով նոր՝ Օմայան դինաստիայի հիմնադիրը, խալիֆաթի մայրաքաղաքը տեղափոխեց Դամասկոս և անընկճելի համատությանը պատերազմ ձեռնարկեց քնդդեմ Բյուզանդիայի։ Երկու աշխարհակալ պետությունների պայքարը շարունակվեց բավական երկար՝ փոփոխական հաջողություններով։ Եվ աչդ ամբողջ ժամանակ, երբ անգամ Կոստանդնուպոլիսը ստիպված էր իր պարիսպների ամրությանն ապավինել, Հայաստանը խաղաղություն էր վայելում։ Դիպուկ է պատմիչի խոսքը՝ որը Գրիգոր իշխանի կառավարման մասին գրում է. «եւ եղև բազում խաղաղութիւն յաւուրս նորա իշխանութեանն»²։

Գրիգոր Մամիկոնյանի կառավարման տարիներին միայն մեկ անգամ արաբական մի զորամաս ավարտության նպատակով ներխուժեց Հայաստան, բայց արձանի հակահարված ստանալով, դուրս քշվեց։ Հայոց Իսրայել Ոթմսեցի (667—677) կաթողիկոսի օրոք տեղի ունեցած աչդ դեպքը հիշատակում է Հովհաննես Իրասխանակերտցին. «գրաւարայ ոմն զօրագրոխ զօրուն տանկաց, որ ի Հայք՝ վանեալ վատնէ կոտորմամբ սաստիս Ներսէն իշխան Վրաց՝ փայտստեայ զնա արարեալ»³։ Այս կապակցությամբ Բ. Առաքելյանը գրում է. «հետաքրքրական է, որ Բաղաբային Հայաստանից դուրս քշողը լինում է վրաց իշխան Ներսեհը»⁴։ Հարց է ծագում, թե ինչո՞ւ Գրիգոր իշխանը, իր տրամադրության տակ ունենալով 15000 հենելագոր և այլ ուժեր, սնձամբ չչարդեց Բաղաբայի ավազակային հորդան, թողնելով, որ գործին միջամտի վրաց իշխանը։ Կարծում ենք, որ դա ոչ թե կարողության հարց էր, այլ Գրիգոր Մամիկոնյանի լաղաքական նրբանկատության արդյունք։ Խաղաղության պահպանման շահերից ելնելով, հաղոց իշխանն ինքը չի կոտորում արաբներին, այլ միայն «վանեալ» նեղացնում է; որովհետև Հայաստանն էր Ասորիքի անմիջական հարևանը, և ա.դ. թեկուզև արդարացի արարքը, կարող էր անցանկաչի արձագանք գտնել արաբական շրջաններում։ Ուստի և Գրիգորը հեռատեսորեն (գուցե և ներքին պայմանավորվածությամբ) թողնում է, որ արաբական զորամասի չարդն ու վերջնական վտարումն իրագործեն վրացիները, որոնք խալիֆաթի բուն սահմանից անջատված էին Հայաստանով և հեռու էին անմիջական բախման վտանգից։ Չպետք է մոռանալ

¹ Ա. Тер-Гевондян, նշվ. աշխ. էջ 34—35։

² Ղևնդ, էջ 34։

³ Իրասխանակերտցի, էջ 93, տե՛ս նաև Վարդան Վարդապետ, էջ 71։

⁴ Բ. Առաքելյան, Հայաստանը արաբական տիրապետության ստացին շրջանում և արեթի պայքարն անկախության համար, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման ԸՕ-րդ տարեդարձին նվիրված «Իրանական ժողովածու», Երևան, 1941, էջ 90։

նաև հայ-արաբական պայմանագրի գոյությունը, որով Հայաստանն ու խալիֆայթը գրեթե դաշնակցային պարտավորություններ ունեին իրար նկատմամբ:

Սակայն սյդ սունեոլ հանդերձ, անկախ արտաքին իրավիճակից և հայ-արաբական պայմանագրից, հայոց տերությունը քաղաքական գործունեության իր սեփական ծրագիրն ուներ: Գրիգոր Մամիկոնյանի իշխանության շրջանում բարեկամական հարաբերություններն էին: Երբ փոյ էր սկսվել Հայոց և Աղվանից իշխանությունների միջև, որոնք ընդհանուր թշնամիներ ունեին հանձինս արաբների ու բյուզանդացիների, ինչպես նաև հյուսիսային հոնական ու խազարական ցեղերի: Բայց եթե բարբարոս քոչվորների հասցրած վճար միայն ֆիզիկական էր, ապա արաբական և բյուզանդական վտանգը պատրաստ էր և՛ ֆիզիկական, և՛ հոգևոր հարված հասցնել: Բյուզանդական քաղաքականության համատեղ նպատակն էր, ինչպես մի ժամանակ վրացական եկեղեցին՝ աղվանական եկեղեցին, նույնպես անջատել հայկականից, իսկ պատե՛ն առիթի ղեկքում այս վերջինը ևս քաղկեդոնական դարձնել: Արաբական քաղաքականության նպատակն էր մահմեդականության տարածումը:

Այդ շրջանում Աղվանից աշխարհի իշխանն էր Ջվանշիրը, մի օժտված քաղաքական գործիչ, որի կառավարման ժամանակ զարթոնք էր ապրում Աղվանքը: Ջվանշիրի երկրի վերելքը սակայն կտրված չէր իր բուն արմատից՝ հայ իրականությունից և հայկական միջավայրից: Այս առնչությամբ Աս. Մնացականյանը իրավացիորեն նկատում է, որ. «Ջվանշիրը մերվել էր հայերին և նրա ձգրությունը՝ վերջիններիս զարթոնքն ու ձգրությունն էր»¹: Պատահական չէ, որ Աղվանքի իշխանը երկու անգամ խալիֆի մոտ Դամասկոս գնալուց հետո, վերադարձին այցելում էր Գրիգոր Մամիկոնյանին համապատասխան խորհրդակցությունների և համատեղ գործողությունների նախապատրաստելու համար²: Իսկ Աղվանից երկրում հայկականության ու մաշտոցյան ավանդների մի լիակատար վերածնունդ էր սկսվել:

Գրիգոր Մամիկոնյանի և Աղվանքի իշխանների՝ Ջվանշիրի, ապա նրան հաջորդած Վարազ Տրդատի միացյալ արտաքին քաղաքականության կարեվորագույն դրվագներից մեկը կապվում է հյուսիսային հոնական ու խազարական ցեղերին քրիստոնյա դարձնելու համարձակ ծրագրի ձեռնարկման հետ: Կարծում ենք, որ դա արվում էր թե՛ ինքնապաշտպանության, և թե՛ կոպկասյան հզոր դաշինք ստեղծելու մտահոգությամբ, քանի որ արաբների նկատմամբ գրաված դիրքը չէր գոհացնում հայերին, որոնք ջանում էին լր-

¹ Աս. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ, Երևան, 1966, էջ 146:

² Բ. Ուլուբաբյան, Գրվագներ Հայոց Արևելից կողմանը պատմության, Երևան, 1981, էջ 240—242:

իլ թոթափել իրենց ունեցած պարտավորությունները խալիֆաթի նկատմամբ: Այս վերջնական նպատակին հասնելու ձգտումն էր պատճառը, որ Մուավիայի մահից հետո հայկական, վրացական և աղվանից իշխանությունները միաժամանակ դադարեցին ճանաչել արաբական գերիշխանությունը, իրա փոխարեն չորոնելով մեկ ուրիշ հովանավորություն, ասե՛նք հզորացած Զյուզանդիայի կողմից, այլ իրենց հաշտարարեցին ազատ և անկախ: Այս արցի հանգամանակից քննությամբ զբաղվել է Բ. Առաքելյանը: Նա գրում է. «Գրիգոր Մամիկոնյանի ժամանակ... հալերը փորձ են անում վերականգնելու իրենց անկախությունը: ... դա լիակատար անկախության մի փորձ էր արաբական գերիշխանությունից»¹:

Մուավիային հաջորդել էր որդին՝ խալիֆ Եգիզը (680—683), որի օրոք արաբական հսկա տերության մեջ ծայր էին առել ներքին խռովություններ: Եգիզը խռովելով հարմար պահից Հայաստանն ու հարևան վրաց և աղվանից իշխանությունները, պատմիչ Ղևոնդի արտահայտությամբ «սպասամբեցին»՝ չարախեղեցին հարկատվությունը, դրանով իսկ փաստելով իրենց անկախությունը խալիֆաթից: Այդ իրադարձության վերաբերյալ հիշատակություններ են պահպանվել անանուն ժամանակագրություններից մեկում, Ղևոնդի պատմության մեջ և արաբ պատմիչ Բալիձորու մոտ²:

Պատմագրական փաստերի համադրմամբ Բ. Առաքելյանը ցույց է տալիս, որ Գրիգոր Մամիկոնյանի կառավարման վերջին շրջանում Հայաստանի ներքին թե՛ր անկախությունը թե՛ն խռովվեց 685 թ. խազարական ներխուժմամբ, սակայն շարունակվեց մինչև 689 թ.³: Այդ, թեկուզև կարճատև, բայց յատարյալ անկախությունը, որ վայելեց Հայոց աշխարհը VII դարի 80-ական թվականներին, նշանակալից մի էջ է մեր ժողովրդի պատմության մեջ:

Ինչպես նշեցինք, Գրիգոր Մամիկոնյանն ու Ջվանշիրը դիվանագիտական ջանքեր էին գործադրում հոնական ու խազարական ցեղերին մեղմելու ուղղությամբ: Աղվանքի իշխանը դեռ 60-ական թվականներին ազգակցական լապեր էր հաստատել հոների հետ, միաժամանակ բարելավելով իր երկրի լինակը: Սակայն Ջվանշիրի դավադրաբար սպանությունից հետո դրությունը խորով վատանում է: Աղվանքի նոր իշխան Վարազ Տրդատը հյուսիսային խոնգի առաջն առնելու համար որոշում է դիմել հայոց իշխանին և կաթողիկոսին: Այդ նպատակով նա Մեծկողմանքի եպիսկոպոս Իսրայելիին ուղարկում է Վաղարշապատ և Արուն, խորհրդակցության և համատեղ գործողություններ նախապատրաստելու համար: Միևնույն ժամանակ Աղվանքում ագլային և քրիստոնեական ոգին բարձրացնելու մտահոգությամբ Իսրայելը Վա-

¹ Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 89:

² Նույն տեղը, էջ 91—92:

³ Նույն տեղը, էջ 89—103, տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975, թ 355:

րագ Տրդատի հանձնարարությանը հայոց տերերից խնդրում է Գրիգոր Լուսավորչի մատուցներից մի կտոր: Կաղանկատվացու մոտ շեշտը դրված է այս երկրորդ պարագայի վրա, սակայն Իսրայելի ուղևորության բուն նպատակը պարզ է դառնում պատմիչի որոշ ակնարկներից: Նա գրում է. «... իշխան Վարագ Տրդատը միտք է հղանում **իհշ-ոյ կարևոր գործով ու բարեկամություն հաստատելու նպատակով** (ընդգծումը մերն է Կ. Մ.) Իսրայել եպիսկոպոսին առաքել հայոց մեծ կաթողիկոսի ու Արարատյան գավառի բարեպաշտ իշխանի մոտ: ... Այդ շամանակներում հայոց իշխանը՝ մեծ զորավարը, Դարանաղի գավառի Թորթանից... Վաղարշապատ բաղաք էր բերել... սուրբ Գրիգորի թանկագին մատուցները... ու դրել Նորաշեն եկեղեցում, որը մեծ Ներսեսն էր շինել սուրբ Գրիգորի անունով (Չվարթնոց, Կ. Մ.)»¹: Իսրայել եպիսկոպոսը կաթողիկոսից և Գրիգոր իշխանից խեղրում է այդ մատուցներից մի փոքր մաս, սկզբում մերժվում է, սակայն դիմում է Գրիգորի կնոջը՝ Լեդիանին, որը ծագումով Աղվանքից էր, և վերջինս միջամտությամբ ստանում է Լուսավորչի ծնոտից մի մաս: Պարտավ վերդառնալուց հետո Իսրայելը իշխան Վարագ Տրդատի և նախարարների խորհրդակցությունում հանձն է առնում «շուտափուլ ճանապարհ ընկնել» հունքի նրկիքը:

Ուշագրավ է, որ ադ դեպքերը տեղի էին ունենում Մուսվիսյի մահից հետո, երբ Հալաստանն արդեն հայտարարել էր իր անկախությունը խալիֆայթից և փաստորեն Իսրայելին՝ հունքի մոտ առաքելու գործն իրագործվում էր որպես հայոց և աղվանից ինքնուրույն իշխանությունների արտաքին բաղաբանականության մի օղակ: Ըստ Կաղանկատվացու, Իսրայելի միսիան ավարտվում է լիակատար հաջողությամբ. հունքը հրաժարվելով իրենց հեթանոսական կրոնից, քրիստոնեություն են ընդունում, իսկ Ալփ-Իլիթվեր իշխանը և մյուս մեծամեծերը, որոշում են, որ Իսրայելը մնա իրենց մոտ ու հարապետական աթոռ հիմնի: Այդ նպատակով նրանք նախկինով դիմում են հայոց կաթողիկոսին և «Հալաստանի զորապետ» մեծագույն իշխան Գրիգորին»: Նամակագրությանից և Աղվանքում կապացած բանակցությունից հետո որոշվում է, որ Իսրայելը հաճախ աչցելի հոնաց երկիր, հոգա նորահաստատ եկեղեցու կարիքները, սակայն չթողնի Մեծկողմանքի եպիսկոպոսի իր պաշտոնը²:

Սակայն ինչպես ցույց են տալիս պատմական հետազոտությունները Իսրայելի միսիոներական գործունեությունը անհրաժեշտ արդյունքի ունենում: Քոչվոր ցեղերը պարբերաբար շարունակվում են իրենց կորուստաբեր ասպատակությունները: Սմալացնելով Աղվանքի շրջանները նրանք ներխուժում են Հալաստան: Խաղաղասեր և շինարար հայոց իշխան Գրիգոր

¹ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969 էջ 152:

² Նույն տեղը, էջ 187—208:

Մամիկոնյանը երկիրը կողոպուտից և ավերածությունից փրկելու համար ըստ հավան է լինում դիմել գեներալ: Խազարական ցեղերի մի խոշոր ներխուժում եղի է ունենում 684—685 թվականներին¹: Թշնամուն դիմագրավելու են որս գալիս հայոց, վրաց և աղվանից զորաբանակները: Բազմամբոխ բարսրոսների դեմ կայացած արյունալի ճակատամարտերից մեկում շատերի նտ հերոսաբար զոհվում է նաև հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը: Նա ղ մեծահամբավ տոհմի քաջամարտիկ նախնիներից շատերի պես պատեազմի դաշտում անանց փառքով է պսակում իր անունը: Ղևոնդ պատմիչը ավով գրում է. «... տիրեցին ի վերայ աշխարհիս Հայոց, հիսիսասյին ազգն, ր սահն Խազիրք, ե սպանին ի պատերազմին զիշխանն Գրիգոր ե զբաունս ի նախարարացն ե զիշխանն Վրաց եւ Աղուանից»²: Գրիգոր Մարիկոնյանի նահատակությունը, ըստ Անանուն ժամանակագրության, տեղի ունեցել 685 թ. սահմի ամսի 10-ին, որը մեր տոմարով համապատասխանում է օգոստոսի 16-ին³:

Խազարների արշավանքը, սակայն, նվաճողական բնույթ չուներ: Վերջավում ավար և գերիներ, նրանք շուտով հեռացան Հայաստանից:

Գրիգորից հետո հայոց իշխան դարձավ Աշոտ Բագրատունին (685—39), իշխանանիստը Արմինից տեղափոխելով իր հայրենի Դարույնք⁴:

Սակայն այսբանով չի կարելի սահմանափակել խոսքը Գրիգոր Մամիկոնյանի գործունեության մասին, քանի որ նրա ներքին քաղաքականությունը ևս VII դարի հայոց պատմության մեջ մի ուշագրավ շրջան է կազմում: Գրիգոր իշխանը իր կառավարման քառորդ դարն անց է կացրել քաղաքաան, տնտեսական ու մշակութային եռանդուն գործունեությամբ, կարգ ու անոն է ահմամնել երկրի ներքին գործերում, ծավալել է շինարարական ազմաթիվ աշխատանքներ:

Հովհաննես Դրասխանակերտցին Գրիգորի իշխանության մասին հետևյալն է գրում. «Սա էր այր բարեպաշտ եւ երկիրաձ յԱստուծոյ, առաջնորդ տեալ յընապատիկ կարգաց եւ ուղղութեանց եւ բարձմանս լրութեան. ընդգծումը մերն է, Կ. Մ.) որ գրեթէ յաշխարհի, իբր յանապատի գոլով՝ ետևէր զկնի ամենայն արդար վաստակոց»⁵: Պատմիչի հալորդածից երեում է, որ իշխանը «արդար վաստակի» հովանավորն էր և դրա համար էր

¹ А. Тер-Гевондян, Гзվ. աշխ., էջ 51:

² Ղևոնդ, էջ 35:

³ Բ. Առաքելյան, Гзվ. աշխ., էջ 93:

⁴ Հիշարժան է, որ Աշոտ Բագրատունին, իր նախորդի օրինակով, իշխանանիստ արույնքում եկեղեցի է կառուցում՝ որմնանկարազարդել տալիս, այնտեղ դնելով նաև ընմուտքից բերված Քրիստոսի մարդկության գեղանկար պատկերը: Տե՛ս Ղևոնդ, ի 37:

⁵ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 90:

դիմում համապատասխան «կարգաց եւ ուղղութեանց»: Ինչպես դեռ Լէոն է նկատել, ցավոք. «մենք չգիտենք, թե այդ ինչ կարգեր եւ ուղղություններ են, որ Մամիկոնյան իշխանը մտցրել է հայ կյանքի մեջ»¹: Սակայն երկրի կառույցն վիճակը, նախարարների հանդարտությունը, տնտեսության ու մշակույթի վերելքի մասին պահպանված հիշատակությունները ցույց են տալիս, որ Գրիգոր իշխանի սահմանած կարգը նպատակաուղղված էր ողջ երկրի բարգավաճմանը, և բնակչության լայն խավերի սրտով էր: Վե՛տանը Գրիգոր Մամիկոնյանին որակում է որպես «դարմանիչ աղքատաց», մի բան, որ ամեն մի իշխանի կամ իշխողի մասին չէ, որ կգրեն միջնադարի պատմիչը:

Գրիգոր իշխանի անձնական կյանքի վերաբերյալ քիչ բան է հայտնի: Արուճի առճարի հիմնադրման մասին վկայող 662 թ. արձանագրությունից երևում է, որ նա արդեն ադ ժամանակ ամուսնացած էր Հեղինեի հետ: Վերջինիս վերաբերյալ պահպանվել են ևս երկու հիշատակություն Կաղանկատվացու և Վարդան պատմիչի մոտ: Նա հիշվում է Աղվանքի Իսրայել եպիսկոպոսի այցելության և մասունքները խնդրելու կապակցությամբ, երբ պարբերաբար գնում էր կաթողիկոսի մոտ, աղաչում էր նրան՝ կատարելու մասունքների մասին արված խնդրանքը: Նաև Գրիգոր Մամիկոնյանին՝ իր ամուսնուն էր համոզում մասունքները տալու²: Ինչպես վերը տեսանք, այս հարցում Հեղինեի միջամտությունը վճռորոշ նշանակություն է ունենում: Նույն դեպքը այլ կերպ է հիշատակում Վարդանը. «Եւ գուրք Գրիգորի նշխարն ասէն ի Հայս բերել Գրիգորոյ Մամիկոնոյ ի գնալ նորա դեսպան ի Կոստանդնուպոլիս, տուեալ գնա կին ոմն յաւագաց՝ որ ուներ առ իւր... եւ գճօտըն տայ Աղուանից ի խնդրոյ Ջուանշիրի և քեռ իւրոյ՝ որ էր կին Գրիգորի»³: Վարդանի պատմության այս հատվածում Կոստանդնուպոլսից նշխարներ բերելու առնչությամբ խախտված է դեպքի ժամանակագրությունը, ինչը ծանոթագրության մեջ նշում են պատմության հրատարակիչները⁴: Սակայն մեզ հետաքրքրողն այստեղ այն է, որ Գրիգոր Մամիկոնյանի կինը համարվում է Ջվանշիրի բուրբ: Կարծում ենք, որ XIII դարում սպրոտ Վարդանը, գրելով այդ, ցանկացել է ուղղակի շնչոտել Հեղինեի շահագրգռվածությունը՝ մասունքները Աղվանք ուղարկելու գործում: Մինչդեռ դեպքն ժամանակակից և Ջվանշիրի ջատագով Կաղանկատվացին նշում է միայն, որ Հեղինեն Աղվանից աշխարհից էր. «զղշխոյն Հեղինե՝ գտիկինն Հայոց Մեծաց որ և նա իսկ յԱղուանից նահանգէն էր»⁵: Ավելի հավանական է եկթադրել, որ եթե

¹ Լեո, նշվ. աշխ., էջ 319:

² Կաղանկատուացի, էջ 236:

³ Վարդան Վարդապետ, էջ 67:

⁴ Նույն տեղը:

⁵ Կաղանկատուացի, էջ 236:

Հեղինակն Ջվանջիբի քույր լինելը, Կաղանկատվացին վերոհիշյալ տողի փոխարեն պարզապես կարձանագրել իր համար հաճելի փաստը: Մյուս կողմից, ինչպես տեսանք Իսրայելին ուղարկողը ոչ թե Ջվանջիրն էր եղել, այլ նրան հաջորդած Վարազ Տրդատը: Ինչևէ, կարծում ենք, որ Հեղինակն ծագումով Աղվանքի հայկական իշխանական տներից որևէ մեկից էր, և այդ հանգամանքը ևս ինչ-որ չափով նպաստում էր Հայոց և Աղվանից իշխանությունների հարաբերությունների ջերմությանը:

Գրիգոր Մամիկոնյանի կառավարման շրջանում երկրի ներքին կյանքի ուշագրավ կողմերից մեկը հայոց իշխանի և հայոց կաթողիկոսների հարաբերություններն են: Նախ նշենք, որ հայ եկեղեցին, ի տարբերություն Ներսես Տաչեցի կաթողիկոսի աթոռակալման տարիների, Գրիգոր իշխանի օրոք ժամանակավորապես զերծ էր մնում բյուզանդական՝ քաղկեդոնական եկեղեցու դավանաբանական «գրոհից» և ամուր կանգնած էր հայ լուսավորչական դավանանքի դիրքերում: Հայոց կաթողիկոսությունն այդ շրջանում ընդհանրապես մեծ հեղինակություն էր վայելում և մեծ կշիռ ուներ երկրի քաղաքական կյանքում: Սակայն դրա հետևանքով երբեմն սուր հակասություններ էին ծագում երկրի աշխարհիկ և հոգևոր տերերի միջև, ինչպես, օրինակ, Թեոդորոս Ռշտունու և Ներսես Տաչեցու ժամանակ: Գրիգոր Մամիկոնյանի կառավարման տարիներին Հայաստանում աթոռակալել են երեք կաթողիկոս՝ Անաստաս Ակոտեցի (661—667), Իսրայել Ռթսեցի (667—677), Սահակ Գ Ջորափորեցի (677—703): Կաթողիկոսարանը գտնվում էր Ջվարթ-նոցում:

Դատելով պատմիչների հաղորդածից, Հայոց իշխանի հարաբերությունները հիշյալ կաթողիկոսների հետ, քավական լավ են եղել, իսկ երկրի քաղաքական կյանքում բացարձակ առաջնությունը պատկանել է աշխարհիկ կողմին՝ Գրիգոր Մամիկոնյանին: Հովհաննես Դրասխանակերտցու պատմության մի հատվածում տեսնում ենք, որ իշխանը կարող էր անգամ հրամայել կաթողիկոսին. «... հրամայել կաթողիկոսին Անաստասա...»²: Ուշագրավ է նաև Կաղանկատվացու հիշատակությունն այն մասին, որ Գրիգոր Մամիկոնյանը Բյուզանդիայի սահմանամերձ Դարանաղ³ գավառից Վաղարշապատ է փոխադրել Գրիգոր Լուսավորչի մասունքները: Դա երկրում ոչ միայն քաղաքական, այլև հոգևոր ու կրոնական կենտրոնաձիգ իրավիճակ ստեղծելու միտումով արված ձեռնարկում էր: Այդ նույն կապակցությամբ դժվար չէ նրկատել, որ Իսրայել եպիսկոպոսի միջոցով Աղվանքին մատուցե տալու խրդություն իշխանուհու և իշխանի կամքն է որոշիչ եղել, որոնք փաստորեն միջամտել են գուտ եկեղեցական մի գործի:

1 А. Тер-Гевондян, Гзվ. աշխ., էջ 55:

2 Դրասխանակերտցի, էջ 91:

Նշանակալից է հատկապես Գրիգոր իշխանի կառավարման սկզբնական շրջանում աթոռակալած Անաստաս Ակոռեցու մշակութային գործունեությունը: Վերջինիս մասին Մ. Օրմանյանը իրավացիորեն գրում է, թե. «աշխատանք անձ մըն էր, կանոնատր գործերու հետամուտ, ընտիր, բայց համեստ ձիրքերով ճոխացած»¹: Մինչ կաթողիկոս ընտրվելը Անաստասը Ներսես Տաչեցու ժամանակավոր բացակայության ընթացքում ղեկավարել էր Զրվարթնոցի փառաբեղ տաճարի շինարարությունը, իսկ կաթողիկոսության տարիներին իր հայրենի Ակոռի գյուղում կառուցում է ս. Հակոբ եկեղեցին և մի շարք օժանդակ շինություններ: Անաստաս կաթողիկոսը զբաղվել է հայոց անշարժ տոմարի փարցեղով և ժամանակի նշանավոր գիտնական ու փիլիսոփա Անանիա Շիրակացուն հանձնարարել է գրելու «Քննիկոն» դասագիրքը՝ բարձր տիպի դպրոցների համար, որի մեջ քառյակ գիտություններից բացի, զետեղված էր նաև հայոց անշարժ տոմարը²:

Պատմիչների մոտ Անաստաս կաթողիկոսը հաճախ է հիշվում Գրիգոր իշխանի հետ՝ Արուճում տաճարը օծելիս, իշխան Ջվանշիրին ընդունելիս և այլն:

Գրիգոր Մամիկոնյանի և Անաստաս Ակոռեցու համատեղ գործերից հարկ է հիշատակել Սուրհան պարսիկի կամավոր կրոնափոխության և Արուճում կայացած մկրտության դեպքը: Կրաքների մոտ զինվորական ծառայության մեջ գտնվող Սուրհանը, որը պարսկական ազնվականական տոհմից էր, դիմում է Գրիգոր իշխանին, խնդրելով իրեն մկրտել՝ դարձնել քրիստոնյա: Իշխանը սիրաճոճար հանձն է առնում իրագործել Սուրհանի խնդրանքը: Արուճի տաճարի օծման ժամանակ 666 թ. Անաստաս կաթողիկոսի ձեռքով, հանդիսավոր պաշմաններում, տեղի է ունենում ադ մկրտությունը: Իսկ Գրիգոր իշխանը դառնալով Սուրհանի կնքահաչրը, նրա վրա է դնում իր հոր՝ Դավթի անունը և տալիս է Կոտայքի Ջագ գյուղը որպես կալվածք: Դրասխանակերտցին, որ մեր պատմիչներից առաջինն է արձանագրել այդ իրողությունը, գրում է. «Բայց Դավթ, որ էր ի պարսիկ տոհմ... եկեալ առ իշխանն մեծ Գրիգոր՝ խնդրէ առ ի նմանէ տալ իւր զքրիստոսական դրոշմն, գոր և խնդութեամբ իսկ զնա ընկալեալ՝ հրամայէ կաթողիկոսին Անաստասայ տալ նմա զկնիք մկրտութեանն սրբոյ: Եւ վասն զի յառաջագոյն Սուրհան անուանիր, ապա իշխանն մեծ՝ ... Դավթ զնա յորջորջէ յանուն հօր իւրոյ և տայ նմակրթիւն նմա զգիտլն Ջագ, ի նահանգին Կոտայից»³: 1404 թ. գրված հայկական ճարտարներից մեկում ադ մասին գրված է. «Մկրտեց զնա (Սուրհանին, Կ. Մ.) տէր Անաստաս լԱրուճ, յատրն նաւակատէից արհնութեանն

¹ Մ. Օրմանյան, Ազգապատմ, Կոտսննդունայրիս, 1912. էջ 745:

² Ա. Մաթևոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», ՀՍՍՀ ԳԱ, «Լրագր», 1974. Ճ 7, 8:

³ Դրասխանակերտցի էջ 91—92:

կաթողիկէին Արճոյ»¹: Գրանից մի քանի տասնամյակ անց, երբ Գրիգոր իշխանն աչլս չկար, Հալաստանի արաջ ոստիկան ոմն Աբղլլահը իմանալով Սուրհան-Դավիթ մահմէդական լինելը և կրոնափոխվելը, պահանջում է որ նա որանա քրիստոնէությունը, այլապես մահվան կդատապարտուի: Դավիթը դաժան փորձությունների և խոշտանգումների է ենթարկվում, սակայն չի ընկճվում: Արաբները Դիվնում մահապատժի են ենթարկում Դավիթն²: Այս դէպքից հետո Սուրհան-Դավիթը, Դավիթ Դիվնեցի անվամբ, հայ եկեղեցու կողմից դատվում է սրբերի շարքը³:

Դավթի մկրտության և ինքնագոհության այս ամբողջ պատմությունը, ինքնին հետաքրքիր լինելուց բացի, վկայում է այն մասին, որ Գրիգոր Մամիկոնյանի օրոք Հալաստանը, ձևականորեն խալիֆայթից կախման մեջ գտնվելով, միանգամայն անկախ ներքին կյանք էր վարում: Երկրի վարչական կենտրոնում քրիստոնէական տաճարի հանդիսավոր օծման պահին պաշտոնական շուքով մի ազնվական մահմէդականի քրիստոնյա դարձնելու համար հարկավոր էր ինքնավստահություն և հաճարձակություն ունենալ: Գրիգոր իշխանը երկրի ներքին գործերում այնքան ինքնուրույն էր, որ պատմիչները Արուճում գտնվող իշխանական գործակալությունը ուղղակի արբունիք են կոչում: Բսկ Գրիգորի կինը՝ Հնդիհեն, փաստորեն հիշատակվում է որպէս հաչոց թագուհի: Այս կապակցությամբ կարծում ենք միանգամայն տեղին է Ա. Տեր-Ղևոնդյանի ենթադրությունը, որը գրում է. «Անհավանական չէ ենթադրել, որ VII դարում Հաչոց իշխանը, և առաջին հերթին Գրիգոր Մամիկոնյանը, թագավոր տիտղոսն էր կրում, քանի որ վերջինիս տիկինը կոչվում էր թագուհի»⁴: Գրիգոր Մամիկոնյանի օրոք երկրի խաղաղ դրությունը մեծապէս նպաստեց նաև տնտեսության բարգավաճմանը, մշակութային վերելքին: Հալաստանում մեծացել էր հետաքրքրությունը ճշգրիտ գիտությունների նկատմամբ: Եվ հենց հանճարեղ Անանիա Ծիրակացու գիտամանկավարժական, լուսավորչական գործունէությունը պայմանավորված էր իր ժամանակի պահանջով:

Երկրում շարունակվում էր ճարտարապետության բուն վերելքը: Ծավալված շինարարական գործերում մեծ ձեռներեցություն էր հանդես բերում

¹ Մատենադարան, ձեռ. № 1521, էջ 449ա:

² Դավթին խաչ են բարձրացնում և նետահարում: Դիվնի հայերը մեծ դժվարությամբ աղաքներից իրավունք են ստանում թաղել Դավթի դին, որն ի վերջո ամփոփում են Դիվնի ս. Գրիգոր կաթողիկէի բակում: Տե՛ս Դրասխանակերթից, էջ 94—95, Մ. Օրմանյան, ճշվ. աշխ., էջ 777:

³ Դավթի Դիվնեցու վկայաբանությունը սիշատակում են հետագայի հայ պատմիչներից շատերը, այն տեղ է գտել վարդապարական հարուստ գրականության մեջ: Տե՛ս Մ. Ավգերյան, Լիակատար վարք ու վկայաբանութիւն սրբոց, Վնենտիկ, 1910:

⁴ Ա. Տեր-Ղևոնդյան, Հաչոց իշխան տիտղոսը..., էջ 245:

Հայոց իշխանը՝: «Գրիգոր Մամիկոնյանի շինարարական գործունեությունն Արուճուն վկայում է այն մասին, որ նա կամենում էր ամուր կերպով հաստատվել Աշխարատում և շքեղ տեսք ու պաշտոնական ճանաչում տալ իր նստավայր ավանին»²: Իշխանը Արուճուն կատարած ընդարձակ շինարարությունից բացի, դարի 70-ական թվականներին Եղվարդից ոչ հեռու կառուցում է մի մենաստան և գողտրիկ եկեղեցի. «Շինել նաև նուիրանոց ուխտի կրօնատրական դասուց, յորում և եկեղեցի պայծառապանոյն...»³:

Հայոց փորձություններով լի պատմությունը ավելի քան հարուստ է պատերազմների ու ավերումների, կտորածների ու կողոպուտների դրվագներով, և հիրավի աշրջ պատմության մեջ հաղթանակներ են նաև խաղաղության այն ժամանակահատվածները, որոնք ձեռք են բերվել մեծաքան եռանդով և հաճախ՝ արշավն: Այդպիսի մի թանկագին ժամանակաշրջան ապահովեց իր երկրի համար Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը, երբ Հայաստանը խաղաղ և ստեղծագործ աշխատանքի տարիներ վայելեց, ասես գոտեպղծվելով գալիք դարի արհավիրքները դիմագրավելու համար:

ԱՐՈՒԾԸ IX—XIII ԴԴ.

Արուն ավանի երկրորդ ծաղկման ժամանակաշրջանը կապվում է Բագրատունիների կողմից հայկական պետականության վերականգնման և դրան հաջորդող պատմաշրջանի հետ, մինչև մոնղոլների աշխարհավեր արշավանքը (1236 թ.): Դա Հայաստանի շատ շրջանների շենացման ու բարգավաճման, ակնհաստես պատմիչի՝ Ստեփանոս Տարոնացի Ասողիկի վկայությամբ ազարակներից ավանների և ավաններից քաղաքների վերածվելու ժամանակաշրջան էր⁴: Արագորեն ծաղկած խոշոր քաղաքների՝ Անիի, Դիլիճի, Կարսի, Արծնի և այլոց կողքին վերելք արկեցին մի ամբողջ շարք գյուղաքաղաքներ և ավաններ՝ հատկապես Ծիրակում: Ինչպես նշում է ակադեմիկոս Բ. Առաքելյանը. «... առանց մանր քաղաքների և գյուղաքաղաքների դերի

¹ Կ. Մաթևոսյան, Իշխան Գրիգոր Մամիկոնյան-պատմիչատու և հովանավոր եկեղեցական շինարարության, «Էջմիածին», 1981, Դ, էջ 39—44:

² Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 321:

³ Լուկհանեն Գրասխանակերոցի, էջ 91: Եկեղեցին կոչվում է ս. Ջորավար: Այն ութ խորանով մի ինքնատիպ կառույց է, որն ուրույն տեղ ունի վաղ միջնադարյան հայ ճարտարապետության գոհարների շարքում: Այժմ կիսավեր է: Զարդարված է եղել որմնակարներով, որոնցից աննշան հատվածներ են պահպանվել: Նկարիչն հավանաբար Արուճի տանարի որմնակարիչ Ստեփանոսն է եղել: (Կ. Մաթևոսյան, Եղվարդի ս. Ջորավար եկեղեցին և մենաստանը, «Էջմիածին», 1983, է, էջ 49—52):

⁴ Ստեփանոս Տարոնացի, Պատմություն..., էջ 161:

հաշվառման՝ աշխատանքի հասարակական բաժանման, արհեստագործության, առևտրի և քաղաքային կյանքի պատկերը թերի կլինե՞ր»¹:

Արուճը, որը գտնվում էր Անիի Բագրատունյաց թագավորության կազմում, անմասն չէր սկսված ազգային զարթոնքին, և տնտեսական որոշակի դեր ուներ այդ թագավորության մեջ: Արուճը անեցիների և Շիրակի բնակչության համար հատկապես մեծ արժեք էր ներկայացնում իր բազմաթիվ բերքատու այգիների ու սրգաստանների շնորհիվ, ինչից զուրկ էր բուն Շիրակը: Պատահական չէ, որ Անիի և Հոռոմսի վանքի վիմագիր արձանագրություններում բազմիցս հիշատակությունների ենք հանդիպում Արուճի այգիների, արտերի ու հնձանների վերաբերյալ: Բացի այդ, Արուճը գտնվում էր քաղաքամասը Անին երկրի հարավ-արևելյան շրջանների հետ կապող և մասնավորապես Դվին տանող գլխավոր ճանապարհի վրա, որն ուղղակիորեն նպաստում էր բնակավայրի տնտեսական շփումների ընդլայնմանը, արուճեցիներին հնարավորություն ընձեռելով մասնակից լինել տարանցիկ առևտրին: Արուճը նշված քարավանային ճանապարհի կարևոր օղակներից մեկն էր: Դրա իրերեն վկան է մինչև օրս մասնակիորեն պահպանված Արուճի քարավանատունը: Վերջինս պետք է որ ստեղծված լինի Անիի վերելքի տարիներից, առնվազն XI դարում:

Ժամանակի քաղաքական իրադարձություններին Արուճի մասնակցության վերաբերյալ քիչ նյութեր կան: Հայտնի է միայն որ X դարի սկզբներին, արաբ Յուսուֆին դիմագրավելու համար Սմբատ Ա Բագրատունին Արուճի մերձակաքում էր կենտրոնացրել իր ռազմական ուժերը:

Արուճի տնտեսական վերելքը Բագրատունիների օրոք սկսվել է դեռ IX դարում: Այդ են հարստատում Արուճի տաճարի այդ շրջանին պատկանող երկու վիմագիր արձանագրությունները²: Առաջինը՝ գրված 867 թ, վերաբերում է ջրային հարցի կապակցությամբ Արուճի, Կոչի և Գավառի միջև ծագած վեճին ու ընդհարմանը: Ի՞նչն էր միջադեպի պատճառը: Բանն այն է, որ այդ ժամանակ Արուճը զգալիորեն ընդարձակել էր իր այգիներն ու ոռոգելի հողատարածությունները, որն էլ մեծացրել էր ջրի պահանջարկը: Արձանագրությունից դժվար չէ նկատել, որ վեճ ու կռվի նախաձեռնողները արուճեցիներն են եղել և, վերջին հաշվով, իրենք էլ հաղթել ու վերցրել են հարևան գյուղերի ոռոգելի ջրի մի մասը: Գործին միջամտել է Բագրատունի Սմբատ սպարապետը՝ նրա առաջած զորական Գրիգորը վերականգնելով հիշյալ բնակավայրերին հասանելիք ջրի նախնական չափը, արձանագրու-

¹ Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, 1958, էջ 84:

² Տե՛ս ստորև, Արուճի տաճարի վիմագիր արձանագրությունների բաժնում:

թյան վերջում սպառնում է «մահվանը պատուհասել» այդուհետև ջրաքաշխման սահմանված կարգը խախտողներին:

Երկրորդ արձանագրությունը, փորագրված 987 թ. Սմբատ Ծանձնահի կողմից, Արուճում բաժ հարկից ազատում էր շալակավորներին (շալակով բեռներ փոխադրողներին): Այդ հարկն ուներ փոխադրության մաքսային հարկի նշանակություն¹ և բնականաբար գանձվում էր այնտեղ, ուր ապրանքներ էին բերվում վաճառքի համար: Արձանագրության մեջ նշվում է, որ բաժից ազատվում են միայն շալակավորները, հետևաբար փոխադրամիջոցներով (սալլ, ձի, ջորի) բերվող ապրանքների դիմաց հարկ էր գանձվում: Դրա համար «Արուճում, իբրև գյուղաքաղաքում, կային հարկ հավաքող պաշտոնյաներ, որոնք բաժ էին գանձում շուկա հանվող մթերքներից»²:

Արուճի առևտրական կենտրոն լինելը հաստատվում է ինչպես արձանագրությունների տվյալներով, այնպես էլ այդ պատմաշրջանին վերաբերող դրամական գտածոներով: Դրանց մեջ մեծ թիվ են կազմում Քրիստոսի պատկերով բյուզանդական պղնձե դրամները (X—XI դդ.): Վերջիններիս մասին դրամագետ Խ. Մուշեղյանը գրում է. «Առևտրի հայկական շուկայում X դարի վերջերից և XI դ. ընթացքում ամենատարածված պղնձե դրամը հանդիսանում էր Հիսուս Քրիստոսի պատկերով բյուզանդական պղնձե դրամը: Այդ... դրամի վրա չորս տողով հունարեն խոշոր տառերով գրված էր. «Հիսուս Քրիստոսն է թագավորների թագավորը»³: Բյուզանդական այդ դրամները հատվել են մի շարք կայսրերի օրոք, սակայն դրանց վրա չէր նշվում որևէ տարբերիվ կամ փողանոցի տեղանուն: Հնարավոր է, որ այդ դրամների մի մասը հատվում էին Անի քաղաքում⁴: Արուճում գտնվել են նաև տարբեր ժամանակաշրջանների վերաբերող մահմեդական դրամներ, ինչպես և մի պղնձե դրամ, հատված վրաց Թամար թագուհու և նրա ամուսին Դավիթ Սուլյանի անունով:

IX—XIII դարերում Արուճը բազմաթիվ մրգատու այգիներով շրջապատված հարուստ ավան էր: Նրա բնակչությունն այդ ժամանակ կազմված էր մեծ մասամբ աշգճործներից, սակայն կարելի է կարծել, որ այնտեղ նաև արհեստավորներ են բնակվել: Սրունեցիներից ոմանք տեղ էին դրամական և նյութական բավական խոշոր միջոցների: Այսպես. Անի քաղաքի ս. Փրկչի եկեղեցին 1193 թ. նորոգել են Արուճի ավագերեց Գևորգի թոռ Սուսենես քահանայի որդի Տրդատը և նրա կինը՝ Խուշուշը: Նրանց փորագրած երկարաշունչ արձանագրության սկզբում կարդում ենք. «Ես Տրդատ քահանա, որդի Սուսենես քահանայի, թոռն Գևորգս աւագերիցո Արճոյ եւ զուգակնոյ

¹ Հ. Մանանդյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1981, էջ 88:

² Բ. Առաքելյան, Քաղաքներ..., էջ 86:

³ Խ. Մուշեղյան, Դրամական շրջանառությունը Հայաստանում, Երևան, 1983, էջ 216:

⁴ Նույն տեղը:

իմ խուշուշ...»: Տրդատի կողմից իր ծագման մասին արված ադ թվարկումը պատահական չէ: Վիմագիր արձանագրություններում քիչ են դեպքերը, երբ արձանագրության հեղինակը (մանավանդ եթե ազնվատոհմ չէ) միշտակում է նաև իր պայսին, այն էլ նման մանրամասներով (Արուճի ավագերեց): Այս, ինչպես և ս. Փրկչի եկեղեցուն արված նվիրատվությունները վկայում են, սակայն, որ Տրդատի կարողությունը ծագում էր նրա պայսիի՝ արուճեցի Գևորգից: Ինչպես երևում է Տրդատը բավական մեծ միջոցների տեր էր: Աբղլարիի Պահլավունու կառուցած ս. Փրկչի եկեղեցու մասին նա գրում է. «... շինեցաք վերըստին գմբե գանձագին հայրենիքս զՍուրբ Փրկիչս շատ աշխատութեամբ և նորոգեցաք յառաջին պայծառութիւնն... շինեցաք մաս ժամատուն...»¹: Արձանագրության մեջ նշվում են եկեղեցուն արված նվիրատվություններ՝ զարդեղեն, սպասքներ և այլն: Հավանաբար հենց ադ ժամատունն է ս. Փրկչի եկեղեցին որմնանկարագարդել Սարգիս Փառշկանի կողմից²: Սակայն մեզ հատկապես հետաքրքրում է Տրդատ եկեղեցուն Հլիրաբերած անշարժ գույքի թվարկումը: Արձանագրության վերջնամասում կարդում ենք. «Արդ ես Տրդատ երեց եւ լծակից իմ խուշուշ ի մեր հայրենի ժառանգութեանց ի սպաս պիտուց հացի եւ զինու տուաք չորս աչգի յԱրուճ՝ զՍաղար եւ զԸրիկ եւ զԿովարածն եւ Բլար Խաչկայն, և տուն եկեղեցոյն դիմաց. մեծ արտ Բեխենցն :Ճ: կապճո մին ի Սիրեան ի ջրույն Բեխենցն այս էր պղպղիկ»³: Ինչպես տեսնում ենք Տրդատի և խուշուշի նվիրաբերությունները կատարված են միայն Արուճում գտնվող նրանց «հայրենի ժառանգությունից»: Արձանագրության մեջ նշված. «տուն եկեղեցոյն դիմաց»-ը կարծում ենք վերաբերում է Արուճի եկեղեցուն, ինչպես և նախադասության սկզբում թվարկված այգիներն ու Բեխենց⁴ արտը: Եթե դրանք (տունը և հատկապես Բեխենց մեծ ատոր) մեկ այլ բնակավայրում (կամ կենրում) օտույնին, արձանագրության մեջ այդ անպայման կընդգծվեր:

Այսպիսով, Տրդատի արձանագրությունից մենք իմանում ենք XII դարի Արուճի այգիներից չորսի անունները՝ Սաղար, Ըրիկ, Կովարած, Բլար Խաչ-

¹ Դիվան հայ վիմագրության, սր. I, Աճի քաղաք, կազմեց Հ. Օրբելի. Երևան, 1966, էջ 47, № 134:

² Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառարկություն, Երևան, 1978, էջ 326—328: Այդ որմնակարը հատկապես արժեքավոր է շնորհիվ այն բանի, որ խորաններից մեկի գմբեթարդում՝ Մաթևոս ավետարանչի պատկերի դիմաց նկարված է նկարչի ինքնանկարը, այդ հավաստող համապատասխան մակագրությամբ:

³ Դիվան հայ վիմագրության, նույն տեղը:

⁴ Բեխենցը տրմանում է, կազմված Աճիում տարածված այլ տրմանումների սկզբունքով (Հոնենց, Ծիլենց, Խամբուշենց և այլն): Աճիում էր գտնվում Բեխենց տրմական եկեղեցին (Բեխենաց վանք), որը 1215 թ. նորոգել է Տիգրան Հոնենցը:

կա: Դրանց պետք է ավելացնել Բեխենց կոչվող մեծ արտը որպես «հանդամաս Արուճում»¹:

Արուճի մեկ այլ այգի հիշատակվում է Անիում Տիգրան Հոնենցի կառուցած Գրիգոր Լուսավորչի եկեղեցու շինարարական արձանագրության մեջ (1215 թ.): Այստեղ Հոնենցը թվարկելով իր կողմից եկեղեցուն արված նվիրատվությունները, ի թիվս այլոց նշում է Արուճի այգիներից մեկը. «... բազում հողեր գնած, այգի :Ա: յԵրեսան, այգի :Ա: յՉախկան, այգի :Ա: [ի] Կոշ, Էգի :Ա: յԱրուճ որ Մազոտն կոչի, այգի :Ա: Մրեն...»² և այլն: Այստեղ ուշագրավ է նախ այն, որ Արուճում այգին անվանված է «էգի» (այգու բարբառային ձևը), և երկրորդ, ի տարբերություն մյուսների, շեշտված է այդ այգու անունը՝ Մազոտն, դա արուճյան այգիների իսկապես բազմաբանակության մասին է վկայում:

Արուճի այգիների հիշատակություն կա նաև Հոռոմոսի նշանավոր վանքի արձանագրություններում: Այստեղ, ս. Հովհաննես եկեղեցու ժամատան անթիվական արձանագրություններից մեկը վկայում է. «Ի յԱրուճ փոքր այգիքն են վանացս, Եկեղեցյանին, Փաշուտին, Լապատակացն, Հանկանն, Առնկանն, Աղպետեանցն, Թախարեանցն, Խաչեղբարցն և պատարագի Քրրիստոս յանուն սոցա ի խաչին ութօրէքն՝ Ի»³: Նույն արձանագրությունը ն. Սարգսյանի մոտ սի փոքր տարբեր է. «Ի յԱրուճ փոքր այգիքն են վանացս եկեղեցյանին: քաշուտին, լապատակայն, հանկանն...»⁴ և այլն: Կարծում ենք առաջին դեպքում արձանագրության միտքն ավելի ճիշտ է հասկացված, քանի որ նախադասության վերջում նշվում է (Ի)20 պատարագ «յանուն սոցա»: Այսինքն՝ արձանագրության մեջ վկայակոչված են վանքի կալվածքները՝ Արուճի փոքր այգիներն իրենց անուններով, որոնք իրենց հերթին ծագում են այդ այգիների նախկին տերերի անձնանուններից, տոհմանուններից, անգամ մականուններից: Վերջիններս էլ փոքր այգիների նվիրատուներն են և հենց նրանց համար են խոստացվում վերոհիշյալ պատարագները⁵:

¹ Դիվան հայ վիմագրության, էջ 136:

² Դիվան հայ վիմագրության, էջ 62—63, № 188:

³ **Աբել Մխիթարյան**, Պատմութիւն Հոռոմոսին վանից ի Շիրակ, Վաղարշապատ, 1870, էջ 34:

⁴ **Ն. Սարգսյան**, Տեղագրութիւն ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վեներտիկ, 1864, էջ 155:

⁵ Սույն արձանագրության շարունակությունը մնանստիպ բովանդակություն ունի. «Ի ձորին ծնակեճոյ գնեցին վանեցիքս և Մարեմտոր Կողպացի Ին դահեկան ետ ի գինացն յանուն Շորա պատարագի Քրիստոս Գ մեք Հոռոմոսին վանականքս»: Մարեմտոր Կողբացին 25 դահեկան է տրամադրել Հոռոմոսի վանականներին, համապատասխան գնման համար և փոխադարձաբար երեք պատարագ ստացել: Ինչ վերաբերում է Արուճի փոքր այգիներից երկրորդի անվան «Փաշուտին» (Ա. Մխիթարյան) և «Քաշուտին» (Ն. Սարգսյան) ձևերին, պետք է ասել, որ երկու հեղինակներն էլ արտագրելով անմիջապես այս արձանագրությունը:

Հոռոմոսի սույն արձանագրությունը մեզ ծանոթացնում է Արուճի փոքր այգիներին, որոնք կոչվում էին. 1. Եկեղեցականի, 2. Փոշուտի, 3. Լապստալաց, 4. Հանկանի, 5. Ադյուձական, 6. Աղպետենց, 7. Թոխարենց, 8. Խաչդարյանց:

Հոռոմոսի վանքի մեկ այլ արձանագրության մեջ հիշվում է Արուճում տնվող վանքապատական մի հնձանատեղի, որը նորոգել էին Մկրտիչ արքեպիսկոպոսի և Գրիգոր քահանայի՝ 1258 թ.: «Ի թուին ՉԷ. Ես Մկրտիչ արքեպիսկոպոսի և իմ հոգևոր եղբայրն Գրիգոր քահանայն շինեցաք վերստին զընծանն յԱրուճի...»¹:

Հատիճա վանքի 1196 թվականին վերաբերող մի արձանագրության մեջ հիշատակվում է Արուճի այգիներից մեկը ևս, ինչպես նաև այդ այգում գտնվող մի հնձան: Արձանագրությունը հետաքրքրական է ոչ միայն այգու անվան հիշատակության առումով, այլև այդ այգու՝ բնակավայրի «Երի թառում» գտնվելու մասին եղած տեղեկությամբ: Բնական է ենթադրել, որ Արուճում կային և այլ թաղեր, չի բացառվում, որ թաղերից մեկում կար նույնանուն՝ «Խաչկանց» այգի, որի համար էլ Հատիճի արձանագրության գրող կսովածատուրը շնչտում է, որ իր նվիրած Խաչկանց այգին Վերին թաղում: Արձանագրությունը հետևյալն է. «Ի թուին ՈՒԵ (1196) ... ես Աստուածատուր ետու զիմ հայրենի այգիս, որ յԱրուճ, ի Վերին թաղն Խաչկանց այգին և զընծանն ետու ի սուրբ ուխտս Հատիճայ...»²:

Արուճի պատմության հետ առնչվող մի տեղեկություն է մեզ հասել Զարիա Սարկավազ պատմիչի ձեռքով: Վերջինս Սաճահիճի վանքի հին ձեարքերից մեկից մի պատմություն է քաղել նվիրված Մարմաշենի Երեմիա անահորը³: Այստեղ նշված է, որ 1033 թ., Հովհաննավազքում մի կարևոր ողնակ է կազմվել, որը գրել են Վախթանգ իշխանը և «ազատքն Արուճայ Թավնայ...»⁴: Հիշատակությունից երևում է, որ Արուճի բնակչության մեջ

ություն տակ փորագրված մեկ այլ արձանագրություն, այդտեղ նա հիշատակվող նույն ունը տարբեր կերպ են գրում. «Ես Փաշուտս ետու զիմ ծաղկոցի կտան...», «Ես Քալստս...»: Տե՛ս Արել Մխիթարյան, նույն տեղը, Ն. Սարգսյան, նույն տեղը:

¹ Արել Մխիթարյան, նույն տեղը, էջ 30:

² Ղ. Ալիշան, Ծիրակ, Վենետիկ, 1881, էջ 159:

³ Մարմաշենի առաջնորդ Երեմիան թողնում է հայրենի վանքը իր աշակերտ Սոսթենեյն և գալիս Հովհաննավազք, որ և մահանում է: Հավաքվում են աշխարհիկ և հոգևոր ազմասթիվ նշանավոր գործիչներ և որոշում են վերահաստատել Հովհաննավազքի ու Մարպշենի բարեկամությունը, որը Երեմիայի հեռացումով խախտվել էր: Հովհաննավազքից մի փարեթական կոնդակ են գրում. «Եւ գրեցին կոնդակ Յովհաննու վանցի և եղին կնիք ոսթենու և Գրիգոր վարդապետք, որ գրեցաք Վաղթանակ իշխան և ազատքն Արուճայ և ավնայ», ապա մահաբժան են կանգնեցնում Երեմիային ՆՁԲ (1053) թվականին: Տե՛ս Ղ. Ալիշան, նույն տեղը, էջ 152:

⁴ Նույն տեղը:

գգալի թիվ էր կազմում նաև ազատանին, որը հարկ եղած դեպքում մասնակցում էր ժամանակի կարևոր ձեռնարկումներին:

Վերը բերված փաստերը վկայում են, որ Արուճը IX—XIII դդ. աշգի-գործական, առևտրատնտեսական բավական խոշոր կենտրոն էր և ուներ իր շուկան: Միանգամայն հասկանալի է, թե ինչու VII դարում ավան և դաստակերտ կոչվող Արուճը X դարում Հովհաննես Դրասխանակերտցին անվանում է քաղաքագյուղ: Ինքնին ուշագրավ երևույթ է նաև Արուճի ազգիների բավական մեծ թվով անունների պահպանումը Անիի, Հոռոմսի, Հառիճի վիճագիր արձանագրություններում: Ավելորդ չենք համարում ստորև բերել արձանագրություններում հիշատակված արուճան այգիների լրիվ անվանա-ցանկը.

փոքր այգիներ	1 Սաղար—	հիշատակված է՝	1193 թ.
	2 Ծլիկ—		1193 թ.
	3 Կովարած—		1193 թ.
	4 Բլար Խաչկա—		1193 թ.
	5 Մազոտն—		1215 թ.
	6 Խաչկանց (վերին թաղ)—		1196 թ.
	7 Եկեղեցականի		—
	8 Փոշուտի		—
	9 Լապստակաց		—
	10 Առյուծական		—
	11 Աղպետեց		—
	12 Հանկանի		—
	13 Թոխարեց		—
	14 Խաչեղբարեց		—

Արուճում էր գտնվում մեծ արտ (15) Բեխենցը հիշատակված 1193 թ.:

IX—XIII դարերում Արուճում կատարվել են մի շարք շինարարական գործեր: Նորոգվել է երկրաշարժից տուժած ս. Գրիգոր տաճարը, կառուցվել է բարավանատունը: Ընդարձակված այգիներում հիմնվել են նորանոր հրճաններ: Այդ ժամանակաշրջանին են պատկանում նաև Արուճ գյուղի տարբեր մասերում հաշմարբրված խաչքարերը:

Արուճի բարգավաճումը սակայն ընդհատվեց մոնղոլական ավերիչ արշավանքի հետևանքով: 1236 թ. Սրարատյան երկրամաս կատարված մոնղոլական ներխուժման մասին մի հիշատակագիր գրում է, թե թշնամին. «այնչափ անողորմ էր, որ թե հրձղեն լեզու ստանա՛մ ոչ կարեն պատուել զանցս չարչարանացն, որ ետ ըմպել զբաժակն բարկութեան Ալքարատեան գաուսոնին և Անոյս առաւել... զի բազում քաղաքս և զքերդս Լատ և հիմն ի վեր

տապալելաց»¹: Պատմական որոշակի հիշատակություն չունենք, թե այդ թվականին ինչ կատարվեց Արուճում, միայն Ռադի որդի Մկրտիչի Հոռոմոսում թողած արձանագրությունից, ուր խոսվում է Արուճում ֆեոդաների վերանորոգման մասին (1258 թ.), կարող ենք ենթադրել, որ բնակավայրն ու այգեստանները ևս տուժել են թշնամու հարձակումից: Հավանաբար XIII դարի ընթացքում Արուճում կյանքը շարունակվել է քիչ թե շատ նորմալ հունով ընթանալ, բայց դրան հաջորդած ժամանակաշրջանն արդեն տնտեսական անկման և բազմաբնույթ զրկանքների շրջան էր: Պատահական չէ, որ դարավերջին՝ 1285 թ., Արուճի տաճարի պատին Խուսանի որդի Մանկլիի գրած արձանագրության մեջ բնակավայրն ստաջին անգամ կոչվում է գյուղ:

Մ Ա Ս Կ Բ

**ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ**

ԱՐՈՒՃԻ ՏԱՃԱՐԸ

Ա. Ճարտարապետությունը

Արուճի ս. Գրիգոր տաճարը հայ ճարտարապետության ոսկեդարի ամենանշանավոր կառույցներից է: Տաճարի առաջին ուսումնասիրողներից մեկը՝ վաստակաշատ Թորոս Թորամանյանը գրում է. «Արուճի մեջ, բացի զըմբեթից, կանգուն է Գրիգոր Մամիկոնյանի ... կանգնած եկեղեցին, որ մի գոհար է VII դարու մեջ: ... Արուճի եկեղեցին ոչ միայն իր մեծությամբ և բարձրությամբ նշանավոր է, այլ շինարարական տեսակետով ևս սքանչելի է»¹:

Ըստ շինարարական արձանագրության, տաճարի հիմնադրությունը տեղի է ունեցել Գրիգոր Մամիկոնյանի իշխանության անցնելու հաջորդ տարում՝ 662 թ. մարտի 25-ին², որից հետո արագորեն ծավալված շինարարական աշխատանքները ավարտվել են 666 թ., ինչպես նշում են պատմիչները (Սամվել Անեցի, Կիրակոս Գանձակեցի): Հենց այդ ժամանակ էլ կատարվել են տաճարի օծումը Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի ձեռքով և Սուրբան-Դավթի մկրտությունը:

Արուճի տաճարին տարբեր առիթներով անդրադարձել են բազմաթիվ ուսումնասիրողներ՝ հանրագիտակ-ճանապարհորդներ, ճարտարապետության պատմաբաններ, արվեստաբաններ: Դեռևս XIX դարում Արուճ այցելելուց հետո իրենց ճանապարհորդական գրառումներում և աշխատություններում տաճարը հիշատակել են Հովհ. Ծախաթոնյանցը³, Աբել Մխիթարյանը⁴, Լինչը⁵, Ն. Մառը⁶: Դ. չնից հետո Արուճի տաճարին ավելի մասնագիտական

¹ Թ. Թորամանյան, Նյութեր..., երկրորդ ժողովածու, էջ -21:


² Այդ մասին տե՛ս ստորև տաճարի արձանագրությունների բաժնում:

³ Հովհ. Ծախաթոնյանց, նույն տեղը, էջ 58—60:

⁴ Ա. Մխիթարյան, Տեղագրութիւն Կաթողիկէ եկեղեցւոյ Արուճ ավանի, «Տեղագրութիւն Մարմաշինոյ վանացն ի Շիրակ» Վաղարշապատ, 1870:

⁵ Լինչ, նույն տեղը:

⁶ Н. Март, Армянская церковь в Аруче («Известия Археологической комиссии», 1904, вып. 12, с. 61—67,



1 Գմբեթավոր դահլիճների տիպի զարգացումը (հատակագծեր՝ 1 Ջովուճի, 2 Պողոճի, 3 Դղմաշեն, 4 Արուն)

քննությանը անդրադարձել են Թ. Թորամանյանը¹, Յ. Ստրժիգովսկին², Ն. Տոկարսկին³, Ա. Յակոբսոնը⁴, Ստ. Մնացականյանը⁵ և շատ ուրիշներ: Տաճարի ուսումնասիրության գործում կարևոր ներդրում է վ. Հարությունյանի գրքույկը, որը թեև վերնագրված է «Արունի տաճարի թվագրման կապակցությամբ»⁶, սակայն անհավանաբար լայն ընդգրկում ունի: Հեղինակն այստեղ մանրամասնորեն անդրադարձել է տաճարի կառուցման պատմական ժամանակաշրջանին, պատմիչների հաղորդած տեղեկություններին, կառույցի շինարարական արձանագրությանը, հատակագծին, կոնստրուկտիվ առանձնահատկություններին, դեկորատիվ հարդարանքին և այլն: Դրա հետ մեկտեղ վ. Հարությունյանը հիմնավորապես հերքում է Գ. Չուբինաշվիլու փաստարկները, որոնց միջոցով վերջինս տաճարի շինարարության ժամանակը արհեստականորեն տեղափոխում էր X դարի վերջերը⁷:

Բազմաթիվ ուսումնասիրողներ են անդրադարձել նաև Արունի տաճարի փնագիր արձանագրություններին և որմնանկարին, որոնց մասին կհիշատակենք ստորև:

¹ Թ. Թորամանյան, Նյութեր..., երկրորդ ժողովածու, էջ 120—121:

² J. Strzygowski, Die Baukunst der Armenter and Europa. Wien, 1918.

³ Н. Токарский, Архитектура Армении IV—XIV вв. Ереван, 1961, с. 109.

⁴ А. Якобсон, Очерки истории зодчества Армении V—XVIII веков. М.-Л. 1950, с. 47

⁵ Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, էջ 171:

⁶ В. Арутюнян, По поводу датировки храма в Аруче. Ереван, 1946.

⁷ Г. Чубинашвили, Армянское искусство конца IX и до начала XI в. (Сборник «Давид Сасунский», Тбилиси, 1930).

Արուճի ս. Գրիգոր տաճարը պատկանում է հայ միջնադարյան ճարտարապետության մեջ լայն տարածում գտած գմբեթավոր դահլիճների տիպի կառույցների վաղագույն սերնդին: Հաչատուհան գմբեթավոր դահլիճներ կառուցել են դեռ VI դարում, իսկ ա.դ տիպի առաջին հայտնի հնագույն շինությունը Զովունիի Պողոս-Պետրոս եկեղեցին է, որը գմբեթավոր դահլիճն է վերակառուցվել հին բազիլիկից¹: Դրանից հետո, մինչև VII դարի կեսերը հայ ճարտարապետության մեջ հանդես էին գալիս արդեն հղկված հորինվածքներով գմբեթավոր դահլիճներ, որոնք են Պողոսի եկեղեցին (VI դար), Արուճի տաճարը և Դոմաշենի ս. Թադևոս Առաքյալ եկեղեցին (VII դար)², (գծ. 1):

Գմբեթավոր դահլիճների հորինվածքին բնորոշ է ներքին տարածության միասնականությունն ու ամբողջականությունը: Այստեղ, ի տարբերություն բազիլիկ և կենտրոնագմբեթ կառույցների, չկան կողային ճակեր, մույթեր և սյուներ: Ծածկի և հսկա գմբեթի ողջ ծանրությունը իրենց վրա են կրում երկայնական պատերի երկու զույգ հզոր որսնամույթերը: Դրանց կապող լայնաթոփյա կամարներով էլ ստեղծվում է գմբեթատակ բառակուսին: Ծարտարապետական այս հորինվածքը ծնունդ առնելով վաղ միջնադարում, լայն տարածում է գտել հաս հետագա դարերի հայ ճարտարապետության մեջ:

Արուճի տաճարը իր չափերով վաղ միջնադարյան գմբեթավոր դահլիճների մեջ ամենամեծն է (16,95×34,6 մ): Այն, անգամ այժմ, երբ բացակայում է բարձրադիր գմբեթը, գերիշխում է Արուճ գյուղի և հրա շրջակայքի ընդարձակ համաչափապատկերի վրա: Ծիճությունը կառուցված է կարմրավուն և սև տեղական սրբատաշ տուֆ քարով: Արտաքուստ ունի եռաստիճան գետնախարիսխ: Տաճարի քարերի վրա մեծ թիվ են կազմում վարպետների նըշանները: Ներքուստ՝ լայնածավալ ավագ խորանի երկու կողմերում գտնվում են երկուսական պատուհաններով լուսավորված զույգ ավանդատներ, իսկ նրանց վերևում կան, այսպես կոչված, թաքստոցներ: Տպավորիչ է հատկապես կառույցի կոտ ներքին տարածությունը: Այն Ս... Յակոբյանի պատկերավոր արտահայտությանը. «գարնացնում է ամեն մեկին, ով անցել է նրա (տաճարի) շենքից»³:

¹ Ա. Սահմաչյան, Զովունիի ճարտարապետական խումբը, ՀԱՍՀ ԳԱ «Լրաբեր», 1968, № 1:

² Մ. Հապարթյան, Դոմաշենի VII դարի գմբեթավոր դահլիճը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, № 1, էջ 264—269, նույնի՝ La salle a coupole du VII Siècle de Déd-machène et les monuments similaires du Haut Moyen Age en Arménie, „Revue des études arméniennes“, t. X. Paris. 1973 74.

³ А. Якобсон, նույն տեղը, էջ 45: Վ. Հարությունյանը և Ս. Սաֆարյանը այս կապակցությանը գրում են, որ Արուճի տաճարը. «ամենից արագ գարնացնում է իր վեհաշուր ինտերերով, մեծ պատուհաններով առտորեն լուսավորված միասնական ներքին տարածությանը»: В. Арутюнян, С. Сафарян, Памятники Армянского зодчества. М., 1951, с. 45.

Արուճի տաճարը ընդհանուր հորինվածքով շատ մոտ է Պողոնի տաճարին, սակայն կառուցողական և հարդարանքի մանրամասների առումով նրանից էական տարբերություններ ունի: Ինչպես Ն. Տոկարսկին է նկատում, Արուճի ճարտարապետը շենքի տարածական լուծման գաղափարը վերցնելով Պողոնից, չի գնում սովորական կրկնության ճանապարհով: Արուճի ճարտարապետը քաջատեղյակ էր ժամանակի ճարտարապետական նորություններին, իսկ այդ շրջանի ամենակատու իրագործունը Ջվարթնոցի փառահեղ տաճարի կառուցումն էր: Վերջինս հորինվածքի համարձակ մտահղացմամբ, ձևերի ու մանրամասների բարձրարվեստ մշակմամբ, ծավալների ներդաշնակ լուծմամբ իր ետևից տարավ հայ օժտված ճարտարապետների մի քանի սերունդ¹: Ջվարթնոցի ճարտարապետության ազդեցությունն առկա է նաև Արուճի տաճարում²: Այստեղ գմբեթի թմբուկը չի դրված, այն ժամանակ ամենուր տարածված տրոմպների վրա, այլ Ջվարթնոցի օրինակով, կիրառված է սոսազատային փոխանցումը, որն անհամեմատ կատարելագործված միջոց է հանդիսանում: Պողոնից զգալիորեն տարբերվել է նաև Արուճի տաճարի գմբեթը: Թեև այն այժմ բացակայում է, սակայն տաճարի մոտակայքում գտնված, գմբեթի թմբուկի զուգ կիսակլոր որմնապուներ ունեցող անկյունային քարից ելնելով Ն. Տոկարսկին կատարել է դրա վերականգնությունը (գծ. 2)⁴: Արուճի տաճարի գմբեթն ունեցել է կամարազարդ 12 նիստերով թմբուկ, որի վրա եղել են նիստերի թվին համապատասխան պատուհաններ, ինչպես Թալինի կաթողիկե տաճարում է:

Արուճի տաճարի ներքին հարդարանքում բացակայում են զարդաքանդակները, որը պայմանավորված է որմնակարի գոյությամբ⁵: Տաճարում թաղերի ու կամարների պատրաստման ժամանակ կիրառվել են կամարակալներ, որոնք հենվում էին փայտե հեծանների վրա, իսկ վերջիններիս

¹ Н. Токарский, *Голыг տեղը*, էջ 109:

² С. Мнацаканян, *Звартноц*. М., 1971, с. 58—59.

³ Ջվարթնոցի ազդեցությունը, թե՛ հորինվածքի, թե՛ դեկորատիվ մանրամասների առումով, զգալի է նաև Գրիգոր Մամիկոնյանի կառուցած ս. Զորավար եկեղեցում: Ըստ հնարավոր է, որ Արուճի և այս եկեղեցիները նույն ճարտարապետի անդամագործությունը լինեն, մանավանդ, որ դատելով վարպետների նշաններից երկու կառույցում էլ հիմնականում նույն քարագործ վարպետներն են աշխատել, իսկ երկու եկեղեցիների որմնակարներում զգալի է միևնույն նկարչի ձեռքը: Կ. Մարտոսյան, Եղվարդի ս. Զորավար եկեղեցին և մնաստանը, էջ 50—52:

⁴ Н. Токарский, *Голыг տեղը*, էջ 108, 171:

⁵ Ն. Տոկարսկին գրում է. որ Արուճի ճարտարապետը միայն ներքին հարդարանքի որոշ դետալների (խոյակներ, ներքին քիվեր) մշակման մեջ գիշում է Պողոնի իր նախորդին (Н. Токарский, *Голыг տեղը*, էջ 109): Սակայն չպետք է մոռանալ, որ Արուճի ճարտարապետը պարզորոշ գիտեր, որ կառուցումից հետո շենքը նեղրուստ ամբողջովին որմնակարազարդվելու է, ուստի անհիմաստ կլիներ խոյակների, ներքին քիվերի և այլ քարե մանրամասների զարդափորագրությունը:



2. Արուճի տաճարը հարավ-արևելքից (գմբեթի վերակազմությունը Ն. Տոկարսկու):

Ծայրերը ազուցվում էին թաղի առաջին շարքի մեջ: Ծիհնարարական աշխատանքի ավարտից հետո խորշերը ծածկվում էին նույն չափի քարերով: Դրանք այժմ պարզ երևում են տաճարի ներսում: Նման առաջադեմ աշխատանքանակը փայտանյութի զգալի տնտեսում էր տալիս¹:

Արուճի տաճարի քիվերի հյուսածո մշակումը շատ մոտ է Զվարթնոցին, և նման է Եղվարդի և Զորավարի, Արթիկի, Սիսիանի ու Թալինի եկեղեցիների քիվերին: Արուճում բազմազան են պատուհանների պսակների զարդաքանդակները: Դրանք սովորաբար նման են VII դարի երկրորդ կեսի եկեղեցիների և Զվարթնոցի տաճարի պատուհանների պսակների զարդաքանդակներին²: Պետք է նշել, որ պատուհանները (ուտտի և նրանց պսակները) Արուճի տաճարի արտաքին տեսքի ու հարդարաբանի կազմակերպման գլխավոր գործոններից մեկն են հանդիսանում, մանավանդ որ պատուհաններն այստեղ շատ ընդարձակ են և բավական մեծ թիվ են կազմում³: Տաճարի հյուսիսային և հարավային ճակատների վրա կան 10-ական պատու-

¹ Н. Токарский, նույն տեղը, էջ 178:

² Н. Токарский, նույն տեղը, էջ 155—162:

³ Արուճի տաճարի առաջին նկարագրողներից մեկը՝ Հովհ. Ծախաթունյանը կառույցի պատուհանների մասին գրում է. «և որպես ինձ թո՛ւ՛ այս առաջին շինումս յԱրարատ նահանգի ի մասին պովճառութեան ընդարձակ լուսամտից»: Հովհ. Ծախաթունյան, նույն տեղը, էջ 79:

հանճեր (յոթական մեծ և երեքական փոքր), արևելյան կողմում՝ դրանք հինգն են (3 մեծ և 2 փոքր), արևմտյան ճակատին՝ չորսը (2 մեծ, 2 փոքր): Այսինքն՝ բոլոր սրատերին 29 պատուհան կա, որոնցից՝ 19 մեծ և 10 փոքր: Սրանց պետք է ավելացնել նաև ընկած գմբեթի թմբուկի 12 պատուհանները (ընդհանուր թիվը՝ 41)¹, ինչպես և երեք մեծ դռները, որոնք բոլորը միասին հրաշալի կերպով ապահովել են տաճարի ներքին լուսավորվածությունը ցերեկվա բոլոր ժամերին: Նման առատ լույսը տաճարը կառուցող ճարտարապետին պետք էր նախ և առաջ որմնանկարի դիտման միջավայրն ըստ ամենայնի լուսավորելու համար, սակայն նա կարողացել է բաղմամբով պատուհաններն այնպես տեղաբաշխել, որ դրանք դիտարժան լինեն նաև արտաքինից: Պետք է նշել, որ Արուճի տաճարի արտաքին հարդարանքում, շնորհիվ քարի զարդափորագրության առավել զուսպ կիրառման և պատուհանների սլացիկ շարքերի, ընկալման առումով շեշտը դրված է կառույցի ազդու ծավալային և հատկապես կոթողային՝ մոնումենտալ տպավորության ստեղծման վրա: Տաճարի ճակատներից ամենահանդիսավորը արևելյանն է: Այստեղ արված են երկու վերասլաց, եռանկյունաձև՝ հաշկական կոշվող խորշեր, որոնց մեջ դեպի ավագ խորան ուղղված երկու պատուհաններ կան: Խորշերի միջև կա ևս մեկ պատուհան, որը բացվում է ավագ խորանի ճիշտ կենտրոնում: Արևելյան ճակատի այս երեք մեծ պատուհաններն էլ զարդարված են իրար միացած պսակներով, իսկ նրանցից և խորշերից վեր անցնում է եռակամար զարդապսակի մեկ այլ գոտի, որն ամբողջացնում է արևելյան ճակատի հարդարանքը, ընդգծում նրա միասնությունը: Հավանաբար սկզբնապես տաճարի արևելյան կողմում հրապարակ է եղել, պատահական չէ, որ հենց այս մասում է տեղադրված շինարարական արձանագրության քարը:

Այսպիսով, լինելով ժամանակի ճարտարապետական պահանջների կրող, Արուճի տաճարը հանդիսանում է Պողոսի հորինվածքի կառուցվածքային և ներքին ու արտաքին հարդարանքի նորությունն արտացոլող տարբերակը: Եվ էթե գմբեթավոր դահլիճների տիպի առաջացումը հայ ճարտարապետության զարգացման արդյունքներից մեկն է՝ նրա դասական շրջ-

¹ Պողոսիում պատուհանների թիվն անհամեմատ փոքր է եղել: Դա պայմանավորված է նախ այդ եկեղեցու համեմատաբար փոքր չափերով (13,73×29,90 մ), սակայն Արուճում պատուհանների բազմաքանակությունը պատճառաբանվում է ոչ միայն տաճարի ավելի մեծ չափերով, այլ նաև ճարտարապետի մտահղացմամբ:

ջանում, ապա Արուճի տաճարը այդ տիպի ստալեյ կատարված գործված օրինակներից է հայ ճարտարապետության մեջ:

Իր բազմադարյան գոյության ընթացքում Արուճի տաճարը բազմաթիվ երկրաշարժեր ու զանազան ավերածություններ է տարել, որոնք, իհարկե, անհետևանք չեն անցել: Երկրաշարժի զոհ է դարձել տաճարի հսկայական գմբեթը¹: Մինչև օրս շինության արևմտյան պատի հյուսիսային մասում երկվում է առատադից մինչև գետին հասնող մի ձեղք, որը ևս երկրաշարժի հետևանք է: Տաճարը բազմիցս նորոգումների է ենթարկվել: Առաջինը կատարվել է 973 թվականին ոմն Գորամի կողմից: Նորոգվել է հյուսիսային պատի արևմտյան կողմի վերևի մասը, ուր և պատի մեջ է ագուցվել նորոգման մասին վկայող արձանագրությամբ խաչքար: Միջնադարում տաճարի հաջորդ վերանորոգումը կատարել է Խաչատուր վարդապետը XV դարի սկզբներին: Վերջինս արձանագրության մեջ նշում է, որ նորոգել է եկեղեցին («նորոգեցի գեկեղեցիս»), բայց թե կոնկրետ ինչ աշխատանք է կատարել չգիտենք (արձանագրության քարը գտնվել է տաճարի մոտակայքում):

XIX դարում, ինչպես և մինչև մեր դարի կեսերը, տաճարը բավական ավերակ վիճակում էր: Բացի գմբեթի բացակայությունից, տեղ-տեղ կիսաքանդ վիճակում էին հարավային պատն ու ծածկը, փակված էին դռներն ու լուսամուտների մի մասը, արևելյան պատին կից բրգաձև հավելված էր կառուցված: 1870 թ. լինելով Արուճում, Ա. Մխիթարյանը տաճարի անմխիթար վիճակի մասին գրում է. «Կաթողիկէն խոնարհեալ է իսպառ. վասն այսորիկ ցկէս բարձրութեան դրանցն լցեալ է եկեղեցին բարամբք և կրովք աւերանաց...»²: Բացի քար ու կրից, տաճարի ներսը լցված է եղել գոմաղբի հաստ շերտով, որը կուտակվել էր տեղի մահմեդական բնակչության կողմից տևական ժամանակ եկեղեցին անասնագոմ դարձնելու հետևանքով³:

Արուճի տաճարը հիմնավոր վերանորոգումների է ենթարկվել սովետական իշխանության տարիներին:

¹ Գմբեթը հավանաբար ընկել է 970—973 թթ. ժամանակահատվածում տեղի ունեցած հովվու երկրաշարժի ժամանակ, երբ կործանվել է Զվարթնոցի տաճարը: Տե՛ս С. Пирюзян. А. Матвеевоян. Хрэм Звартноц: причины и время разрушения. Фрунзе-Бишкек, 1984, № 3, է. 189—194:

² Ա. Մխիթարյան, նույն տեղը, էջ 35:

³ Ա. Մխիթարյանը գրում է. «... ներկայ մահմետական բնակիչք... ի ներքս (տաճարի Կ. Մ.) մակաղեն զխաշինս ի ձմերան...» նույն տեղը: Երկար ժամանակ կուտակված գոմաղբը քայքայել է տաճարի ներքին պատերի ստորին շարքերի քարերը: Դա շատ պարզ երևում է մինչև օրս:

1946 թ. նորոգվել է տաճարի հարավային -պատի արևմտյան հատվածը և արևմտյան պատի հարավային մասը: Փլատակներից մաքրվել են կառույցի արևելյան և հարավային պատերը: Վերանորոգվել են քիվերը և քանդված մասերում տանիքը ծածկվել է կղմինդրով (նորոգման նախագծի հեղինակ և աշխատանքների մասնագետ ղեկավար՝ Ա. Բալասանյան):

1958—59 թթ. ամրացվել է տաճարի արևմտյան խաչաթևի թաղը՝ երկաթբետոնյա ծածկույթով: Տեղ-տեղ որմնաստիճանները, երեսպատերը վերանորոգվել են նոր քարերով (որմնադիրների բրիգադավար Մ. Մենեջյան, մասնագետ ղեկավար՝ Ա. Հարությունյան): 1964 թ. հուշարձանի շրջապատը մաքրվել է հողակույտերից և շինադրից, կատարվել են մասնակի նորոգումներ (աշխատանքների բրիգադավար՝ Մ. Մելքոնյան, մասնագետ ղեկավարներ՝ Յու. Թամանյան, Ա. Հարությունյան)¹:

Պետական հոգատարության շնորհիվ այժմ Արուճի տաճարը իր գեղեցկությամբ, ձևերի ներդաշնակ միասնությամբ, վեհաշուք ներքին տարածությանը դիտողին է ներկայացնում հայ միջնադարի շինարար ոգու հեռավոր արձագանքը, ստիպում ակնածել երբեմնի բազմահմուտ վարպետների ստեղծագործ աշխատանքին, որի ծնունդն է հենց ինքը՝ դարերից եկող և դեպի դարերը գնացող այս տաճարը:

Բ. Որմնակարը

Արուճի տաճարի հայ արվեստի պատմության մեջ ունեցած կարևոր դերը կրկնապատկվում է շնորհիվ նրա որմնակարի: Վերջինս հանդիսանում է հայ վաղ միջնադարյան մոնումենտալ գեղանկարչության ամենանշանավոր հուշարձաններից մեկը:

VII դարի հայկական արվեստում որմնակարչությունն այն բնագավառն էր, որը կապված լինելով ճարտարապետության բուռն վերելքի հետ, ունեցավ իր սեփական ծաղկումը: Մեր օրերն հասած Լմբատավանքի ս. Ստեփանոս, Թալինի կաթողիկե, Կոչի ս. Ստեփանոս, Արթիկի, Արուճի և շատ այլ հուշարձանների երբեմնի փառահեղ որմնակարների մնացորդները, իրենց գեղարվեստական որակներով, գունաշարի հարստությամբ ու պատկերագրության բազմազանությամբ, գալիս են հավաստելու, որ VII դարը եղել է հայ գեղանկարչության ինքնատիպ զարգացման մի պատմաշրջան:

Արուճի տաճարի որմնակարներ ունենալու էանգամանքի վրա ուշա-

¹ Տե՛ս Յու. Թամանյան, Քարե տարեգրության վերանորոգումը, Երևան, 1961, էջ 34:

դրություն են դարձրել Ն. Մարո¹ և Լինչը² դեռևս նախորդ դարի վերջերին, սակայն ցավոք ինչպես նրանք, այնպես էլ նրանցից առաջ և հետո տաճար այցելած գիտնականներից ոչ մեկը գոհնե համառոտ նկարագրություն չի արել:

Արուճի որմնանկարի գիտական ուսումնասիրությունը կապվում է հայ միջնադարյան արվեստի պատմության վաստակաշատ երախտավոր Լիդիա Դուրնովոյի անվան հետ, որի կողմից Արուճի որմնանկարի հետազոտությունը սկսվել է դեռ 1945 թ.: Լինելով Հայաստանի կերպարվեստի պետական թանգարանի (այժմ Հայաստանի պետական պատկերասրահ) հին հայ արվեստի բաժնի վարիչ, նա նախաձեռնեց Արուճի որմնանկարի ուսումնասիրության նպատակով կազմակերպված առաջին գիտաբանական արշավը³: Գրանցից հետո Լ. Դուրնովոն նասանկեց և Արուճի որմնանկարի զարդագոտու պատճենահանման աշխատանքներին (1950)⁴: Նրա գրչին է պատկանում բազմամյա հետազոտությունների ծնունդ «Стенная живопись в Аруче»⁵ վերնագրով մեծարժեք հոդվածը (1952 թ.), որն Արուճի որմնանկարը գիտական շրջանառության լայն ոլորտ դուրս բերեց: Լ. Դուրնովոն Արուճի որմնանկարին անդրադարձել է նաև միջնադարյան հայ կերպարվեստին նվիրված իր աշխատություններում⁶: Գիտական մեծ քարեկանոթյալսար կատարված այս ուսումնասիրությունների ընթացքում Լ. Դուրնովոն հաշվառեց, արևելաքրիստոնեական և քրուզանդական համանման հուշարձանների պատկերագրության, ոճերի ու գեղարվեստական ուղղությունների հաստատմանը հատկապես ապացուցեց, որ Արուճի որմնանկարը VII դարի ծնունդ է և ճանաչական կից է հուշարձանին: Ցույց տվեց որմնանկարի կապը հայ հելլենիստական արվեստի հետ, և այն նորը, որն այդ դարի գեղարվեստական մտածելակերպի արդյունք էր: Լ. Դուրնովոն արժեքավորեց Արուճի որմնանկարի գեղարվեստական և պատմամշակութային դերը, գտնելով, որ այն «... նոր

¹ Н. Марр, Армянская церковь... с. 63. Ն. Մարո Արուճում է եղել 1892 թ. հուլիսին: Նա իր օրագրում արել է մի քանի տողից բաղկացած գրառում, որ նշում է «Տաճարը ներսից որմնակարված է...», սակայն ծանոթագրում է, որ այն «հետաքրքիր» հանգամանքը իրենից հետո ճշել է Լինչը:

² Լինչ, Հայաստան, էջ 287:

³ Այդ մասին հաղորդում է եղել Կոմունիստ թերթում.

«Изучение фресок» Коммунист. 14. IX. 1945. (№ 193):

⁴ Հայաստանի պետական պատկերասրահ, կատալոգ, Երևան, 1965, էջ 16: Պատկերասրահում է գտնվում նաև Արուճի որմնանկարի ամբողջական ընթրինակությունը, կատարված 1973 թ. Վ. Բաղդասարյանի, Է. Կորիսմազյանի և Ս. Հովսեփյանի կողմից:

⁵ Л. Дурново, Стенная живопись в Аруче. Стелыкади в ЗУЖ ԳԱ, 1952, № 1:

⁶ Л. Дурново, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, с. 12. Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979, с. 142.

կարևոր էջ է Հայաստանի գեղարվեստական մշակույթի պատմության մեջ...»¹:

Արուճի որմնանկարի հետագա ուսումնասիրության տեսակետից նշանակալից ներդրում են Ն. Քոթանջյանի ուսումնասիրությունները և հատկապես գունալին հանգամանակալից վերլուծությունները²: Այս որմնանկարին անդրադարձել է նաև հայ միջնադարյան արվեստի խոշորագույն գիտակ Ս. Տեր-Ներսեսյանը³: Մատենագիտական, վերլուծական և այլ բնույթի բոլոր տվյալները ցույց են տալիս, որ Արուճի որմնանկարը ժամանակակից է կառույցին⁴: Այսինքն, այն նկարվել է շինարարական աշխատանքների անմիջակա՞ն ավարտից հետո՝ 666 թ.⁵: Ուշագրավ է, որ Ղևոնդ պատմագիրը Գրիգոր Մամիկոնյանի կողմից Արուճի տաճարի կառուցման մասին գրելիս ակնարկում է նաև շքեղ որմնանկարը: Դեռ Լ. Դորնովոն իրավացիորեն նկատել է, որ Ղևոնդի կողմից արված «գեղեցիկ վայելչութեամբ զարդարեալ» արտահայտությունը պետք է որ որմնանկարին վերաբերվի⁶: Իսկապես, վերը նթերցելով «պատմության» նշված հատվածը, համոզվում ենք, որ Ղևոնդը տարբերում և շեշտում է **կառուցելու** և **զարդարելու** գործողությունները: Եթե աայմանականորեն առանձնացնենք նույն նախադասության մեջ պատմիչի շարադրած մտքերը, դա ավելի ակներև կդարձնի ասվածո.

1. «Եւ շինեաց նա տուն աղօթից,

2. ի գաւտն Արագածոյ ոտին ի յաւանն Արուն

3. տաճար փառաց անուան Տեառն՝

4. գեղեցիկ վայելչութեամբ զարդարեալ»:

Արուճի տաճարը չունի հարուստ դեկորատիվ հարդարանք և այնպիսի բարենմանություններ, որոնց մասին ասվեր «զարդարեալ» այն էլ «գեղեցիկ վայելչութեամբ»: Հետևաբար Ղևոնդը վերը բերած հատվածում նկատի ունի որմնանկարը:

Արուճի տաճարը աչքի է ընկնում հսկայածավալ, միասնական և տպավորիչ ներքին տարածությամբ: Այն «զարմացնում է լույսի առատությամբ»⁷ և նրանում «ներքին տարածության միասնականությունը հասցված է առավելագույնի»⁸: Դա հենց այն նպաստավոր միջավայրն էր, որտեղ մեծածա-

¹ Л. Дурново, Стенная живопись в Аруче, с. 66.

² А. Котанджян, Художественный язык аручской росписи и фрески Армении ранне- и средневековья, Ереван, 1978. Цвет в раннесредневековой живописи Армении Ереван, 1978, с. 42—45.

³ S. Der Nersessian, L'art Arménien, Paris, 1977, p. 72—74.

⁴ Л. Дурново, Стенная живопись в Аруче, с. 55—66.

⁵ Չ. Մաթևոսյան, Արուճի տաճարի 666 թ. որմնանկարը, ՀՍՍՀ ԳԱ կրթեր, 1981, № 3, էջ 91:

⁶ Л. Дурново, Стенная живопись в Аруче, с. 55.

⁷ Н. Марр, Նույն տեղը:

⁸ А. Яковсон, նշվ. աշխ., էջ 40:

վալ որմնանկարի հստոնմը կարող էր կատարյալ ներգործման ուժ ունենալ: Եվ Արուճի որմնանկարի հիմնական միտումն էլ կայանում էր նրա (հանդիսավորության ու վեհության մեջ: Բավական է ասել, որ ավագ խորանի գմբեթարդում պատկերված Քրիստոսի կերպարը շուրջ յոթ մետր բարձրություն է ունեցել, իսկ որմնանկարի գունաշարում օգտագործված է եղել նաև ոսկի, որը պատկերների կատարման ազատ եղանակի և վառ լուսավորվածության պայմաններում, հավանորեն, թողել է շլացուցիչ, լուսաճանաչ տպավորություն: Որմնանկարը կոչված էր վեհությամբ ու գեղահրաշ հանդիսավորությանը գերազանցելու դիտողների երևակայությունը և ընդգծելու նրանց ուշադրությունը աստծո աստջ¹: Իսկ միջնադարի մոնումենտալ գեղանկարչությունը ժողովրդական ամենալայն շրջաններից ուղղված արվեստ էր² և նրա ներգործման պահը ժամանակի գաղափարաբանության առումով, թերևս, ամենակարևորն էր: Միևնույն ժամանակ Արուճի որմնանկարի փառահեղությունը պիտի ընդգծեր Գրիգոր Մամիկոնյանի իշխանության ու տիրապետման հաստատուն ու գերակա դերը ամբողջ Հայաստանում:

Արուճի տաճարի բոլոր պատերը ներսից որմնանկարազարդ են եղել, ասկայն այժմ որմնանկարից պահպանված հատվածները միայն ավագ խորանի գմբեթարդում և խորանի հյուսիսային պատի վրա են: Գմբեթարդում ներկայացված է եղել «Օրենք տվող Աստծո» պատկերազրական հորինվածքի և «Համբարձման» տեսարանի համատեղումն հանդիսացող կոմպոզիցիա³: Հայկական վաղ միջնադարյան հուշարձաններից մասն պատկերազրական հորինվածք է ունեցել Արթիկի եկեղեցու VII դարի որմնանկարը⁴, իսկ վրացական արվեստում՝ Ցրոմի տաճարի գմբեթարդի խճանկարը⁵:

Արուճի որմնանկարի կենտրոնում ներկայացված է շքեղազարդ պատվանդանի վրա կանգնած Քրիստոսի մեծադիր պատկերը, որի ձախ ձեռքին ոլորաններով ցած իջնող մազադաթազայար կա: Վերջինս ծածկված է Հովհաննեսի ավետարանից վերցված քաղվածքով (զ. XIV, տուն 21), որի միայն մի մասն է ընթեռնելի. «որ ունի զպատ[ու]իր[անս իմ] եւ [պահէ] զգ[ոտա] նա [է] որ սիրեն [զիս եւ ո]ր սիրեն զ[իս, ս]իրեսց[ի ի հարե իմէ, եւ] եւ [սիրեցից զնա] եւ երեւեցուցից մնա զիս...»:

Այժմ Քրիստոսի պատկերի միայն ստորին մասն է պահպանվել՝ պատվանդանից մինչև ծնկներից մի փոքր վերև: Այս պատկերի ամբողջական վերականգնության փորձ է կատարել Ն. Քոթանջյանը (գծ. 3): Քրիստոսի կեր-

¹ Н. Котанджян, Եզ. աշխ., էջ 49:

² Древнерусское искусство, Монументальная живопись (XI—XVII), М., 1980, с. 7.

³ Л. Дурново, Очерки, с. 142.

⁴ Л. Дурново, Краткая история, с. 12.

⁵ Я. Смирнов Цромская мозаика, Тифлис, 1935, III. Амирашвили, История грузинской монументальной живописи, Сахелгами, 1957, с. 23—30, табл. 5.



8 Արուծի տաճարի գմբեթարդի որմնակարը (վերակազմությունը Ն. Քոթանջյանի)

պարի երկու կողմերում բավականին ազատ տարածություն կա (այժմ ծեփագործի), ուր հավանաբար պատկերված են եղել հրեշտակներ¹: Չի բացառվում, սակայն, որ այդտեղ պատկերված են եղել տաճարի և որմնակարի պատվիրատուներ իշխան Գրիգոր Մամիկոնյանն ու նրա կին Հեղինեն: Առաջին անգամ Լ. Դուրնովոյի կողմից արված այս ենթադրության օգտին է խոսում Քրիստոսի պատկերից աջ զարդագոտուց վերև երևացող կապույտ թանկարժեք քարի պատկերը, որը հավանաբար զարդարել է շքեղ ոտնաման (հրեշտակները պատկերվում էին բոկոտն կամ սանդալներով)²: Որմնակարում իշխանի և իշխանուհու պատկերների առկայության մասին

1 Л. Дурново, Стенная живопись в Аруче, с. 63.

2 Նույն տեղը, էջ 84: Լ. Դուրնովոն իր հետազոտությունները կատարել է 50-ական թվականներին: Դրան հաջորդած ժամանակում ծեփը տեղ-տեղ թափվել է և, դժբախտաբար, անհետացել է նաև կապույտ թանկարժեք քարի պատկերը:

4. Հատված որմնանկարի զարդագոտուց (ըստ Լ. Գորնովայի գծանկարի):

արված ենթադրությունը որքան էլ որ համարձակ է, անհավանական չէ, եթե նկատի ունենանք, որ հայ որմնանկարչության մեջ կան պատվիրատուների պատկերման այլ օրինակներ (Աղթամարի ս. Խաչ, Հաղբատ), անգամ որմնանկարչի ինքնադիմանկար (Անիի ս. Փրկչի եկեղեցի), իսկ մատենագրական աղբյուրները խոսում են բաշկական վաղ միջնադարյան որմնանկարներում և՛ տեղական սրբերի, և՛ իրական մարդկանց պատկերման մասին¹: Էլ չենք ասում, որ հաշտնի են յոթերորդարան կոնստոնական բարձրաքանդակներ, և պատվիրատուների դիմանկաներ՝ մանրանկարված հայերեն հնագույն ձեռագրերից մի քանիսում²:

Արուճի որմնանկարի ամենալավ պահպանված մասը, Քրիստոսի պատկերից ներքև պատվանդանի մոտից անցնող զարդագոտին է (գծ. 4): Վերջինս երիզելով ողջ ավազ խորանը այն կարծես բաժանում է երկու մասի՝ «երկնքի և երկրի»: Խոշոր ականջազարդերով զարդագոտին կատարված է

¹ VII դարի սկզբներին հայ իրականության մեջ ծնվեց Վրթանես Քերթոզի «Յաղագս պատկերամարտից» երկը, Ս. Տեր-Ներսիսյանի, բնորոշմամբ. «...պատկերամարտերի դեմ որևէ լեզվով գրված ամենամին գրությունը»: Վրթանես Քերթոզը հայ վաղմիջնադարյան կերպարվեստի տեսության դավանաբանական և գեղագիտական հիմնավորումը տալու հետ մեկտեղ, արժեքավոր տնդիկություն է նադորում եկեղեցիների որմնանկարներում հայերի քրիստոնեական դարձին վերաբերող պատկերներ նկարելու վերաբերյալ: Հայտնի է նաև, որ երբեմն եկեղեցիներում նկարվում էին բարձրաստիճան հոգևորականների պատկերները: Տե՛ս Սիրարփի Տեր-Ներսեսյան, VII դարի մի երկ նկիրված պատկերների պաշտպանությանը, «Հայ արվեստը միջնադարում» ժողովածու, Երևան, 1975, Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 111, Հ. Քյոսեյան, Վրթանես Քերթոզի «Յաղագս պատկերամարտից» էրկը, «Պատմա-բանասիրական հանդես», 1951, № 2, է. 178—180:

² Ա. Գևորգյան, Հայկական մանրանկարչություն. դիմանկար, Երևան, 1952:



5. Առաքյալների պատկերները (գծանկարը Ն. Քորսնյանի)

հայ հելլենիստական արվեստի ավանդներով և գեղարվեստական մեծ վարպետությամբ: 80 սմ լայնությամբ զարդագոտին ներկաչացնում է ոլորապետույտ փարթամ ականթաթփերից հյուսված զարդաշար, ուր մեկընդմեջ պատկերված են նաև խառողի, ճռան պտուղների, գավաթ, մրգերով լի գամբյուղ:

Զարդագոտուց ներքև, ավագ խորանի երկու կողմի պատերին պատկերված են եղև ձեռքերին գրքեր պահած առաքյալներ: Պահպանվել են միայն նրանցից վեցի պատկերները խորանի հյուսիսային կողմի պատի վրա: Առաքյալներից հինգը պատկերված են դիմաճայաց, իսկ աջից առաջինը՝ երեք քառորդով թեքված է դեպի մյուսները, աջ ձեռքի ուղղորդված շարժումով ասես եզրափակելով շարքը (գծ. 5):

Արունի որմնակարում Քրիստոսի մարգարտագարդ պատվանդանի տակ կատականաչալուն ներկով, երկաթագիր գրչությամբ գրված է «Ստեփանոս...»: Սա որմնակարչի անվան հիշատակությունն է գրված հենց իր ձեռքով: Մակագրությունը շարունակվել է և նկարչի անվանը հաջորդել է ևս մեկ բառ, որը եղծված է: Պահպանված միջնամասի Ա տառից և ՇԱՅ վերջավորությունից՝ կարելի է վերականգնման «Ստեփանոս [նկ]ա[ր]եաց»

¹ Լ. Գորնովոն կարդացել է «ՇԱՅ», տե՛ս Смирновъ жемчужинъ в Аргенте, с. 65, սակայն որմնակարի երկրորդ ընդօրինակության ժամանակ ընթերցելիս հնագրագետները հաստատեցին, որ վերջին տառը «Յ» է, այսինքն՝ «ՇԱՅ»:

տարբերակն առաջարկել, ինչպես այդ արել է Վ. Խեչումյանը¹: Արուճի որմնանկարիչ Ստեփանոսի անվան պամբլանման մեծարժեք վրաստի ինքնին ուշագրավ լինելուց զատ, կարևոր հանգամանք է հայ աշխատի պատմության մեջ ընդհանրապես: Փաստորեն Ստեփանոսը VII դարից հատնի հայ առաջին նկարիչն է, որի անունն ու գործը հասել են մինչև մեր օրերը: Այստեղ հարկ է նաև նշել, որ հավանաբար նույն Ստեփանոսն է նկարագարողել Եղվարդի մոտ Գրիգոր Մամիկոնյանի կառուցած ս. Ջորավար եկեղեցին դարի 70-ական թվականներին: Այստեղի որմնանկարից թեև չնչին հատվածներ են պահպանվել, սակայն հայտնի է, որ եկեղեցին XII—XIII դդ. վերջերսին որմնանկարագարողի էլ է ոմն Հովհաննեսի և Վարդանի կողմից, իսկ սկզբնական որմնանկարը (VII դ.) որոշ աղերսներ ունի Արուճի որմնանկարի հետ²:

Արուճի որմնանկարը կատարողական բարձր վարպետության ստեղծագործություն է: Եթե VII դ. հայկական մյուս հայտնի որմնանկարներում հիմնականում գերակշռում են պատկերազարդման գծային գրաֆիկական տարրերը, ապա Արուճի որմնանկարի կոչորիտը մեծապես խարսխվում է գեղանկարչական հիմքի վրա³:

Որմնանկարում օգտագործված են հարուստ գույներ ու երանգներ, որոնց մեջ (հատկապես գմբեթարդում) գերակշռում է կապտաերկնագույն երանգավորումը: «Արուճի որմնանկարի գունային տոնայնությունը աչքի է ընկնում ներկերի լայն ընտրությամբ: Այդ առումով այն առանձնանում է նշված շրջանի Հայաստանի մոնումենտալ գեղանկարչության մյուս հուշարձաններից»⁴: Ոսկի հիմնականում օգտագործված է նղել Քրիստոսի պատկերում, ենթադրվում է՝ նաև Տիրամոր պատկերում⁵: Վերջինս Արուճի որմնանկարում չի պահպանվել, սակայն ելնելով նման պատկերագրական համակարգի հայտնի այլ հուշարձաններից, Տիրամոր պատկերը պետք է որ տեղ գտած լիներ այս որմնանկարում: Արուճի որմնանկարի գունաշարում ս. Քրոսանջյանը հատկապես շեշտում է կապտաերկնագույն երանգների դերը, որոնք ինտերներին հաղորդել են եթերալույծուն, կարճես ալեխի ընդարձակելով տաճարի ներքին տարածությունը: «Գունային կառուցվածքի բնույթով Արուճի որմնանկարը չունի իր նմանը նշված պատմաշրջանի հայ գեղանկարչության մեջ»⁶:

Անհրաժեշտ է նաև նշել, որ Արուճի որմնանկարի վրա եղած հայերեն

¹ Վ. Խեչումյան, Գիրք գրոց, Երևան, 1978, էջ 241:

² Կ. Մարտոսյան, Եղվարդի ս. Ջորավար եկեղեցին..., էջ 51—52:

³ Н. Котанджян, նշվ. աշխ., էջ 43:

⁴ Նույն տեղը, էջ 42:

⁵ Նույն տեղը, էջ 44:

⁶ Նույն տեղը, էջ 45:

գրությունները ունեն հնագրական մեծ արժեք: Մանավանդ, որ դրանք թվագրվում են կոնկրետ 666 թվականով: Բացի մագաղաթագրարի վրա եղած ավետարանական քաղվածքից և Ստեփանոսի մակագրությունից, որմանակարի զարդագոտու վրա գրված են երկու տառ՝ «Ծ» և «Կ»: Դրանց իմաստը ցայժմ անհասկանալի է, սակայն գրության ձևը հին է և համապատասխանում է հուշարձանի ստեղծման ժամանակին: Այնուամենայնիվ, այս տառերի նշանակության վերաբերյալ կարելի է հետևյալ ենթադրությունն անել՝ Ծ և Կ տառերը տեղադրված են զարդագոտու վրա, ոլորագարդչի աստ մատերում, Քրիստոսի պատվանդանից աջ, այսինքն՝ Ստեփանոսի մակագրությունից աջ: Եթե անտեսենք այս գրությունների միջև եղած տարածությունը, ապա զարդագոտու վրա ստացվում է «**Ստեփանոս [ն]յա[ր]եաց Ծ Կ**»: Վերջին տառերը բնականաբար միտք են արտահայտում, հնարավոր է բառերի սկզբնատառեր են: Եվ եթե այդպես է, տվյալ դեպքում Ծ և Կ տառերին ավելի շատ կհամապատասխանեին «**շինող**»¹ և «**կաթողիկե**» բառերը: Արդյո՞ք Ստեփանոսը, որը նման որմանակար է տեսչեն, նախօրոք չի հատակագծել նաև Արուճի տաճարը: Իր անունը, որպես ճարտարապետ, նա չէր կարող գրել շինարարական արձանագրության մեջ կամ մեկ այլ տեղ, իսկ տվյալ իրավիճակում գուցե փորձել է ծածկագրել իր միտքը՝ «**Ստեփանոս [ն]յա[ր]եաց, շ[ինող] կ[աթողիկեսի]**»: Արուճի տաճարի ճարտարապետությանն անդրադարձող շատ ուսումնասիրողներ են նշել նրա ներքին տարածության կոտ միասնության, լավ լուսավորվածության, ինտերյերի ու որմանակարի կատարյալ ներդաշնակության և հանդիսավոր ամբողջականության մասին: Եվ արդյո՞ք դա Ստեփանոսի ոչ միայն որմանակարիչ, այլև ճարտարապետ լինելու հանգամանքի արդյունքը չէ: Մյուս կողմից, հաշտնի է, որ միջնադարյան հայ արվեստագետներից շատերը հավասարապես ուժեղ էին արվեստի տարբեր ասպարեզներում, այսինքն՝ իրոք բազմաշնորհ էին, և Ստեփանոսի նկարիչ ու ճարտարապետ լինելու հնարավորությունը ըստ էության ոչ թե արտակարգ, այլ սովորական կարող է համարվել հայ միջնադարյան համար:

Ինչպես երևում է Մովսես Կաղանկատվացու «Պատմության» մի հատվածից, Արուճի տաճարը մեծ տպավորություն է թողել ժամանակակիցների վրա: Պատմիչը նկարագրում է, թե ինչպես Աղվանքի իշխան Ջվանշիրը այցելում է Արուճ և հանդիսավորությամբ ընդունվում Գրիգոր Մամիկոնյանի ու Անաստաս կաթողիկոսի կողմից: Այդ ժամանակ ս. Գրիգոր տաճարն արդեն կառուցված էր և բնականաբար Ջվանշիրը տեսել է այն որմանակարներիով զարդարված: Վերադառնալով իր երկիրը, Կաղանկատվացու վկայու-

¹ Ծինող—վաղ միջնադարում նշանակել է ճարտարապետ: Հենց նշանավոր կաթողիկոս Ներսես Ծինողի մականունն էլ ոչ միայն նրա շինարարական գործունեության, այլև նախարարական մտահղացումների ու իրագործումների արդյունք է:

թյամբ, Ջվանշիրն անմիջապես գնում է Գարդմանում իր կառուցած տաճարը և թանկագին նյութեր օգտագործում այն զարդարելու համար: Մեծ ծախսեր անելով նկարիչներ է գործի դնում և գմբեթից մինչև դռան բարավորները նկարազարդել տալիս, իսկ տաճարի դուռը արծաթապատում և հրամայում է քանդակազարդել¹: Ջվանշիրը իր տաճարը կառուցել էր ավելի վաղ, սակայն չէր որմնանկարազարդել, չէր դրել նաև արծաթե քանդակազարդ դուռ: Այդ ամենը նա անում է Արուճից վերադառնալուց հետո: Նշանակում է, Աղվանքի տերը Գրիգոր Մամիկոնյանի կառուցած տաճարում տեսել էր աղայիսի կամ նման մի բան: Իսկ թե ինչպիսի տպավորություն էր թողել Արուճի շքեղազարդ տաճարը Ջվանշիրի վրա, երևում է պատմիչի այն խոսքից, թե իշխանը իր կառուցած տաճարը զարդարել է տալիս վերադառնալուց հետո «իսկ և իսկ»²:

Այժմ էլ Արուճի ս. Գրիգոր տաճարի որմնանկարը գեղագիտական հանույք է պատճառում դիտողներին, իր երբեմնի լուսապայծառ շքնդրության հզոր արձագանքով: Այն հայ վաղմիջնադարյան արվեստի ամենավառ էջերից մեկն է, ստեղծված տաղանդավոր արվեստագետի՝ Ստեփանոս Ակարչի ձեռքով:

Գ. Արձանագրությունները

Արուճի ս. Գրիգոր տաճարի պատերին պահպանվել են մի շարք վիսուճիկ արձանագրություններ, որոնք կարևոր տեղեկություններ են պարունակում Արուճի պատմության վերաբերյալ և ուշագրավ են հայ միջնադարյան սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության առումով: Այդ արձանագրություններն ունեն նաև հնագրական արժեք³:

Արուճի տաճարի արձանագրություններից հնագույնը շինարարական արձանագրությունն է, որը բազմիցս հրատարակվել ու քննության նյութ է դարձել շատ հետազոտողների համար: Սույն արձանագրությունը թվագրման մեջ եղած որոշ անճշտության հետևանքով տարբեր սեկնաբանությունների տեղիք է տվել, և ավելի հանգամանալից ծանոթագրման կարիք ունի:

Արձանագրությունը գտնվում է տաճարի արևելյան պատի կենտրոնական մասում, գետնից 2,5 մ բարձր, շրջանակավոր միակտոր քարի վրա

¹ Կաղանկատուացի, էջ 196:

² Նույն տեղը:

³ Արուճի արձանագրություններից երկուսը տեղ են գտել Գ. Հովսեփյանի հնագրական քարտեզում (Գ. Հովսեփյան, Գրչության արվեստը հին ձևից մեջ, մասն Գ, Քարտեզ հայ հնագրության, Վաղարշապատ, 1918, էջ 9, 11):

(1,27×0,63 մ): Այս բավական լավ պահպանված արձանագրությունը առաջին անգամ հրատարակել է Մեկրոպ Տեր-Մովսիսյանը 1905 թ.:

Բուն արձանագրությունը հետևյալն է.

Ի: ԵԻ: (Թ): ԱՄԻ ԿՈՍԱՆՏՆՍԻ ՄԱՐԵ-
ՐԻ ԱՄՍՈՑ, ՈՐ ԱՌ[Ր] Ժ ԵԻ Ե ԷԻՄՆ-
ԱՐԿԵՑԱԻ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԵՍ
Ի ԶԵՌՆ ԳՈՒԳՈՒԻ ՄԱՄԻԿՈՆԵՍԻ
ՀԱՅՈՒՑ ԻՇԽԱՆԻ ԵԻ ՀԵՂԻՆԷ-
Ի ՆՈՐԻՆ ԶՈՒԳԱԿԸՑԻ,
Ի ԲԱՐԵՆԱԻՍՈՒԹԻՒՆ ԾԻՆԱԻ-
ՂԱՑ ԶՍԱՑ

Արձանագրության սկզբում նշված է, որ տաճարի հիմնարկությունը տեղի է ունեցել բյուզանդական Կոստանդին (Կոստանդ Բ 641—668) կայսեր կառավարման 29-րդ տարում, մինչդեռ հայտնի է, որ վերջինս 27 տարի է միայն կառավարել: Ժամանակագրական այս թյուրիմացության կապակցությամբ տարբեր տարիների մի շարք հեղինակավոր գիտնականների կատարած զանազան ենթադրությունները ոչ միայն չեն պարզել հարցը, այլ, թերևս, ավելի են խճճել այն: Ահավասիկ հաշտմված տեսակետներից մի քանիսը: Ն. Մառը գտնում էր, որ արձանագրության մեջ նշված Կոստանդինի 29-րդ տարին (Ի եւ Թ) պետք է ընդունել 671 թվականը, թեև հիշյալ կայսրը կառավարել է մինչև 668 թ.: Դա Ն. Մառը բացատրում էր նրանով, որ Հայաստանում կարող էին չիմանալ, թե բյուզանդական զահին արդեն երեք տարի ուրիշ կայսր էր նստած³: Այս կարծիքն է պաշտպանել Վ. Հարությունյանը, ավելացնելով, որ Կոստանդ Բ-ի և նրան հաջորդած Կոստանդին IV Պագոնատի անունների մերժությունն է նաև մասամբ նման շփոթմունքի պատճառ հանդիսացել⁴:

Հ. Օրբելին մերժում է Ն. Մառի տեսակետը, գտնելով, որ Հայաստանում չէին կարող երկու տարի չիմանալ բյուզանդական կայսեր փոփոխության մա-

¹ Месроп Варданет, Энциклопедия древнейших армянских церквей. СПб. 1905. с. 45.
Արձանագրությունը ուշ է հայտնաբերվել և համեմատաբար լավ է պահպանված, որով հետև ժի բաժնի հարյուրամյակ գտնվել է հողի շերտի տակ, բանի որ տաճարի արևելյան կողմում այն որպես ամրություն զգտագործելու նպատակով բուրգ են կառուցել (XVI—XVII դդ.), որը մինչև մեր դարակիզբը ծածկում էր տաճարի արևելյան պատի մի մասն ու արձանագրությունը:

² Արձանագրության վերջում, նրա բուն գրից տարբերվող գրով հետագայում ավելացված է. «Ողորմես ՋԱ ԱՄ»:

³ Н. Марр, Армянская церковь в Аруче, с. 61—64.

⁴ В Арутюнян, По поводу датировки... с. 9.

սին, «րնդ որում բռնի փոփոխության»: Այնուհետև Հ. Օրբելին, անձամբ տեսած շիկելով արձանագրությունը և չկասկածելով, որ Արունի տաճարը կառուցված է VII դարում Գրիգոր Մամիկոնյանի կողմից, արձանագրության տեքստի քննությունից ելնելով, ենթադրում է, որ այն ոչ թե բնօրինակ է, այլ XI դարում կատարված արտագրություն, որի հետևանքով էլ թվագրման նրան վրիպում է թույլ տրվել: Կառչելով Հ. Օրբելու այս ենթադրությունից, Գ. Չուբինաշվիլին ջանում է ապացուցել, որ ոչ քան միայն արձանագրությունը, այլև հենց տաճարն է X դարի կառույց²: Յ. Ստրժիգովսկին ևս անդրադառնալով Արունի արձանագրությանը անհավանական է համարում Ն. Մառի կարծիքը, ժխտելով նաև Հ. Օրբելու ենթադրությունը՝ արձանագրության բնօրինակ շիկելու վերաբերյալ: Ստրժիգովսկին իր հերթին նոր տեսանկյունով է մոտենում հարցին. «... գուցե ոչ թե Կոստանդի մահվան ժամանակն են շիտթել, այլ նրա կառավարման առաջին տարին: Ամեն դեպքում այդ արձանագրությունը գրված է Կոստանդի կյանքի վերջին շրջանում և գուցե համընկնում է նրա մահվան տարուն»³: Ստրժիգովսկին շփոթության պատճառ է համարում բյուզանդական և հայկական թվականների տարբերությունը:

Գ. Հովսեփյանը արձանագրության թվականը համարում է 668 թ.⁴: Վիմական տարեգրում արձանագրությունը բերված է 670 թ. տակ⁵: Ենթադրվել է նաև, որ արձանագրության քսան և իննը (Ի եւ Թ) թվականի փոխարեն քսան և հինգ (Ի եւ Ե) պետք է եղած լիներ⁶: Հ. Եղիազարյանը արձանագրության թվականի մեջ ավելորդ է համարում «եւ»-ը («Ի Թ ամին...»⁷: Ըստ նրա տաճարը կառուցվել է 676 թ.:

Ա. Մանուչարյանը նշում է Կոստանդ և Կոստանդին անունների մեկ այլ հնարավոր շփոթության տարբերակ, նկատի ունենալով Հերակլ կայսեր որդի Կոստանդինին, որը հոր կյանքի վերջին շրջանում գահակալում էր նրա հետ մեկտեղ: Արձանագրության թվական է համարում 667 թ.⁸: Ելնելով սույն արձանագրությունից Արունի տաճարի շինարարության ճամանակը համար-

¹ И. Орбели, Избранные труды. Ереван, 1963. с. 402. 221—223.

² Г. Чубинашвили, Рассуждения по армянской архитектуре. Тбилиси, 1967. с. 116.

³ J. Strzygowski, *ibid.* աշխ., էջ 50:

⁴ Գ. Հովսեփյան, Քարտեզ հայ հնագրության, էջ 9:

⁵ Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 2:

⁶ Б. Аракелян, В. Арутюнян, С. Мнацаканян, О некоторых вопросах истории армянской архитектуры. Ереван, 1963. с. 32.

⁷ Հ. Եղիազարյան, Գրիգոր Մամիկոնյան իշխանի կառուցած տաճարը և պալատը Թալիշ գյուղում և վերջինիս պեղումները, «Էջմիածին», 1955, № 2:

⁸ Ա. Մանուչարյան, Քննություն Հայաստանի IV—XI դարերի շինարարական վկայագրերի, Երևան, 1977, էջ 100—103:

վել է VII դարի 70—80-ական թվականները¹: Ա. Աբրահամյանը արձանագրությունը թվագրել է 639 թ.²

Ինչպես տեսնում ենք Արուճի շինարարական արձանագրության թվագրման տարբերությունը տարիներից հասնում է տասնամյակների, անգամ դարերի, կասկածի տակ է առնվում արձանագրության բնագիր լինելը, փորագրող վարպետի սխալը մեկնաբանվում է տարբեր կերպ և այլն: Ցավոք, պետք է նշել, որ ո՛չ Մառն ու Օրբելին, ո՛չ Ստրժիգովսկին, ինչպե՛ս և Չուբինաշվիլին տեղում չեն գննել այդ արձանագրությունը: Մինչդեռ հենց արձանագրության ուշադիր գննումն է, որ մեր կարծիքով վերջ է դնում եղած տարակարծություններին:

1971 թ. Ա. Ծաֆինյանը հրատարակեց «Արուճի VII դարի շինարարական արձանագրության վերծանման առթիվ» վերնագրով³ հոդվածը, ուր առաջին անգամ ուշադրություն է հրավիրում արձանագրության թվագրման մեջ եղած մի հետաքրքրական հանգամանքի վրա: Այնուհեղ Կոստանդի կառավարման 29-րդ տարվա (Ի եւ Թ) Թ (9) թվականը վերցված է փակագծերի մեջ (Թ): Այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ կայսեր 29-րդ տարվա Թ (9) թվականի սխալ լինելը նկատվել է դեռ արձանագրության գրության ժամանակ:

Ա. Ծաֆինյանը գրում է, որ արձանագրության «գրչի սխալն ակնհայտ է, որի համար էլ նա «Ի եւ Թ ամի» թվանշանի «Թ»-ն առել է փակագծի մեջ (Թ), որը բավական պարզ նկատվում է տեղում և լուսանկարում: Որքան էլ տարօրինակ թվա, այդպիսով արձանագրության գրիչն իր սխալն ուղղել է»⁴:

Այնուհետև հեղինակը փորձում է որոշել, թե ինչ պետք է լիներ Թ (9) թվականի փոխարեն, և գրում է. «Հարկավ սխալ է, «Ի» և «Թ» (29) թվանշանի «Թ» (9) միավորը, որը հավանաբար պետք է լիներ «Ի» և «Դ» (24) և առաջացած լիներ «Դ» և «Թ» տառերի հնչյունային և կամ ինչպես Հ. Օրբելին է ենթադրում հինգ և ինը թվերի շփոթությունից»⁵: Կոստանդ կայսեր 24-րդ տարին «Ի եւ Դ» 665 թվականն է: Ապա բերելով Կիրակոս Գանձակեցու վկայությունը տաճարը Անաստասի աթոռակալության հինգերորդ տարում կառուցվելու մասին, Ա. Ծաֆինյանը հանգում է եզրակացության, որ

¹ Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, էջ 171:

² Ա. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959, էջ 80:

³ ՀՍՄՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.» 1971, № 1, էջ 74—84: Հողվածում հեղինակը նախ հանգամանորեն կանգ է առնում Հ. Օրբելու փաստարկների վրա, որոնցով վաստակաշատ գիտնականը փորձում էր Արուճի շինարարական արձանագրությունը հետազան արտագրություն համարել: Ա. Ծաֆինյանը համոզիչ կերպով ապացուցում է, որ արձանագրությունը թե՛ հնագրությամբ, թե՛ այլ առումներով ժամանակակից է կառույցին:

⁴ Նույն տեղը, էջ 82:

⁵ Ա. Ծաֆինյան, նույն տեղը, էջ 82, II. Орбели. Избранные труды, էջ 423:

տաճարը կառուցվել է 665/666 թ.¹: Սակայն նա Արուճի արձանագրության մեջ «հիմնարկեցա» արտահայտությունը մեկնաբանում է որպես շինարարության ավարտ, որը ճիշտ չէ: Ա. Ծահիճյանը գրում է. «ի տարբերություն Բագարանի և Բագավանի... արձանագրությունների Արուճի արձանագրության մեջ նշված «հիմնարկեցա»-ը պետք է հասկանալ ոչ միայն հիմքը դրնելու «հուշարձանը հիմնադրելու, այլ տաճարի կառուցումն ավարտելու իմաստով»²: Տողատակում հեղինակը նշում է, որ «Հիմնարկելը» այդ իմաստով է օգտագործվել Գոմորի և Ալայազի հուշարձանների վիմագրերում, հղելով «Իհիվան հայ վիմագրության» երրորդ հատորի համապատասխան էջերը (108, 193): Սակայն հիշյալ տեղում, ինչպես և Տեկորի, Բագարանի, Բագավանի արձանագրություններում և այլուր «հիմնարկեցա»-ը վերաբերում է եկեղեցիների հիմնադրության արարողությանը, «հիմնարկութիւն եկեղեցոց», որը կատարվում էր հատուկ կանոններով³:

Ալայազի Չորաց տաճարի և Գոմոր գյուղի խաչքար մատուռի XIII—XIV դդ. վերաշերտը արձանագրություններից մեկում կարդում ենք «Հիմնարկեալ շինեցի եկեղեցիս»⁴, այսինքն՝ հիմքից շինեցի, մյուս դեպքում (խաչքարի վրա) «հիմնարկեցաք գեկեղեցիս եւ զճամատունս շինեցաք եւ կանգնեցաք զխաչս»⁵: Այստեղ խոսքը վերաբերում է խաչքարի կանգնեցմանը՝ «շինեցաք կանգնեցաք զխաչս», որը տեղի է ունեցել եկեղեցու և ժամատան հիմնարկության հետ միաժամանակ: Մինչ ադ, Արուճի տաճարից ընդամենը 22 տարի առաջ կառուցված Բագավանի եկեղեցու արձանագրության սկզբում ասվում է, որ այն հիմնադրվել է Հերակ կայսեր 21-րդ տարում՝ 631 թ. «Հիմնարկի սրբո եկեղեցոյս...», իսկ արձանագրության վերջում նշվում է, որ շինարարությունը ավարտվել է նույն կայսեր 29-րդ տարում՝ 639 թ.: Բագարանի եկեղեցու արձանագրության մեջ ևս հանդիպում ենք երկու թվականի՝ 624 թ. «... ձգեաց զհիմունս...» և 631 թ. «կատարեաց սուրբ եկեղեցիս»⁶: Տեկորի տաճարի արձանագրության մեջ հանդիպում է «... եւ հիմնարկեցաւ տեղիս, ի ձեռն ...»⁷ արտահայտությունը, որը հաստատում է, որ հիմնարկության գործողության տեղը պատրաստի կառուցը չէ⁸:

¹ Նույն տեղը, էջ 83:

² Նույն տեղը էջ 81:

³ Մատենադարան, ձեռ. № 6326, էջ 8ա, տե՛ս նաև Ս. Բարխուդարյան, Միջնադարան հայ ճարտարապետներ և բարոքոծ վարպետներ, Երևան, 1963, էջ 218—219:

⁴ Իհիվան հայ վիմագրության, հ. 3, Երևան, 1967, էջ 108:

⁵ Նույն տեղը, էջ 193:

⁶ Ս. Մանուչարյան, ԶԵՎ. աշխ., էջ 59, 70:

⁷ Գ. Հովսեփյան, Զարտեզ հայ հնագրության, էջ 5:

⁸ Հայ պատմիչների մտո և երբեմն հանդիպող «հիմնարկութիւն» բառը, հենց հիմք դնել է նշանակում: Սամվել Անեցին Անիի կաթողիկեի մասին գրում է, որ Սմբատ Բագար-

Արուճում ևս «հիմնարկեցաւ սուրբ կաթողիկէս...» վերաբերում է տաճարի հիմնադրությանը: Ընդ որում՝ այստեղ իշխանական շքեղ տաճարի հիմնարկության պահը այնքան հանդիսավոր է եղել, որ արձանագրության մեջ նշվել է ոչ միայն նրա տարին, այլև ամիսն ու օրը:

Վերադառնալով արձանագրության թվականի սխալին, պետք է նկատենք, որ այն (Ի եւ Թ) չպետք է ուղղվի «Ի եւ Դ» (24) ձևով: Նախ նման շփոթությունը անհավանական է, որովհետև 1) այդ երկու տառերը գծագրական պատկերներով բոլորովին նման չեն իրար, ուրեմն տեսողական շփոթությունը գրեթե բացառվում է, 2) անուններով մեկը «Թո» է, մյուսը՝ «Դա»: Պետք է նկատի ունենալ նաև որ՝ 3) հայոց գրերը, որպես թվականներ օգտագործվելիս, ներկայացվել են թվային արժեքներով, իսկ «քսան և ինը» «քսան և չորսի» հետ չի շփոթվի:

Կարծում ենք, իրողությունն այն է, որ իրոք, գործ ունենք փորագրող վարպետի սխալի հետ, որը հավանաբար, շփոթելով «քսան և ինը» ու «քրսան և մինը» «Թ»-ն (9) վերցրել է փակագծերի մեջ: Իսկ սխալը ջնջումով կամ այլ կերպ չի ուղղվել, որովհետև արձանագրությունը սեղմ է փորագրված, և եթե անգամ «Թ»-ն բոլորովին անտեսենք, ապա միայն ամիսների տարբերություն պետք է առաջանա հիմնադրման թվականի մեջ: Պետք է նաև նկատի ունենալ, որ այդ կարգի և նման վրիպումները եզակի չեն վաղ միջնադարյան հայերեն արձանագրությունների մեջ ընդհանրապես¹: Կոստանդ կայսեր «Ի եւ Ա» (21) տարին 662 թվականն է: Ուրեմն Արուճի տաճարի հիմնադրումը եղել է 662 թ. «մարտի ամսի Ժ և Ե»-ին, որը մարտի 25-ն է²:

Սակայն հարկ է, որ այն տպավորությունը չստացվի, թե Արուճի տաճարի հիմնադրության թվականը ճշտվում է արձանագրության «Ի եւ Թ» թվականի մոտավոր ուղղմամբ, և հենվում է սուկ ենթադրության վրա: Այդ հաստատվում է նաև անուղղակի տվյալներով և տրամաբանորեն բխում է հայտնի այլ փաստերից: Մասնավորապես, անկախ արձանագրությունից, ըստ պատմիչների բազմաթիվ հիշատակությունների հայտնի է, որ Արուճի տաճարը կառուցվել է հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի կողմից, Անաստաս կաթողիկոսի օրոք: Հետևաբար տաճարի շինարարությունը տեղի է ունեցել 661 թվականից հետո (Գրիգորի իշխանության առաջին տարին), մինչև

տունին «Հիմնարկեաց և զկաթողիկէն... գոր ոչ կարաց ասարտել վասն կանխածամ մահու կենաց իրոյ»—Մամիկ Անեցի, էջ 103: Ոչ բոլոր դեպքերում է շինարարական արձանագրություններում նշվել էկեղեցիների հիմնարկերի հանգամանքը: Հաճախ կառուցողները բավարարվել են «Ծիմնի» բառով (Հոփսիմն, Թպիցն, և այլն), որ խոսքը կառույցի ավարտին է վերաբերում:

¹ Ա. Շահինյան, նույն տեղը, էջ 83:

² Կ. Մաթևոսյան, Արուճի տաճարի 666 թ. որմնանկարը, էջ 90:

667 թ. (Անաստասի մահվան տարին) րկված ժամանակահատվածում՝ կոնկրետ այդ վեց տարիների ընթացքում: Բարեբախտաբար, ինչպես վերո տեսանք, Սամվել Անեցին և Կիրակոս Գանձակեցին նշում են տաճարի շինարարության ավարտի ժամանակը՝ Անաստասի հինգերորդ տարին՝ 666 թ.: Իսկ հիմնարկության տարեթիվը պահպանվել է շինարարական արձանագրության մեջ: Կոստանդ կայսեր «Ի» 20-րդ տարին 661 թվականն է, բայց քանի որ արձանագրության մեջ 20-ին հաջորդել է մեկ միավոր «Ի եւ...», այսպ «Ա»-ն (1) դա 662 թվականն է, «Բ»-ն (2)՝ 663, «Գ»-ն (3)՝ 664, և այլն: Կարծում ենք այս թվերից տաճարի հիմնադրման թվականին ավելի համապատասխանում է առաջինը՝ 662 թ., քանի որ նման կառույցի ստեղծման համար չորս տարին (662—666) արդեն իսկ բավական կարճ ժամանակ է: Սակայն շինարարության ընթացքի նման արագությունը անհավանական չէ, եթե նկատի ունենանք, որ այն կատարվում էր հայոց իշխանի նորահաստատ աթոռանիստում: Մյուս կողմից Հովհաննես Դրասխանակերտցին ուղղակիորեն նշում է, որ Գրիգոր Մամիկոնյանը արագորեն է կառուցել տաճարը. «շինէ զնա ստիպով...»¹:

Այսպիսով, Արուծի տաճարի շինարարական արձանագրությունը վկայում է, որ տաճարի կառուցումը սկսվել է բյուզանդական Կոստանդ կայսեր 21-րդ տարում՝ 662 թ., իսկ հիմնարկության հանդիսավոր արարողությունը կատարվել է նույն տարվա մարտի 25-ին:

Իր վաղեմությանը Արուծի վիմագրերից հաջորդը տաճարի ներսում փորագրված 867 թվականի արձանագրությունն է: Այն վկայում է, որ ոտոզելի ջրի օգտագործման կապակցությամբ կոխվ է ծագել հարևան գյուղ-ավանների՝ Արուծի, Կոչի ու Գավատի միջև: Արուճեցիները բռնությանը տեր են դարձել նաև մյուսների ջրին: Այդ առիթով սպարապետ Սմբատ Բագրատունու առաջած գորական գործակատարը՝ Վոսմի որդի Գրիգորը, լուծել է վեճը, ջրբաժանումը կատարելով ըստ նախնյաց կարգի (մեկ և կես Կոչին և մեկ՝ Արուծին):

Արձանագրությունը ուշագրավ է մի քանի առումով: Նախ այն ջրօգտագործման չափը որոշող առաջին հայտնի «հնագույն վիմագրական վկայությունն է»²: Արձանագրության մեջ երկրորդ և երրորդ տողերում «իշխանություն, սերություն, կաթողիկոսություն» բառերում «թին» վերջավորությունը զրկված է պատվանշանով՝ կրճատ, որը հանդիսանում է «հնագույնը հայ տղագրության մեջ, բացի «Ած, Քւ» բառերից»³:

¹ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 91:

² Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառարանություն, էջ 41:

³ Գ. Հովսեփյան, Քարտզ հայ հնագրության, էջ 12: Բացի նշվածներից, տղագրող սերունդական բառերից են նաև ՅԱ (Յիսուս), ՏԲ (Տեր), ՍԲ (Սուրբ), ԵՄ (Երուսաղեմ), ԻԷԼ (Իսրաել):

Այս արձանագրության մեջ երկու անգամ հիշատակվում է Արուճի և Կոչի հարևանությամբ գտնվող Գավառ բնակավայրի անունը, որին այլևս ոչ մի տեղ չենք հանդիպում: Չի բացառվում, որ դա ներկայիս Ծամիրամ գյուղն է:

Հիշարժան է նաև, որ այս արձանագրությունը փորագրելու համար քերել են պատի ծեփը, որը որոշակիորեն նկատելի է մինչև օրս¹:

Արձանագրությունը տեղադրված է տաճարի հարավ արևելյան ավանդադասան դիմաց, որմնամույթի արևելյան կողմում:

ՅԺԶ ԹՈՒՆԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ ՅԻ—

ՇԽԱՆՈՒԹԻ ԱՇՈՏՈՅ ԵՒ Ի ՏԵՐՈՒԹԻ ԱՄԲԱՏԱՅ

ՀԱՈՅ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՅ ԵՒ Ի ԿԱԹԱՂԻԿՈՒ

ՍՈՒԹԻ ԶԱՔԱՐԻԱԻ ԵՂԵՆ ԿՈՒԻ ԸՆԴ ՅԱՐՈՒՇ ԵՒ ԸՆԴ ԿՈՇ ԵՒ

ԸՆԴ ԳԱՆԱՌՆ, ԵՀԱՐ ԱՐՈՒՇ ԶԿՈՇ ԵՒ ԶԳԱԻԱՌՆ ԵՒ ԿԱԼԱԻ

ԶԿՈՇԱ ՎԱՆԱԿԱՆՆ ԵՒ Ի ՔՐԹԱՎԱՆՆԻ ԸՆԴ ԱՆԿԻՆ ՄԻՆԹԱՆ

ՆԻ ՎԱՇԱՌԵՑԻՆ, ԵՍ ԳՐԻԳՈՐ ՈՐԻԻ ՎԱՌԱՄԱ ԾԱՌԱ ՍՄ

ԲԱՏԱ ԲԱԳՐԱՏՈՒՆՈ ԵԿԻ ՀՐԱՄԱՆԱԻ ՍՄԲԱՏԱ ԵՒ ԵՍ

ՀԱԻԱՍՏԱՐԵՑԻ ԶԶՈՒՐՆ ԸՆԴ ԿՈՇ ԵՒ ԸՆԴ ՅԱՐՈՒՇ ԶԻՆ

Չ ԻՒՐԵԱՆՅ ԲՆԻԿ ՌԱՍՄ ԷՐ ԼԵԼ :Ա: ԵՒ ԿԷՍ ԿՈՇԱ ԵՒ :Ա: ԱՐՄ

Ո. ԱՐԿ ԵԹԷ ԱՅԼ ՈՔ ՀԱԿԱՌԱԿԷԼ ԶԱՆԱ ԱՅԼ ԱԻԵԼԻ Ռ

ԱՍՄ ՅՈՒՋԷ :ՅԺԸ: ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ՆՋՈՎԵԱԼ ԼԻՑԻ ԵՒ

Ի ՍՄԲԱՏԱ ՍԱՀՈՒԱՄԲ ՊԱՏՈՒՀԱՍԻ:

Հաջորդ արձանագրությունը վերաբերում է Արուճի տաճարի նորոգմանը, կատարված 973 թ.: Արձանագրությունը գտնվում է արտաքուստ, տաճարի հյուսիսային պատի վրա, բավական բարձր տեղադրված խաչքարի երկու կողմերում:

ՆԻԲ ԹՈՒԻ... ԵՍ ԳՈՐԱՄ ՆՈՐՈԳ[ԵՑԻ]

...ՍՈՅԻ ՍՈՒՐԲ ԿԱԹԱՂԻ[ԿԷՍ]

Արձանագրությունից ձախ, մի քանի քար այն կողմ, բոլորգրված է «Ես Դաիթ»: Սա հավանաբար նորոգող վարպետի անունն է:

987 թվականից է Սմբատ Ծահնշահի արտոնագիր արձանագրությունը, որը Արուճում բաժից ազատում էր շաշակով բեռներ բերողներին: Սույն ար-

¹ Սա մի կարևոր հանգամանք է, որ վկայում է, թե տաճարը ներքուստ ծեփված և որմնանկարագարդ է եղել մինչև 867 թվականը:

ձանագրության առիթով ենթադրվել է, թե շակակալորենրից առնվող հատուկ հասույթ՝ **շակակալորենրի բաժ** է եղել¹: Սակայն Ս. Ավագյանի կատարած ճիշտ բառանշատումից երևում է, որ խոսքը ոչ թե առանձին հարկի, այլ հայտնի բաժի մասին է, որից Արուճում ազատվում էին միայն շակակալ բեռներ բերողները²:

Արձանագրությունը տաճարի հարավային սյատի վրա է, մուտքի արեվելյան կողմում:

ՅԱՆՈՒ ԱՍՏՈՒԾՈՑ, ԻՆՉ ԹՈՒՆԿԱՆ :ՆԼԶ: ԵՍ ՄՄ(Բ)ԱԱ ՇԱՀԱՆՇԱՀ ՈՐԴԻ ԱՐՈՑ ՇԱՀԱՆՇԱՀԻ ԱԶԱՏԵՑԻ ՎԱՆԻ ԻՄ ՀԱՌԻՆ ՀԱՆԳՈՅՆ ԵՒ ԻՄ ԱՐԵԾԱ. ՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԵՂԱՑ ԹԱԿՂՈՒԹԵԱՆ ԶԾԱԼԱՎԱՌՈՐ Ի ԲԱԺԷ ՇՆՈՐՀԻՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԵԹԷ ՌԶ ԻՄ ՎՃՌԻՍ ԳԻՄԱԳԱՐԶ ԼԻՆԻ ՆԶՈՎԵԱԼ ԻՑԷ ՅԱՍՏՈՒԾՈՑ ՅԺԸ ԵՒ ՅԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ ԵՒ ԻՄ ՄԵՂԱՑՍ ՏԵՐ Է:

Տաճարի հարավային կողմի ավանդատան մուտքի ճակատին այժմ եղծված երկու քանդակազարդ խաչերի վերևում փորագրված է «ՈՎՆԷՍ» (Հովհաննես): Այս պատվագրված անունը Հ. Եղիազարյանը հրատարակել է «ԹՎ ՆԽ» (991 թ.)³:

Սույն աղայի որդի Մանկլիի արձանագրությունը վերաբերում է 1285 թվականին: Այնտեղ ասվում է, որ Մանկլին Արուճում թողել է հացի շարիատը՝ բնակիչներին ազատել է այդ բնահարկից⁴: Արձանագրությունը գտնվում է արտաքուստ, հարավային մուտքի ճակատի վրա:

+ Ի ԹՈՒԻՍ ՀԱՅՈՑ :ՉԼԳ: Ի ՓԱԹՇԱՀՈՒԹԵՆՆ ԱՐՂՈՒՆ ԽԱՆԻՆ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵՆՆ ԴԵՄ. ԷՏՐԷԻ ՊԱՐՈՆՈՒԹԵՆՆ ՄՊԱ[ՍԱ]ԱՐ [Մ]ԽԱՐԿՐԾ ԵԱԼԻՆ ԵՂԲԱԻՐՆ ԻՌԱՆԷԻ ՈՐԴՈՅՆ ՄԵԾԻՆ ՇԱՀՆՇԱՀԻ ԵՍ ՄԱՆԿԼԻ ԽՈՒՄԱՆ ԱՂԱՑԻՍ ՈՐԴԻՍ ԵԿԻ ԱՐՈՒԾ ԻՄ ՀԱՌԻՆ ԳԱՆՁԱԳԻՆ ԳԵՂՍ ԵՒ ԹՈՂԻ ԶԼԱՑԻՆ ՇԱՐԻԱՏՆ ՀԱՍՏԻՑ Ի :Ռ: ՏԱՐԻ. ՊԱՐՈՆ ՈՐ ԱՅՍ Գ. ԵՂԻՍ ԿԵՐ ԳԱՅ ԻՄ ԱՂԲՈՒՑԷ ԿԱՄ ԻՄ ՈՐԴԻՑ ԿԱՄ ՀԱՅՈՒ ՏԵՐ ՎՐԱՑԻ ՈՐ ԶԱՅՍ ԳԻՐՄ[Ն]ԱՓԱՆԷ ԵՒ ԱՅԼ ՇԱՐԻԱՍԱՐՈՒ, ՅԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԱՅՍ ԵԿԵՂԵՑՈՑ ՆԶՈՎԱՍ Է ԵՒ ՎԱ[Ր]ԶԱ[ՈՒՐ]

1 ԵՒ :Գ:Ժ:ՈՒ:ԺԸ, ՀԱՅՐ-

ԱՊԵՏԱՅՆ ՆԶՈՎԱՍ Է ԵՒ ԱՄԷՆ ԱԶԳԻՆ ՆԱԼ-

ԱԹ Է⁵:

Այս արձանագրություններից բացի, տաճարի ներսում պահպանվել են

¹ Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 111, 242—243, տե՛ս նաև С. Егнazarов. Исследование по истории армянского права. Киев, 1919, с. 39: **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Գ, էջ 83—84:

² Ս. Ավագյան, նույն տեղը, էջ 243:

³ Հ. Եղիազարյան, նույն տեղը, էջ 41:

⁴ Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, էջ 48—154:

⁵ Սույն արձանագրությունը «Վիմակսն տարեգրում» տպված է երկու անգամ՝ 1285 և

երկու անթվական արձանագրություններ, որոնք, ի տարբերություն նախորդների, ստորև հրատարակվում են առաջին անգամ¹:

Տաճարի հյուսիսային պատի արևելյան որմնամույթի արևմտյան կողմում, չորս մեծ և երեք փոքր փորաքանդակ խաչերի կողքին հետևյալ արձանագրությունն է.

ՄԱՄԱԽ-
ԱԹՈՒՆԻՆ Է ՄԲ
ԽԱՉԵՐՍ ԵՒ ԻՒՐ
ՈՐԴՈՑ:
ԿՃ ՄԱՐԿԱՐ

Այստեղ հատկապես ուշագրավ է արձանագրության և խաչերի ներքեվում գրված փորագրող վարպետի՝ կազմող Մարկարի անվան հիշատակության հանգամանքը: Արձանագրությունն հավանաբար վերաբերում է XII—XIII դարերին: Հաջորդ արձանագրությունը հյուսիսային խորանի դիմաց է, որմնամույթի վրա.

ԽԱՉՍ ԲԱ-
ՐԵՆՈՍ ԱԹՄԱՆ ԱՂԻՆ:

Այս փոքր արձանագրության աջ կողմում մի փորաքանդակ խաչ է եղել, որն այժմ ամբողջովին եղծված է:

Տաճարի արևմտյան (գլխավոր) մուտքի ճակատին, ծեփի վրա եղել է մեկ այլ արձանագրություն, սակայն պահպանվել են միայն տողերի վերջին տառերն ու վանկերը, որոնցից հնարավոր չէ որևէ միտք քաղել: Ահա այն.

1 ...ԱՆԻՆ
2 ...ՄԱՆԻՆ
3 ...ԱՆ ՀԱՅՐՆ
4 ...ՆՆ ԱԻԵՏԱՐ
5 ...Ի ՀԱՅՐ ՉՈՒ
6...Կ ՍԿՈ ԱՆԿԱ

1235 թվականների տակ (էջ 126, 162): Թյուրիմացության պատճառն այն է որ արձանագրության նախնական երկու հրատարակություններում (Հ. Շահխաթունյան, նշվ. աշխ., էջ 61, Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 144) թվականը համապատասխանաբար ՉԼԴ (1285) և ՉՀԴ (1325) է նշված: Միշտ է Շահխաթունյանի մոտ չնայած սխալմամբ ՉԼԴ-ն 1385 թ. է գրում՝ փոխանակ 1285 թ.: Վիմական տարեգրում տեղ գտած հիշյալ վրիպումը մատնանել է Հ. Մանանդյանը (Երկեր հ. Գ, էջ 148):

¹ Արուհի տաճարի 867, 987, 1285 թվականների արձանագրությունները ունեցել են մի շարք հրատարակություններ, սակայն դրանք մեծ մասամբ տարընթերցումներով ու վրիպումներով են (Հ. Շահխաթունյան նշվ. աշխ., էջ 61, Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 144—145, Վիմական տարեգիր, էջ 3, 9, 126): Ավելի բարկոք և ամբողջական են Հ. Եղիազարյանի կատարած ընդօրինակությունները (տե՛ս Հ. Եղիազարյան, նույն տեղը, և, 41):

- 7 ...ԱՌ ԱԾ
- 8 ...ՊԱՌԱ ՈՐ
- 9 ...ՑԻԱԼ
- 10 ...

Արուճի տաճարի պատերի վրա եղած հիշյալ արձանագրություններից քացի, պահպանվել են տարբեր արձանագրությունների հատվածներ պարունակող քարակտորներ՝ գտնված եկեղեցու մոտակա քարակույտերում: Դրանց մի մասն այժմ տեղափոխված է տաճարի ներքը: Ստորև հրատարակվում են առաջին անգամ:

[Մ]ԱԹԵՈՍ ՍՊԱՍԱԻ-
 Ո[Ր] ԵՒ ԳԱԻԻԹ ՔԱՀԱՆԱ
 ԶՀԱՐ ԻՄ ԽՈՑԳԵՂՆ
 ԵՒ ԶԻՄԱՅՐ ԻՄ ՍԻՐԱՄԱՐԳՆ
 [Յ]ԻՇԵՑԵԹ Ի ԲՄ ԵՒ
 ԵԼՄԻԿՆ :Թ ԶԶԵ

Թվականի վերջին տառի ստորին մասը ջարդված է: Եթե տառը «Ե» է, ապա 1336 թվականն է, եթե «Է», ապա 1338 թ.:

Տաճարի արևելյան կողմում, քարակույտի մեջ, ինչ-որ շինության քիվի պատկանող քարի վրա.

...Ի Թ ԶԼ(1281 թ) ԵՍ ՄԽԻԹԱՐ ՈՐԳ[Ի]...¹

Քարերից մեկի վրա պահպանվել է նախկին մեծ արձանագրության մի հատվածը.

...ԱՌՆ...
 ...ՏԱԾԻԿ ԶԱՅՍ Գ...
 ...ՅՈՒԳԱԻ ԵՒ ԿԱՅԵ[ՆԻ]
 ...ԱՊԻԶԱԻ ԵՒ ՅԱ...
 ...ՍԱԻՐ :Հ: ՆԱ ՅՍ...

Մեկ այլ անթվական արձանագրություն վկայում է Խաչատուր վարդապետի կողմից տաճարի վերանորոգման մասին (XV դարի սկզբներ).

[ԿԱՄ]ԱԻՆ ԱՅ ԵՍ ՆԱՀԱՅՏ-
 ՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏՍ ԵԿԻ ՅԱՐՈՒԾ ՆՈՐ.
 ՈԳԵՑԻ ԶԵԿԵՂ[ԵՅ]ԻՍ Ի ՊԱՐՈՆՈՒԹԻՒՆ
 ՍԱՅՀԱԹԲԵԿԻՆ ԱԽ... ՅՈՒՍՈՒՎ.
 ԻՆ ՅԱՌԱԶՆՈՐԳՈՒԹԻՒՆ ՏԵՂՈՅՍ Զ...Ր
 ԱՐ ԵՂԵՎՈՆ[Ի] ԳԱԼՍՄԻՆ
 ԱՄԻՐ ԶՈՒԽԱԹԻՆ Վ...

¹ Արձանագրության քարն այժմ կորած է: 1960-ական թվականներին արձանագրությունը արտագրել է Ա. Ս. Մաթևոսյանը:

Այսպիսին է Արուճի և Գրիգոր տաճարի վիմագրական հարուստ ժառանգությունը, որը Արուն բնակավայրի պատմության քարազիր տարեգրությունն է:

ՊԱՍՏՁ

Արուճի հուշարձանախմբում նշանակալի տեղ են գրավում աշխարհիկ բնույթի կառույցները: Դրանցից խոշորներն են բերդը, Գրիգոր իշխանի կառուցած պալատը, քարավանատունը:

Իշխանաշեն պալատը կառուցված է ս. Գրիգոր տաճարի հարևանությամբ, նրա հարավային կողմում: Այն (այս միջնադարյան ճարտարապետության փորձաթիվ աշխարհիկ կառույցներից է և դեռ մեր դարակազմին իր վրա էր հրավիրել ուսումնասիրողների ուշադրությունը, որոնք պալատի գոյության մասին գիտնին Հովհաննես Դրասխանակերտցու Բաղդոյան հիշատակությունից (որ Գրիգոր Մամիկոնյանը տաճարից հարավ կառուցեց «գարթունիս իր») և տեղում նշմարվող ավերակներից: Արուճի պալատը պեղելու անհրաժեշտության մասին նշել է Ն. Մառը՝ Անիի միջնաբերդի պալատի պեղումների կապակցությամբ¹: Թ. Թորամանյանը ևս մեծ հույսեր էր կապում Գրիգոր Մամիկոնյանի պալատի պեղումների իրագործման հետ: Այդ առիթով նա գրում է. «Չափազանց հեշտ և հետաքրքիր է այս ապարանքի պեղումը, որով միայն լիակատար գաղափար կունենանք 7-րդ դարու իշխանական ապարանքի մասին»², կամ «անպայման այդ բլրի տակ պահված կլինեն շատ լուսաբանություններ հոգուտ հայ պատմության և գեղարվեստի»³:

Սակայն Թորամանյանին չլինակվեց պեղված տեսնել արուճյան պալատը, որի մաքրման, ապա և պեղման աշխատանքները Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի ջանքերով սկսվեցին 1947 թվականից, լայն ծավալ ստացան 1950—52 թվականներին (պեղումների ղեկավար՝ Վ. Հարությունյան) և պարբերաբար շարունակվեցին մինչև 70-ական թվականները: 1953 թ. պեղման աշխատանքների արդյունքների մասին հանգամանալից հոդվածով հանդես է եկել Վարազդատ Հարությունյանը⁴, որը ոչ միայն նկարագրել է բացված շինությունները, այլև արել է համապատաս-

¹ Н. Марр, Ани, книжная история города и раскопки на месте городища. М.-Л. 1934, с. 46.

² Թ. Թորամանյան, Նյութեր..., II ժողովածու, էջ 121:

³ Թ. Թորամանյան, Նյութեր..., I ժողովածու, Երևան, 1942, էջ 357:

⁴ Վ. Հարությունյան, VII դարի աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, ՀՍՍՀ ԳԱ, Տեղեկագիր, 1953, № 8:

խան մեկնաբանություններ ու եզրակացություններ¹: Արուճի պալատին տարբեր տարիներով անդրադարձել են նաև այլ ուսումնասիրողներ²:

Հայ ճարտարապետության մեջ վաղ միջնադարից հայտնի են վեց պալատական կառույցներ՝ Դվինի, Արշակունիների գահադահլիճը (IV դ.), կաթողիկոսարանի երկու դահլիճները (V դ. և VII դ.), Զվարթնոցում Ներսես Օհնոյ կաթողիկոսի կառուցած պալատը (VII դարի կես), Ավանի կաթողիկոսարանը (VII դ.) և Արուճի իշխանաշեն պալատը (VII դարի 80-ական թվականների վերջ): Ինչպես երևում է հատակագծերի համեմատությունից հորինվածքային մեծ նմանություն կա Դվինի (VII դ.) և Արուճի պալատների միջև, որը վկայում է. «որ Հայաստանում 5—7-րդ դարերում մշակվել են ոչ միայն եկեղեցական, այլև աշխարհիկ շենքերի որոշակի տիպեր»³:


Պեղումների շնորհիվ Արուճի տաճարից հարավ և հարավ-արևելք բացվեցին առանձին-առանձին կանգնած երկու խոշոր շինությունների, ինչպես և մի մատուռի ավերակները (տե՛ս հատակագիծը, գծ. 6): Վ. Հարությունյանը մեծ շինությունները պայմանականորեն կոչել է Առաջին դահլիճ և Աշխարհիկ շենք՝ սյունազարդ դահլիճով³: Քանի որ գրականության մեջ լայն կիրառություն է գտել «Արուճի պալատ» արտահայտությունը, ապա մենք պալատ կկոչենք Դվինի պալատին նմանվող սյունազարդ դահլիճով շենքը, իսկ առաջին դահլիճը՝ բազիլիկ կառույց, ելնելով վերջինիս ճարտարապետական հորինվածքից:

Բազիլիկ կառույցը գտնվում է տաճարից 47 մ հարավ-արևելք, վանքաձորի եզրից մի փոքր ետ: Այն ներքուստ 18,7×10,6 մ մեծությամբ եռանավ բազիլիկ շինություն է, ձգված արևմուտքից արևելք: Ունի երկաստիճան գետնախարիսխ: Կառույցն սկզբում ունեցել է երկու մուտք՝ արևմուտքից և հյուսիսից: Հետագայում՝ շենքի վերակառուցման ժամանակ, մուտք է բացվել նաև արևելքից: Գլխավոր մուտքը արևմտյանն է, 2,11 մ լայնությամբ, որը չի համընկնում շենքի երկայնական առանցքին: Հյուսիսային պատի մուտքն ավելի փոքր է, լայնությունը՝ 1,32 մ: Կիսակամարն փճակում պահպանվել են շինության բոլոր չորս պատերը, որոնք արևելյան կողմում շուրջ 3 մ բարձրություն ունեն: Պատերի ներսի և դրսի շարվածքը զգալիորեն տարբեր է, արտաքինից օգտագործված են համեմատաբար մեծ չափերի սքառուտ թարեր, որոնց մեջ երբեմն աչքի են ընկնում հատկապես խոշորները: Դրանցից մեկը արևմտյան պատի մեջ է (3,4×0,7 մ մեծությամբ), մյուսը տեղադրված է հյուսիսային պատի մեջ, դռնից դեպի աս, ունի 3,5×0,7 մ մեծություն:

¹ Հ. Եղիազարյան, Զվլ. աշխ., Օ. Халпахчи. Гражданское зодчество Армении, М. 1971, с. 94—95: Ալեհարկ հայ ճարտարապետության պատմություն, էջ 137 և այլն:

² Վ. Հարությունյան, նույն տեղը, էջ 65:

³ Նույն տեղը, է, 57, 59:



6 Արուծի հուշարձանախմբի հատակագիծը (հեղինակներ՝ Վ. Հարությունյան, Հ. Գասպարյան)

Ուշագրավ է, որ այս քարի վրա պահպանվել է շրջագծի մեջ փորագրվա հավասարաթև խաչաքանդակ (շրջագծի տրամագիծը 46 սմ) և մի էսլյեպ ված արձանագրություն, որից այժմ ընթեռնելի են առանձին տառեր և տղա գրված բառեր: Տառաձևերը հին են.

- 1 [ՅՄ] ՔՄ... ՍԱԵԻ...
- 2 ...Ս...Ս...
- 3 ..ԱՅ ԿԵՆՂԱՆԻՂՅ...

Հյուսիսային պատի ա.ս հատվածում մեկ ալ բարի վրա պահպանվել

որիչ մի խաչաքանդակ՝ դարձյալ շրջանագծի մեջ և հավասարաթև: Խաչի փորագրման այս ձևը բնորոշ է քրիստոնեական արվեստի վաղ շրջանին:

Բազիլիկ կառույցի ներսում, շուրջ երկու մետր բարձրությամբ պահպանվել են երկու շարքով տեղադրված չորս մույթեր: Դրանք հասակագծում խաչաձև են (հավասարաթև՝ թևերի լայնությունը՝ 0,77 մ): Մույթերով կազմված երկու կողային նավերը 2 մ, իսկ միջին նավը 5 մ լայնություն ունեն: Մույթերի հանդիսակաց պատերին կան որմնամույթեր, որոնք, ինչպես և մույթերը, բարձրանում են երիզավոր խարիսխների վրա:

Կառույցի հատակը կրկնակի սալահատակ է ունեցել: Վ. Հարությունյանը գրում է. «Նախկին սալահատակի վրա հետագայում ծածկել են երկրորդը: Այդ պատճառով մույթերի և որմնամույթերի խարիսխները կիսով չափ ծածկվել են նոր սալահատակով»¹: Բազիլիկ կառույցը թաղակալ ծածկ է ունեցել:

Պեղումների շնորհիվ պարզվեց, որ ավելի ուշ շենքը հարմարեցվել է պաշտպանական նպատակներով, որի համար հարավային և արևելյան ուսի տեղ ողորդի կողմից ամրացվել են լրացուցիչ պատերով, իսկ արևելյան կողմի երկու անկյուններում պատրաստվել են երկու բազմաճիստ բուրգեր: Կիսով չափ շարվել են հին՝ արևմտյան և հյուսիսային դռները և գործածության մեջ է դրվել արևելյան կողմի մուտքը: Հիշյալ հավելյալ կառույցների թե՛ շարվածքը, թե՛ համեմատաբար փոքր քարերը, իսկույն առանձնանում են հնից: Պեղման աշխատանքներն իրականացնողներից Հ. Եղիազարյանը գրում է. «Դահլիճի ներսում կատարված պեղումները հաստատում են, որ այստեղ ուշ, գուցե 17—18-րդ դարերում... նորից բնակություն է հաստատվել: Հայտնաբերված մեծ քանակությամբ երկաթի հայրցքի մնացորդները, անասնաղորի շերտը, անասուններ կապելու համար անցքավոր մեծ քարերը, քարե մեծ սանդղ և այլ իրեր վկայում են, որ դահլիճի Էերսում բացի բնակարանից եղել են նաև արհեստանոց և անասնագոմ»²:

Բազիլիկ կառույցի այս համառոտ նկարագրությունից հետո պետք է որոշել նրա գործնական նշանակությունը. սկզբնապես ինչ է իրենից ներկայացրել այս շենքը: Վ. Հարությունյանը բազիլիկ կառույցի ուսումնասիրողներից առաջինը լինելով, հետևյալ միտքն է հայտնում. «Պարզաբանման կարգի ունի այն հարցը, թե, այսպես կոչված, առաջին և սյունազարդ դահլիճները պատկանում են արդյոք միևնույն պալատական կոմպլեքսին, թե՛ րրանք ներկայացնում են առանձին շենքերի մնացորդներ»³: Այնուհետև Վ. Հարությունյանը գրում է. «Դահլիճը, որի հատակագծի կոմպոզիցիան բազիլիկային է, գուցե մի պահ ենթադրել տա, որ այն եկեղեցի է եղել: Նույնիսկ հյուսիսային պատի վրա դրսից (հյուսիս-արևմտյան անկյան մոտ)

¹ Վ. Հարությունյան, VII դարի..., էջ 58:

² Հ. Եղիազարյան, Աշխ., էջ 39:

³ Վ. Հարությունյան, նույն տեղը, էջ 57:


փորագրված են շրջագծի մեջ ամփոփված հավասարաթև երկու խաչ: (Սըրանց մոտ կա նաև մի փոքր արձանագրություն, որը խիստ եղծված լինելու պատճառով դեռ չի հաջողվել վերծանել): Սակայն... դահլիճի արևելյան կողմում, դրսի կողմից պատը պահպանվել է այնպես, որ խորանների կամ բեմի մասին որևէ խոսք լինել չի կարող: Նշանակում է արևելյան պատը սկզբից կառուցվել է այդպես, ինչպես պահպանվել է, և ոչ մի վերակառուցման չի ենթարկվել: Ավելի ուշ ժամանակ դրսի կողմից կցել են ճոր պատեր և անկյուններում բուրգեր: Բացի այդ, պիտի նշել նաև այն, որ վաղ քրիստոնեական շրջանի հավակալան բոլոր եռանկավ եկեղեցիներում (բացառությամբ Տեկորի վերակառուցված տաճարի) մենք չունենք ոչ մի օրինակ, որ եկեղեցին ունենա երկու զույգ մույթ: Որպես կանոն՝ եղել է երեք զույգ, իսկ Եղվարդի բազիլիկ եկեղեցում եղել է չորս զույգ¹:

Սակայն, վերջին տարիներին դահլիճի արևելյան պատի բուտոբետոնի լիցքի հողմահարման հետևանքով այժմ վերին մասից տեսանելի է, որ պատն կից եռաթև որմնամույթերը (որ տարբերվում են մյուս պատերի պարզ միասյան որմնամույթերից) նախկինում նույնպիսի՝ յուսչաձև հաստակաձեով, առանձին կանգնած մույթեր են եղել, որոնց թևերից միայն երեքն են դուրս մնացել պատից, իսկ մեկը մնացել է շարվածքում: Փաստորեն սկզբնապես կառույցն ունեցել է առնվազն երեք զույգ մույթ: Բացի այդ, արևելյան պատի որմնամույթերը (նախկին մույթերը) հանդիպակապ երկայնական պատերին որմնամույթեր ունեն, որոնք հիմա զբաղեցնում են շինության ներսի արևելյան երկու անկյունները: Որմնամույթերի գոյությունը կառույցի հենց անկյուններում միանգամայն անհարիր է բազիլիկ շենքի հորինվածքի տրամաբանությանը: Երևում է, որ այդ որմնամույթերը նախկինում կատարել են նույնպիսի դեր, ինչպիսին երկայնական պատերի մյուս որմնամույթերը՝ նրանց միջոցով իրականացվել է կապը պատի և մույթերի միջև: Սակայն **արևելյան կողմից, շենքի կրճատման հետևանքով, արևելյան պատը հասել է մույթերին և իրենց դերը կորցրած զույգ որմնամույթերը հայտնվել են շենքի անկյուններում** (գծ. 7):

Այսպիսով, կարծում ենք, որ բազիլիկ կառույցի բուն նշանակության, ինչպես և կառուցման ճիշտ ժամանակի հարցն առայժմ բաց է, քանի որ շենքը լուրջ վերակառուցման է ենթարկվել և կրճատվել է արևելյան կողմից: Չի բացառվում, որ կառույցը Արուճի վերակառուցված մին բազիլիկ եկեղեցին է: Նման ենթադրության օգտին խոսող մյուս փաստարկներն հետևյալներն են. կառույցի դիրքը համապատասխանում է քրիստոնեական եկեղեցիների դիրքին՝ ձգված է արևելքից արևմուտք, իսկ գլխավոր մուտքը արևմտյան կողմում է: «Ամբողջ շենքը, ինչպես և եկեղեցին դրված է երկատեսանյա գեոմետրիայի վրա»²: Վաղ միջնադարյան հայտնի պալատ-

¹ Վ. Հարությունյան, VII դարի..., էջ 55:

² Նույն տեղը, էջ 57:



7 Արունի պալատը և բազիլիկ կառույցը (հատակագծային լրացումները հեղինակի)

ներում, ինչպես և հետագա դարերի աշխարհիկ կառույցների մեջ չունենք մեկ այլ օրինակ, որ աշխարհիկ նշանակության շենքը գետնախարխիս ունենա:

Եթե բուն պալատի պատերից գրեթե ոչինչ չի պահպանվել (լավագույն դեպքում 0,70 մ բարձրությամբ փոքր հատվածներ), ապա բազիլիկ կառույցի պատերը ողջ պարագծով 2,5—3 մ բարձրությամբ կանգուն են մինչև օրս: Այս տարբերության պատճառներից մեկն այն է, որ սկզբնապես ամուր և դիմացկուն էին կառուցվում հատկապես միջնադարյան պաշտամունքային կառույցները: Բազիլիկ կառույցի հենց այդպիսի նշանակություն ունենալու օգտին են խոսում նաև հյուսիսային պատին փորագրված երկու հավասարաթև խաչերը, որոնց հին ծագումը կասկած չի հարուցում:

Արունում միաժամանակ կառուցված տաճարը և բուն պալատը տեղադրված են զուգահեռաբար: Հուշարձանախմբի հատակագծից երևում է, որ երկուսն էլ կառուցվել են նույն նախագծողի մտահղացմամբ և պալատի «կողմնորոշումն ամբողջովին թելադրվել է եկեղեցու տեղադրությամբ»²: Մինչդեռ բազիլիկ կառույցը հիշյալ շինությունների նկատմամբ փոքր-ինչ

² Նույն տեղը, է, 59:

շեղադիր է: Մի բան, որ կարող է բացատրվել նրա ավելի վաղ կառուցված լինելու հանգամանքով:

Եթե բազիլիկը կառուցված լիներ Գրիգոր Մամիկոնյանի օրոք, այս նրա քարերի վրա (ինչպես ս. Գրիգոր տաճարում, բուն պալատում, Եղվարդի ս. Ջորավարում և VII դարի բազմաթիվ այլ կառույցներում) պահպանված կլինեին վարպետների նշանները, որպիսիք բազիլիկ կառույցի քարերի վրա բոլորովին չկան: Կարելի է ենթադրել, որ այս կառույցը եղել է Արուճի հին բազիլիկ եկեղեցին: 609 թ. Դվինի երկրորդ եկեղեցական ժողովին արուճեցի եկեղեցական Գիորգիսի մասնակցությունը փաստը գրեթե ուղղակի վկայություն է այն մասին, որ աչք ժամանակ Արուճում եկեղեցի կար: Պետք է կարծել, որ 661 թ. Արուճում հաստատվելուց հետո Գրիգոր Մամիկոնյանը ձեռնարկել է ս. Գրիգոր տաճարի կառուցումը հին բազիլիկ եկեղեցուց ոչ հեռու: Մինչ կավարտվեր տաճարի շինարարությունը, իշխանն հավանաբար առաջիկա տարիների օգտագործման համար նորոգել է տվել հին բազիլիկը: Դրա օգտին է խոսում կառույցի կրկնակի սալահատակ ունենալու հանգամանքը: Ս. Գրիգորի կառուցումից հետո հին բազիլիկը կորցրել է իր նշանակությունը, իսկ հետագա դարերում ենթարկվել է վերակառուցման և կորցրել իր սկզբնական տեսքը: Այս ենթադրությունը, սակայն կարիք ունի լրացուցիչ փաստերի, և շինության արևելյան կողմի հետագա պեղումները միայն վերջնական լուծում կտան խնդրին:

Բազիլիկ կառույցի հյուսիս-արևելյան կողմում, ինչպես ասվեց, պահպանվել է մի ավերակ մատուռ և վաղ քրիստոնեական շրջանի հուշապյան ստիլոբատ: Մատուռը միանավ, միախորան կառույց է: Պեղումներից հետո Հ. Եղիազարյանը գրում է. «ծածկը եղել է թաղակապ... պահպանվել են թաղի ու քիվերի մի քանիք քարեր. քիվերը լավ մշակված են ու քանդակազարդ՝ բնորոշ 5-րդ դարին»: Հատակագծից երևում է, որ բազիլիկ կառույցը, մատուռը և հուշապյան ստիլոբատը տեղադրված են զուգահեռաբար և կարծես առանձնանում են տաճարի ու բուն պալատի համալիրից: Պետք է կարծել, որ դրանք բոլորն էլ կառուցման ժամանակով մոտ են իրար՝ ստեղծված տաճարից և պալատից ավելի վաղ:

Արուճի բուն պալատը մեզ է հասել խիստ ավերակ վիճակում: Պեղումների շնորհիվ բացված պալատական շենքը, ինչպես նշվեց, հատակագծով և կառուցվածքի մանրամասներով հիմնականում նման է Դվինի VII դարի կաթողիկոսական պալատին: Էական տարբերություններից մեկն այն է, որ եթե Դվինի կենտրոնական պլանազարդ դահլիճում չորս զույգ պուներ են

¹ Հ. Եղիազարյան, նույն տեղը, էջ 40:

եղև, սպա Արուճում դրանք երեք զույգ են¹: Սրուճի պալատական շենքը կառուցված է եկեղեցուց հարավ, 15 մ հեռավորության վրա՝ հյուսիսային կողմում, տաճարի ուղղությամբ, ունեցել է բացօթյա պլուսազարդ ճեմասրահ:

Պալատի նշված հատվածի պեղումների մասին Վ. Հարությունյանը գրում է. «... սյունասրահի աչս մնացորդները ձգվում են արևմուտքից արեւելք՝ զուգահեռ տաճարին... Սրահի Հակատն արևելյան կողմից սկսվում է 2,5 մ երկարությամբ հոծ պատով, որից հետո նույն պատի առանցքով, սալահատակի վրա դեպի արևմուտք դասավորված են խարիսխները՝ թվով հինգ հատ: 195,2 թ. աշխատանքների ժամանակ պարզվեց, որ խարիսխների թիվը եղել է ոչ թե հինգ, այլ ինը: Մնացած չորս խարիսխների բառակուսիներքնասալերի հետքերը անձրևից հետո պարզորոշ կերպով երևացին սալահատակի վրա»²: Ավելացնենք, որ այժմ տեղում կա ընդամենը երեք խարիսխ, որոնցից առաջինը գտնվում է ճեմասրահի հյուսիս-արևելյան անկյունից 5,35 մ հեռավորության վրա, հաջորդը սրահից՝ 4, 20 մ և երրորդը՝ երկրորդից 5,25 մ հեռավորության վրա: Խարիսխների 67×67 և 70×70 սմ չափերի ներքնասալերի բարձրությունը 16 սմ է, գլանինը՝ 27 սմ, վերին հարթության տրամագիծը՝ 56 սմ: Վ. Հարությունյանը ենթադրում է, որ սյուները

¹ ԴՎԻԻ և Արուճի պալատների պլուսազարդ բահիլանների կառուցվածքային ակնհայտ նմանության մասին է վկայում Վ. Հարությունյանի կազմած համեմատական սղյուսակը, որի տվյալներից մի քանիսը այսպիսին են.

	Դասինի վիթակարգում (մետրերով)	Սյուների հեռավորությունը փոխանցից երկայնական ուղղությամբ (կենտրոնից-կենտրոն)	Սյուների հեռավորությունը փոխանցից լայնակի ուղղությամբ	Խարիսխների հեռավորությունը երկայնական պատերից	Խարիսխի հեռավորությունը լայնական պատերից
ԴՎԻԻ	11,4	7,30	7,25	2,10	2,00
ԱՐՈՒԾ	11,35	7,55	7,55	1,90	2,55

² Վ. Հարությունյան, VII դարի..., էջ 59:



**Տ Գալատի հյուսիս-արևելյան անկյունքարի վրա պահպանված վարպետի
նշանը (եստամպ)**

միացված են եղել կամարներով, այսինչն՝ սրանի տաճարին ուղղված ճակատը ներկայացրել է կամարաշար¹:

Պահպանվել է ճեմարանից դեպի պալատի ներսը տանող շքամուտքի տեղը: Այն գտնվում է ճեմարանի հարավային պատի վրա, մեր հիշատակած երրորդ խարսխի դիմաց: Մուտքը բավականին լայն է՝ 1,90 մ:

Հիշարժան է ճեմարանի հյուսիս-արևելյան անկյունում պահպանված սրբատաշ անկյունաքարը, որի հարսուլային երեսին լավ երևում է մի վարպետի նշան: Այն իրենից ներկայացնում է հայկական երկաթագիր տառաձևերի մի միակցություն՝ «Արգա՞մ» (զծ. 8): Ուշագրավ է, որ պալատի քարի վրա պահպանված այս միակ վարպետի նշանը նույնությամբ կրկնվում է Արունի տաճարի վրա²:

Ծորչ 25 մ երկարությամբ ձգված ճեմարանը Արունի պալատի ճարտարապետական լուրահատկություններից մեկն է, քանի որ հիլին կաթո-

¹ Վ. Հարությունյան, VII դարի..., էջ 59 :

² Սո. Մնացականյան, Միջնադարյան Հայաստանի շինարարական գործի կազմակերպման մի քանի հարցերը և բարագործ վարպետների նշանագրերը, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 102:

դիկտատական պալատում նման բան չկա: Հ. Խալիպախյանը նշում է, որ Արու-
 Բի պալատն իրենից ներկայացնում է Դվիճի կաթողիկոսական պալատի սխե-
 մայի զարգացումը՝ հարստացված բացօթյա ճեմատարանով, որն հավանաբար
 իրականացվել է ոչ առանց հայկական ժողովրդական բնակարանների բաց
 օթյակների ազդեցության¹: Արուճի պալատի հորինվածքի կենտրոնում արե-
 վելքից արևմուտք առանցքով ձգված գլխավոր սյունազարդ դահլիճն է, իսկ
 նրա աջ և ձախ կողմերում եղել են փոքր սենյակներ: Պալատը փայտածածկ
 է եղել: Ենթադրվում է, որ սյունազարդ դահլիճի վերևում ծածկն ավարտվել
 է իրար նկատմամբ հաջորդական դասավորություն ունեցող գերաններից
 կազմված երկու գմբեթով՝ աչպես կոչված հազարաշեններով²: Դժբախտա-
 բար շենքն այնքան ավերակ է, որ չի հաջողվել անգամ ի հայտ բերել նրա
 բոլոր պատերը (հատկապես արևմտյանն ու հարավայինը) ողջ պարագծով:
 Դժվար է որոշել նաև ներքին փոքր սենյակների ստույգ բաժանումները:
 Ժամանակին պալատն հավանաբար շքեղ զարդարվածություն է ունեցել, սա-
 կայն ինչպես Դվիճի և Հլլաթթնոցի, այնպես էլ Արուճի պալատի ներքին
 հարդարանքի մասին գրեթե ոչինչ չգիտենք: Նույնով X դարի սկզբներից
 Գագիկ Արծրունու կողմից Աղթամարում ս. Խաչ եկեղեցու և որմնակարա-
 զարդ թագավորական պալատի կառուցման մասին Լ. Դուրմուլուն գրում է,
 թե «պետք է ենթադրել, չի մնաճօրհնակ պալատական որմնակարչությու-
 նը Հայաստանում միակը յի եղել»³: Հնարավոր է, որ Արուճի պալատը ևս
 աշխարհիկ որմնակարների ունեցած լինի, մանավանդ որ, ինչպես տեսանք,
 Գրիգոր Մամիկոնյանի կառուցած թե՛ Արուճի, թե՛ Եղվարդի ս. Ջորավար
 եկեղեցիները որմնակարազարդ են, ներքուստ ծեփված է եղել նաև բազի-
 լիկ կառույցը⁴: Ինչ վերաբերում է բուն պալատին, ապա այնտեղ չի պահ-
 պանվել գոնե մեկ՝ քիչ թե շատ ամբողջական պատ, որպեսզի հնարավոր
 լիներ վերջնականապես որոշել կառույցի ներքին ձևավորման կոնկրետ բը-
 նույթը:

Արուճի պալատի սյունազարդ դահլիճում պահպանվել է մի հետաքրք-
 րական մանրամասն, որն առանձին ուշադրության է արժանի: Դահլիճի
 արևելյան կողմի չորս սյուների խարիսխների միջև, նրանց կազմած քառա-
 կուսու ճիշտ կենտրոնում տեղադրված է տուֆից պատրաստած ուղղանկյու-
 նաձև մի մեծ քարաբեկոր (2,30×1,65×0,40 մ): Նրա վերին հարթության
 վրա արված է դարձյալ ուղղանկյունաձև փոստրակ (1,40×0,85 մ): Այս խո-
 շոր տափարակ քարը փաստորեն դահլիճի գաճավորակի պատվանդանն է:
 Այն, որ վաղ միջնադարյան պալատական սյունազարդ դահլիճների կենտ-

¹ О. Халпахчян, Гражданское зодчество Армении, с. 95.

² Անարկ հայ ճարտարապետության պատմության, էջ 137:

³ Л. Дурнов., Краткая история... с. 16.

⁴ Վ. Հարությունյան, VII դարի..., էջ 57:

րոնում գահավորակ է տեղադրված եղել, հայտնի էր դեռ Դվինի պեղումներից: Կ. Ղաֆադարյանը գրում է. «1961—1962 թթ. ... ի հայտ եկավ սրբաբառաշ քարերով շարված պլուստադոս մի մեծ դահլիճ... որն անկասկած Արշակունի թագավորների գահանիստ սրահն է եղել, ուր ֆատակի վրա երկվում էր աստիճանավոր բարձրության վրա դրված արքայական գահի հաստատուն տեղը»¹: Դվինի V և VII դարերի, ինչպես և վաղ միջնադարյան մյուս կաթողիկոսական պալատներում գահավորակի հետքեր չեն պահպանվել: Արշակունիների պալատում գահավորակն ամրացված է եղել «երեսով դեպի արևելք»², Արունում, իշխանական գահավորակը երեսով դեպի արևմուտք է: Այս հանգանակներն իր հերթին թույլ է տալիս որոշակի ենթադրություն անել սրահի գլխավոր մուտքի գտնվելու տեղի մասին, որը մինչև այժմ անհայտ էր: Գահավորակի դիրքից ելնելով գլխավոր մուտքն ամենայն հավանականությամբ եղել է դահլիճի արևելյան կողմում: Այդ մասում, այժմ ուշ շրջանում կառուցված մի պատ կա, որը թույլ չի տալիս ճշտորեն վերականգնել հին պատի այդ հատվածի եզրագիծը (գծ. 7)³:

Այսպիսով, ինչպես մի ժամանակ Դվինի թագավորական դահլիճում ցախարարներն ու իշխանները. «բարձիք առաջի արքային... բազմեին»⁴, այնպես էլ Արունում, պետական ընդունելություններին մասնակցող ազնվատոհմներկաները, ավագության կարգով, բազմել են Հայոց իշխանի գահավորակի առջև:

Արունի պալատում լավ են պահպանվել կենտրոնական պլուստադոս դահլիճի պլանների խարիսխները, և երկու խոյակները: 1937 թ. Դվինի VII դ. կաթողիկոսական պալատի պեղումներից հայտնաբերված նմանատիպ մի խոյակի մասին Կ. Ղաֆադարյանը գրում էր. «... արմավենագարդ մեծ խոյակի գյուղը նորություն էր հայկական ճարտարապետության համար, այն... կարելի է դասել հայկական արվեստի լավագույն նմուշների շարքը»⁵: Արունում հայտնաբերված խոյակները ձևով և չափերով շատ մոտ են դվինյան խոյակին: Արունի խոյակներից մեկը շրջված դիրքով երևում էր մինչև պեղումները, իսկ երկրորդը, որը չափերով փոքր-ինչ գերազանցում է առաջինին, հայտնաբերվել է 1951 թ.: Այս վերջինը հատկապես նման է Դվինում գտնված խոյակին:

¹ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. II, Երևան, 1982, էջ 75 (հատակագիծը՝ էջ 93):

² Նույն տեղը, էջ 94:

³ Արունի պալատի ավերակների ուսումնասիրության ժամանակ մասնագիտական խորհուրդներով միզ սպակցել է Մ. Հասարթյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը:

⁴ Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 104:

⁵ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, Երևան, 1952, էջ 44:

Դարձյալ դիմենք Վ. Հարությունյանի կազմած համեմատական աղյուսակին.

	երկարու- թյունը	քարձրու- թյունը	հաստու- թյունը	խոյղների տրամագիծը
Խոյակ Դվինից	2,05	0,90	0,70	0,70
Խոյակներ Ա- րուճից (մեծ)	2,20	0,98	0,75	0,72
(փոքր)	1,86	0,98	0,75	0,60 ¹

Խոյակները քանդակագարդ են միայն ճակատային՝ դեպի դահլիճն ուղղված երեսներում: Խոյակների զարդաքանդակները չեն կրկնվում: Փոքր խոյակի վերնասալի ճակատի 18 սմ լայնությամբ երիզը ծածկված է արմավենիների շարքով: Նույն խոյակի խոյողներից մեկը եղծված է, իսկ մյուսի վրա երևում է եռոդակ շրջագծի մեջ առնված վեցթևյա վարդյակ, որի խենրի ծայրերը միջանկյալ ակոսներով միացված են իրար: Երկրորդ՝ մեծ խոյակի վերնասալի ճակատի երիզը (լայնությունը 16 սմ) հարդարված է խաղողի տերևների և ողկույզների ոլորապտույտ շարքից կազմված զեղեցիկ զարդաշարով: Նման զարդամոտիվ հաճախ է հանդիպում VII դարի հուշարձաններում: Խոյողների վրա քանդակված է արմավենու ճյուղի խոշոր, ոլորազարդ մոտիվը: Սրանց միջև ընկած մակերեսին, խոյողների ուղղությամբ արված են արմավենու երկու ուղղաձիգ՝ վերևում համապատասխանաբար աջ և ձախ թեքվող ճյուղեր: Խոյակի հորինվածքի կենտրոնում քանդակված է եռաստիճան պատվանդանի վրա կանգնած մի խաչ: Վերջինս վերին մասում ոճավորված է: Ուշագրավ է նաև խաչի եռաստիճան պատվանդանի վրա լինելու հանգամանքը, որը աստիճանավոր ստիլոբատի և նրա վրա կանգնեցված խաչակրի հուշապան խորհրդանշական արտահայտությունն է: Հարկ է նշել, որ Դվինի և Սրուճի խոյակների նմանությունը կրկնօրինակության արդյունք չէ: Արունում աշխատած վարպետները զարդաքանդակների կատարման մեջ ինքնուրույն են:

Արունի իշխանաշեն պալատը ծառայել է որպես իշխանական գործակալության նստավայր: Մինչև այժմ գրականության մեջ օգտագործվում էր միայն Հովհաննես Դրախանակերտցու վկայությունը Գրիգոր իշխանի «արքունիքի» մասին: Սակայն պետք է ասել, որ նրանից առաջ, VII դարում Մովսես Կաղանկատվացին է Գրիգոր Մամիկոնյանի գործակալությունը արքունիք կոչել: Նա գրում է, որ Աղվանքի Իսրայել եպիսկոպոսը Հայաստա-

¹ Չափերը բերված են նետրերով, տե՛ս Վ. Հարությունյան, VII դարի..., էջ 61, 63:

նից հետանալիս արքունիքի կողմից մեծարվեց. «մեծապատիւ շքեղութեամբ յարքունեաց»¹, բնականաբար խոսքն Արուճի պալատում գունդող արքունիքին է վերաբերում:

ԲԵՐԳԸ

Արուճի բերդը գտնվում է տաճարից և իշխանաշեն պալատից հարավ-արևմուտք, Աղբրի ձորի ձախ կողմում: Բերդի հյուսիս-արևմտյան անկյունահատվածը, որը պալատականորեն կանվանենք միջնաբերդ, բազմաթիվ վերակառուցումների է ենթարկվել և իր այժմյան տեսքն ստացել է XVI դարում, թորք-պարսկական պատերազմների ժամանակ: Ավելի ուշ, այն վեր է ածվել գյուղացիների կացարանի, այժմ կիսավեր է: 1842 թ. Հ. Շահխաթունյանը միջնաբերդի մասին գրում է. «... սաեմ բնակիչքն ի ժամանակէ անտի իշխանութեանն օսմանանց [է] մնացեալ»²: Հայտնի է նաև թորք պատմիչներից մեկի հիշատակությունն այն մասին, որ 1514 թ. Արուճում է եղել սուլթան Աելիմը³:

Սակայն Արուճի բուն բերդը շատ ավելի հին ծագում ունի և ինչպես ցույց են տալիս փաստերը, գոյություն է ունեցել Գրիգոր Մամիկոնյանից էլ առաջ: Արուճում արքունակն գործերի ձեռնանոց լինելու մասին Եղիշեի հաղորդած տեղեկությունից երևում է, որ V դարում այստեղ ամրոց է եղել, որը գրավել է Վասակ մարզպանը: Իսկ VII դարի 50-ական թվականներին որոշ ժամանակ Արուճում է կայանել արաբ Հաբիբ իբն Մալաման, հանգամանք, որը ևս վկայում է տեղում ռազմատրաստեգիական հենակետի գոյության մասին: Իրավացի է «Հայաստանի բերդերը» գրքի հեղինակ Մ. Հովհաննիսյանը, որը Արուճի բերդի հիմնադրումը վերագրում է Գրիգոր իշխանի կառավարմանը նախորդած դարերին. «կարելի չէ անտեսել գոյությունը Արուճ բերդի կամ բերդակի մը, որ յետոյ խնամքով պահպանումս ըլլալու է Գրիգոր Մամիկոնյանէ...»⁴: Արուճն աթոռանիստ դարձնելով Գրիգոր Մամիկոնյանը բնականաբար ավելի է ամրացրել բերդը, հարմարեցնելով այն իշխանանիստի պահանջներին. «հաստահեղոյս քարամբք և կրով պարսպեալ կարգէ տուն բնակութեան իւրոյ»⁵:

Արուճի հին բերդի պեղումներն իրականացվել են 1980—81 թթ. Երևանի


¹ Մովսես Կաղանկատուացի, էջ 237:

² Հ. Շահխաթունյան, էջ 81:

³ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 144:

⁴ Մ. Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը, Վեներտիկ, 1970, էջ 788:

⁵ Հովհաննես Գրասխանակերտցի, էջ 91:



9 Արուճի բերդի հատակագիծը:

պետական համալսարանի Հայագիտական կենտրոնի հնագիտական արշավախմբի կողմից՝ Բ. Սաղոյանի ղեկավարությամբ¹:

Արուճի բերդը հյուսիսից հարավ ձգված ուղղանկյուն հատակագծով պաշտպանական համակարգ է, որի արևմտյան (ձորեզերյա) և հարավային պատերն այժմ մաքրված են հողածածկույթից: Այստեղ, լրիվ կամ կիսով չափ, բացվել են 1,8—2,0 մետր հաստությամբ պարսպի և քառակուսի հատակագծով վեց բուրգերի (ներքուստ 4×4 մ) հիմնապատերը (գծ. 9), որոնք շարված են սրբատաշ տուֆի խոշոր քարաքեկորներով (մոտավորապես 50×120×90 սմ հարաբերությամբ)²: Պարսպի քարաշարքերի հորիզոնական կարանների եզրակուսները և բուրգերի ձևը անստարկելիորեն վկայում են, որ բերդը կառուցվել է վաղ միջնադարում՝ դատելով Եղիշեի հիշատակութունից՝ Արշակունիների օրոք:

¹ Բ. Սաղոյան, Արուճի վաղ միջնադարյան հուշարձանները, Պատմա-բանասիրական հանդես, 1985, № 4, էջ 162—173:

² Նույն տեղը, էջ 164:

Պեղումների շնորհիվ հանվել են զանազան կառույցների սրբատաշ քարեր, սյան խարխուխ: Հայտնաբերվել է նաև խեցեղեն¹:

Արուճի բերդի կրած վերակառուցումների մասին կարելի է պատկերացում կազմել պարիսպների տարբեր հատվածների շինարարական տեխնիկայի տարբերությամբ: Վերը համառոտակի բնութագրված ննագույն շերտին հաջորդում է Բագրատունիների ժամանակաշրջանին (IX—X դդ.) վերաբերող վերակառուցումը, երբ բերդի տարածքն ընդարձակվել է հարավային կողմում, իսկ պարսպաշարը ամրացվել է կիսակլոր հիմքով բուրգերով: Դրանցից մեկի հետքերը պահպանվել են հին պարսպապատի հարավային հատվածին զուգահեռ², նման մեկ այլ բուրգ կա միջնաբերդի հյուսիս արևելյան մասում: Այս շրջանի պարսպի հատվածները լավ երևում են միջնաբերդի հյուսիսային և արևելյան կողմում: IX—X դդ. պարիսպը կառուցված է դարձյալ սրբատաշ, քայց համեմատաբար փոքր քարերով:

Հին բերդի հյուսիս արևմտյան մասը կամ միջնաբերդը խոշոր վերակառուցման է ենթարկվել պարսիկների (գուցե և թուրքերի) կողմից՝ XVI դարում: Այդ ժամանակ շարված պարսպապատերը ակնհայտորեն տարբերվում են Հախորդ շրջանների պատերից: Վերակառուցողները երբեմն օգտագործելով Բագրատունյաց շրջանի պարիսպները, հին բերդապատի հիմքի վրա կառուցել են նոր պատեր ու բուրգեր (արևելքում, հարավում, արևմուտքում): Հատկապես լավ են պահպանվել միջնաբերդի հարավ-արևելյան և հարավ-արևմտյան անկյուններում եղած երկու բուրգերը: Միակ կամարակապ մուտքը արևելյան կողմից է:

Այժմյան դրությամբ միջնաբերդը ներքուստ ունի մի ընդարձակ քակ, իսկ հյուսիսային և արևելյան պատերին կից տարբեր չափերի կիսավեր սենյակներ կան:

Պետք է ենթադրել, որ միջնաբերդի դիրքի ընտրությունը պայմանավորված է եղել ոչ միայն ձորեզերքի այդ մասի դժվարամատչելի լինելու հանգամանքով, այլև հին բերդի ադ հատվածի ունեցած կարևորությամբ: Չի բացառվում, որ այն լրացուցիչ կառուցապատման է ենթարկվել Գրիգոր Մամիկոնյանի ժամանակ:

Արուճի միջնաբերդի հարավ-արևմտյան անկյան ուղղությամբ, ձորի հանդիպակաց կողմում գտնվում է բնակավայրի հիմնական աղբյուրը: Միջնաբերդից դեպի աղբյուր տանող ստորգետնյա ուղին, որը հնում օգտագործվել է պաշարումների ճամանակ, մինչև մեր դարի 30-ական թվականները անցանելի էր, այժմ փլուզված է:

¹ Նույն տեղը, էջ 165: Պեղումներից հայտնաբերված նյութերը պահվում են Երևանի Արուճի թանգարանում:

² Բ. Սաղոյան նշվ. աշխ., էջ 164:

Արուճի բերդի հետագա պեղումները, հատկապես միջնաբերդի ստորին շերտերի հետազոտումը, կարող է շատ արդյունավետ լինել ոչ միայն Արուճի պատմության, այլև հայ վաղ միջնադարյան բերդաշինության ուսումնասիրության առումով:

ՔԱՐԱՎԱՆԱՏՈՒՆԸ

Արուճի քարավանատունը արևելքից Դվինի վրայով՝ Անի, Կարս և Սև ծով դուրս եկող առևտրական ճանապարհի Դվին—Անի հատվածում գտնվող զղակներից մեկն էր: Քարավանային ճանապարհի առ բանով հատվածի հաջորդ կայանները գտնվում էին Թալինում և Ներքին Ջրաբփիում: Դա Անի քաղաքի ամենակենսական առևտրական ճանապարհներից էր¹:

Արուճի միջնադարյան քարավանատունը կատարել է ոչ միայն սովորական հյուրանոց-իշխանատան, այլև վաճառանոցի՝ շուկայի դեր: Հ. Ծահխաթունյանը 1842 թ. այս քարավանատան մասին գրում է. «տեսանի աերակ շինութեանց. զորմէ ասեն յտաջն լինել պանդոկ և **տեղի վաճառաց**, քանզի է և յանցս ճանապարհին՝ որ գնայ յԱշնակ, ի Թալին, և ի Մաստարա գիտ»²:


Արուճի քարավանատունը գտնվում է ս. Գրիգոր տաճարից հյուսիս, մոտ 1,5 կմ հեռավորության վրա, ներկայիս Երևան—Լենինական ավտոմայրուղու ձախ կողմում: Այն կառուցված է ձորակի ժառոտ եզրին: Հուշարձանը բազմիցս հիշատակվում է գրականության մեջ, սակայն տեղում գրա մանրամասն ուսումնասիրությամբ զբաղվել է Վ. Հարությունյանը (1955—57): Վերջինս իր «Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները» օգտաշատ աշխատության մեջ հանգամանորեն քննում է Արուճի քարավանատան ճարտարապետությունը, խոսում նրա այժմյան դրության մասին³:

Արուճի քարավանատունը կառուցված է սրբատաշ տուֆ քարից: Այն պատկանում է միադահլիճ եռանավ շինությունների թվին և շատ ընդհանուր կողմեր ունի միջնադարյան հայկական այլ քարավանատների հետ: Ընդարձակ դահլիճի միջին նավի լայնությունը 6 մ է՝ կողային նավերինը՝ 3,6 մ: Կերտում ունեցել է վեց զույգ մույթեր, իրարից 2,8—3 մ հեռավորությամբ, իսկ լայնական պատերն ունեցել են նաև որմնամույթեր: Դահլիճի ծածկն են կազմել երեք գլանաձև թաղերը՝ տեղավորված ընդհանուր երկթեք տանիքի տակ: Այժմ պահպանվել է միայն շենքի հյուսիս-արևելյան անկյունամասը,


¹ Ք. Հակոբյան, Անիի պատմություն, հ. Ա, Երևան, 1980, էջ 130—133:

² Հ. Ծահխաթունյան, էջ 62:

³ Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1980, էջ 29—35:



10 Արուճի քարավանատան հատակագիծը (հեղինակ՝ Վ. Հարությունյան)



11 Քարավանատան դահլիճի լայնական կտրվածքը (ըստ Ն. Տոկարսկու)

կողային ճավի՛ կամարներով իրար միացած երեք մույթերով և արտաքին աատի երկու կիսաշրջան բուրգերով: Կառույցի մնացած մասերը հիմնովին ավերված են և միայն պեղումների շնորհիվ է հնարավոր եղել վերականգնել նրա հատակագիծը, անգամ մուտքի գտնվելու տեղը որոշվել է ենթադրաբար (գծ. 10, 11): Պետք է կարծել, որ հուշարձանը մեծապես ավերվել է 80

XIX դարում և մեր դարասկզբին: Անգլիացի ճանապարհորդ, հնագետ և նկարիչ Ռոբերտ Կեր Փորտըրը 1817 թ. Անիից Էջմիածին գնալու ճանապարհին տեսնելով Արուճի քարավանատունը այն անվանում է մեծ քարավանատուն: Նրա այցելության ժամանակ շինության պատերը թեև խարխված ու կիսաքանդ, բայց հավանաբար ողջ երկայնքով կանգուն են եղել: Արուճի ավերակները նշելուց հետո Կեր Փորտըրը գրում է. «Մի քիչ հեռու տեսանք մի մեծ քարավանատարայի ավերակները, լեռնից իջնող մի վտակի կողքին, և նրա փլած պատերի միջից նկատեցինք, որ մի քանի կիսաքաղց թշվառներ սողոսկում էին դեպի վեր»¹:

Արուճի քարավանատունը, ինչպես և այդ շրջանի նույնանուն այլ հուշարձաններ, պաշտպանական նկատառումներով լուսամուտներ չի ունեցել²: Նույն նպատակով էլ այն ուներ ընդամենը մեկ դուռ՝ հյուսիսային կողմում: Իսկ «Քարավանատան անկյուններում և երկայնքի պատերի մեջտեղում գտնվող հատակագծում կիսաշրջան բուրգերը ողջ կառույցին հաղորդում էին ամրոցի տեսք»³: Դրա հետ մեկտեղ շինությունը բավական տարողունակ էր: Դահլիճի ներքին չափերն են՝ 28,25×15 մ: Այստեղ կարող էին հանգրվանել, իսկ անհրաժեշտության դեպքում պատսպարվել հարյուրավոր մարդիկ և անգամ անասուններ, սալեր և այլն⁴:

Հուշարձանի պահպանված մասի թաղը ավերվել էր 1954 թ.: Նրա վերանորոգումը իրականացվել է 1956—1957 թթ.:

ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ԱՅԼ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ (ՔԱՌԱԿՈՂ ԿՈԹՈՂՆԵՐ, ԽԱՉՔԱՐԵՐ, ՀՆՁԱՆՆԵՐ)

Խոշոր հուշարձաններից բացի, Արուճում պահպանվել են մի շարք այլ պատմական հուշարձաններ՝ վաղ միջնադարյան քառակող կոթողներ, X—XIII դարերին վերաբերող խաչքարեր, հնձաններ:

Հայտնի է, որ միջնադարյան հայ արվեստում քարե քառակող կոթողները նախորդել են խաչքարերին: Արագածոտն գավառում և մասնավորապես Թալինում մեծ թվով հետաքրքիր բարձրաբանդակներով կոթողներ են պահպանվել: Լ. Ազարյանը դրանց կանգնեցման ժամանակն է համարում IV—V դարերը, քանի որ կոթող հուշապույունները «կառուցվել են որպես Հայաստանում քրիստոնեական հավատը հաստատվելու փաստի հավերժացում»⁵:

¹ Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, Երևան, 1934, էջ 753:

² Օ. Халпахян, Гражданское зодчество Армении, с. 191.

³ Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատները... էջ 34:

⁴ Թ. Թորամանյան, Նյութեր... երկրորդ ժողովածու, էջ 36:

⁵ Լ. Ազարյան, Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975, էջ 58, 64:

Արուճում պահպանված կոթողները համեմատաբար թերի վիճակում են մեզ հասել: Ամենից լավ պահպանվածը այժմ տաճարի հյուսիսային կողմում կանգնեցված կոթողն է, որը 2,10 մ բարձրություն ունի: Նրա հյուսիսային կողմում քանդակված է ամբողջ հասակով կանգնած Տիրամայրը մանկան հետ: Կոթողի հակառակ երեսին պահպանված բարձրաքանդակը բազմակերպար է: Ներքևում կողք-կողքի կանգնած երկու մարդկաչին ֆիգուրներ են, միջամատում՝ մեկ այլ, ավելի փոքր ֆիգուր, որի դիմաց երևում է սի գառան քանդակի ուռուցիկ ռելիեֆը (Դասհակի զոհաբերությունը), իսկ վերևում երևում է մեկ ուրիշ կերպարի բարձրաքանդակի ստորին մասը: Կոթողի կողային մյուս երկու երեսները ուղղահայաց երիզներ ունեն:

Արուճի տաճարի ներսում հավաքված են շրջակայքից գտնված այլ կոթողների բեկորներ: Այստեղ կա նաև հուշապան մի խորանարդաձև պատվանդան, ճակատին մեծ, հավասարաթև խաչի բարձրաքանդակով: Այն բավական նման է Թալիճում գտնված խորանարդաձև պատվանդաններից մեկին: Քառակող կոթողի մի բեկոր է գտնվել Վանքաձորի և Գյուրջու խոր ձորի միջև եղած քարակույտերից մեկում¹: Դատելով քարի վերին մասում եղած ելուստից, այն ներկայացնում է կոթողի ստորին հատվածը, որի վրա բարձրացել է հուշարձանի մնացած՝ վերին մասը: Գտնված քարի մի երեսին երևում է վաղ միջնադարյան այլ կոթողներից հայտնի, երկարաձիգ խաչի քանդակի ստորին թևը, որը կանգնած է եռաստիճան ստիլոբատ հիշեցնող պատվանդանի վրա: Ավելի հետաքրքրական է մյուս անկատի բարձրաքանդակը, ուր ներկայացված է մի մարդկային կերպար, որը վեր պարզած ձեռքերով գլխավերևում պահում է մի առարկա (թա՛գ): Այս կերպարը, հատկապես ձեռքերի դիրքով, հիշեցնում է Գառնահովիտի (Ադիամանի) հայտնի կոթողի վրա քանդակված մարդկային կերպարը:

Արուճում բազիլիկ կառույցի և հին եկեղեցու հարևանությամբ, ինչպես արդեն ճշել ենք, կա մի հուշապան ստիլոբատ, սակայն մոտերքում բուն հուշապանը պատկանող բեկորներ չեն հայտնաբերվել:

Ս. Գրիգոր տաճարից հարավ պալատի պեղումների շտամանակ հայտնաբերվել է վերանմասի կենտրոնում փոսիկ ունեցող մի բավական մեծ խարիսխ: Այն չափերով զգալիորեն գերազանցում է բուն պալատական շենքի խարիսխներին և ծառայել է որպես վաղ քրիստոնեական հուշապան պատվանդան²: Ս. Մնացականյանը գրում է, որ եթե համեմատաբար փոքր խարիսխները միջանկյալ օղակի դեր էին կատարում խորանարդաձև պատվանդանի և հուշապան բնի միջև, ապա մեծ խարիսխները արդեն փոխարինում

¹ Կոթողի բեկորը հայտնաբերել և գյուղ է փոխադրել արուճից դպրոցական Վարդգես Հարությունյանը:

² Ս. Մնացականյան, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Երևան, 1982, էջ 23:

էին խորանարդաձև պատվանդանին և դրվում անմիջապէս ստիլոբատի վրա: Հենց «այդպիսի օրինակ է Արուճի տաճարից հարավ գտնվող... խարխսիք»¹:

Արուճում խաչքարեր և խաչքարերի բեկորներ են պահպանվել տաճարի շրջակայքում, բնակավայրի տարբեր մասերում, այգիներում, ձորերի ափերին: Կտորված խաչքարերի հատվածներ են օգտագործված XIX դարում գյուղի կենտրոնում կառուցված եկեղեցու պատի շարվածքում: Արուճի խաչքարերը հիմնականում զարդարված են երկրաչափական-գծային և բուսական մոտիվներով կազմված համամասնություններով: Դրանք հայկական խաչքարերի X—XII դարերի ոճն ունեն: Արուճի խաչքարերից հնագույնը ազուցված է տաճարի հյուսիսային պատի մեջ: Խաչքարի երկու կողմերում, ինչպես վերը տեսանք, փորագրված է ոմն Գորամի՝ տաճարի նորոգմանը վերաբերող արձանագրությունը, թվագրված 973 թվականով, որը նաև խաչքարի պատրաստման թվականն է:

Արուճի խաչքարերը հիմնականում միջին չափի են, բացառությամբ Վանքաձորի ձախ ափից մի փոքր ետ հայտնաբերված (այժմ կանգնեցված) մի խաչքարից, որն աչքի է ընկնում իր բավական մեծ չափերով: Կարմրավուն տուֆից պատրաստված այդ հսկան ունի 3,05 մ բարձրություն և 1,20 մ լայնություն (առանց պատվանդանի): Ուշագրավ է, որ խաչքարի եզրերը պակտղ զարդաքանդակը արված է դեկորատիվ քանդակի հին (VII դ.) ավանդներով:

Մինչև 1960-ական թվականները Գյուրջու խոր ձորում պահպանվել էր մի խաչքարի պատվանդան՝ արձանագրությամբ: Այն ժամանակին գտնվել է ձորափին, սակայն այնտեղից գլորվել է ցած՝ դեպի հեղեղատը, այժմ կորած է (հնարավոր է որ հեղեղի ժամանակ ջուրն է տարել): Բարեբախտաբար խաչքարի պատվանդանի արձանագրությունը ժամանակին արտագրել է Ա. Ս. Մաթևոսյանը: Արձանագրությունից պարզվում է, որ խաչքարը բավական հին է եղել՝ կանգնեցված 1001 թվականին:

ԿՆԾ (1001) ԹՎԱԿԱՆ[Ի]Ն ՆԱՅՆ ԵՍ ՄՈՒՍԵՆ ՔԱ-
ԱՆԱ ՈՐԴԻ ԱՂԱՄ ՔԱՀԱՆԱԻ ԿԱՆ.
ԿՆԵՑԻ ՍՈՒՐԲ ԽԱՀՍ Ի ԲԱՐԵՆՈՍՈՒԹԻ

Արուճի մյուս խաչքարերի կանգնեցման թվականներն անհնայտ են:

* * *

Արուճի միջնադարյան հուշարձաններից են նաև այգիներում եղած հրնձանները: Ինչպես վերը տեսանք Արուճի հնձանները XII—XIII դարերում հիշատակվում են Հոռոմոսի և Հատիճի վանքերի արձանագրություններում:

¹ Նույն տեղը:

Հնձանների շինարարությունը պայմանավորված էր գինեգործության զարգացումով, քանի որ դրանք նախատեսված էին խաղողը ճգմելու և հյութը զբտելու համար: Ինչպես նշում է Հ. Խավփախյանը. «սկսած IX դարից, երբ քաղաքներում արհեստները զարգացան և գյուղատնտեսական մթերքների վերամշակման գանձագան ձեռնարկություններ ստեղծվեցին, մեծ ուշադրություն դարձվեց նաև հնձաններին: Դրանք այգիների հետ միասին առ ու ծախի առարկա լինելով՝ դառնում էին ֆևոդայական տնտեսությունների և վանքերի սեփականությունն»¹: Ցավոք, Արուճի այգիներում գտնվող բազմաթիվ հին հնձաններից ոչ մեկն ամբողջական չի պահպանվել: Պատճառներից մեկն այն է, որ դրանց սրբատաշ քարերը դեռ XIX դարի վերջերից սկսած օգտագործվել են գյուղացիների կողմից որպես պատրաստի շինանյութ: Հայտնի էն միայն այգիներում գտնվող հնձանների տեղերը, որոնք սակայն 1970-ական թվականներին քարամաքրման և հարթեցման աշխատանքներից հետո իսպառ անհետացել են: Հնձանների անունը պահպանվել է Արուճի հողմաստերից մի քանիսի նոր (XIX դարի վերջերից եկող) անվանումներում, ինչպես օրինակ՝ «Ղըզլ հնձան», «Ներքի ղըզլ հնձան», «Այլի հնձան» և այլն²: Այժմ էլ գյուղի հին տներից շատերի պատերին կարելի է տեսնել նախկին հնձանների խոշոր սրբատաշ քարերը, որոնց մի մասը երիզազարդ ունի:

Այգիներում հնձանների քարերի վրա եղել են նաև արձանագրությունների հատվածներ: Դրանց մի մասը ժամանակին ընօրինակել է Ա. Ս. Մաթևոսյանը: Չորս արձանագրությունների հատվածներից միայն մեկի բովանդակությունն է հասկանալի, սակայն թերում ենք մյուս երեք արձանագրությունների հատվածները ևս, որովհետև ինքնին ուշագրավ փաստ է հրձանների պատերին XI—XIII դարերում գրված բազմաքանակ արձանագրությունների գոյությունը: Դա անկասկած գալիս է Անհի քարձր մշակույթից, քանի որ հիշյալ դարերում հենց Անհում էր մասսայականացել և մեծ վերելք ապրում փմնագիր գրչության արվեստը: Իսկ անեցիներից շատերն այգիներ ու հնձաններ ունեին Արուճում:

1 Արձանագրության քարը գտնվել է Մարգարի այգում.

+ ՔՍ ԱՄ ԱԻԳՆ [ԵԱ ՊԱՐ]
ՈՆ ՄԱԲԱՍԱ ԵՒ [ԶԱԻ-]
ԱԿԱՑ ՆՈՐԱ Ա [ՄԻՆ]

¹ Հ. Խավփախյան, Հայաստանի արտադրական կառույցները Երևան, 1961, էջ 14:

² Հնձանների անվանումների և տեղադրության մասին մեզ պատմել է Սարգսրապատի հերոսամարտի մասնակից արունեցի Հակոբ Մարգարյանը (92 տարեկան):

2 Նույն այգու հնձանի ավերակ պատի վրա

...ՈՒՆ
...ԵՑԻ
...ԱՄԷՆԱ

3 Արսենի այգու հնձան՝

...ԵՒ ԿԱՆ.[Գ]Ն[ԵՑԻ]
...Ո ԵՒ ԾՆՈՂԱՑ Ե[Ի]

4 Նույն հնձանի մեկ այլ մասում՝

1 ՔՄ Ա[Ծ]
2 ...
3 ՋԱ[Ի]ԱԿԱՑ...

* *

Բացի հնձաններից, Արուճի հին այգիներում տեղ-տեղ երևում էին փոքր տների ավերակներ: Դրանք հավանաբար հնում, այգեգործական աշխատանքների ետոն շրջանում, այգեպանների ու այգեգործների համար որպես ժամանակավոր կացարան են ծառայել: Գյուղում հայտնաբերվել են նաև սննդամթերքի և զինու թազմաթիվ հին հորեր, որոնց մի մասն օգտագործվում է նաև այժմ:

* * *

Ընդհանուր գծերով այսպիսին է Արուճի պատմամշակութային հարուստ ժառանգությունը: Արագածոտն գավառի այդ հնամենի բնակավայրը, անհիշելի ժամանակներից ի վեր, հայ ժողովրդի պատմությանը համաքայլ, կրելով բոլոր վերելքներն ու անկումները, այժմ ապրում է նոր, երջանիկ կյանքով: Իսկ Արուճի հուշարձանախումբը ուսումնասիրությունների ու պեղումների շնորհիվ մշտապես հարստանում է նորանոր հուշարձաններով, որոնք լուսաբանում են բնակավայրի բազմադարյան պատմության դրվագները: Եվ եթե նկատի ունենանք, որ միջնադարյան պարսպապատ ավանի ներսում դեռ պեղումներ չեն արված, ապա կարելի է ասել, որ Արուճը հայ մշակույթի պատմությանը դեռ նորություններ ունի մատուցելու:

АРУЧ Резюме

Аруч — поселение, примечательное не только историческим прошлым, но и ценными архитектурными памятниками; его окрестности изобилуют некрополями и следами древнейших поселений, относящихся к III—I тысячелетиям до н. э.

Аруч впервые упоминается историками V в. как местность, в которой расквартировывались зимой дворцовые войска. В 60—80-ые годы VII в., являясь резиденцией князя Григора Мамиконяна (661—685 гг.) и по существу административным центром всей страны, Аруч переживал особый подъем экономической, социально-общественной и культурной жизни. В X—XIII вв., в эпоху расцвета Ани, поселение Аруч в силу своего расположения на главной торговой дороге Ани-Двин становится широко известно. Спад экономической жизни Армении в середине XIII в., обусловленный нашествием монголов и последовавшими войнами, сказался и на Аруче. А в 1604 г., в результате насильственного переселения армян по приказу шаха Абасса с земель от Ширака до Джуги, Аруч обезлюдел. Его заселение переселенцами из некоторых районов Восточной Армении начинается с середины XIX в. Ныне Аруч является развитым садоводческим совхозом Аштаракского района Армянской ССР.

К изучению аручских памятников обратились впервые в середине XIX в. О. Шахатурияц, А. Мхитарян, Г. Алишан, X. Линч, Н. Марр, позднее—Т. Тораманиян, И. Стржиговский, И. Орбели, Г. Чубинашвили, Н. Токарский. Начиная с 1940 г., после сделанных в Аруче раскопок, его памятники были более подробно исследованы В. М. Арутюняном.

Отдельным памятникам Аруча посвятили статьи Л. Дурново, О. Егиазарян, А. Шагинян, Н. Котанджян, Б. Садоян. Интересные замечания о памятниках Аруча высказали А. Якобсон, С. Тер-Нерсисян, Ст. Мнацакян, О. Халпахчян и другие.

ПАМЯТНИКИ

ХРАМ св. ГРИГОРА в Аруче был построен Григором Мамиконяном в 662—666 гг. Он относится к типу купольных зал и является самым крупным из числа подобных сооружений. Храм отличается цельностью внутреннего пространства. Весь интерьер был украшен фресками, из которых сохранились фрагменты в центральной апсиде. Сохранилась также надпись художника—Степаноса. Из многочисленных настенных надписей самая ранняя относится к 662 году, ко времени основания храма. Следующие надписи относятся к 867, 873, 887, 1285 годам. Есть также надписи без дат, часть из которых издается впервые.

ДВОРЕЦ был построен после строительства храма тем же Григором Мамиконяном. До сих пор в исследованиях дворцовый комплекс представлялся двумя постройками, первую из которых можно условно назвать базиликальным сооружением. Это полуразрушенная трехнефная базилика с двумя парами пилонов. Некоторые конструктивные особенности архитектуры дают основание предполагать, что базилика была построена до VII в. и в первоначальном виде представляла храмовое сооружение. Впоследствии во точная часть здания подверглась реконструкции (она сохранилась в длину), в результате чего третья пара пилонов наполовину оказалась в кладке новой стены, а пиллястры—в восточных углах постройки (см. план 7).

Основной дворец расположен параллельно с храмом, в 15 м. южнее от него. Планировкой и архитектурными деталями он напоминает патриарший дворец в Двине, с разницей в числе колон в центральных залах (в Двине их восемь, а в Аруче—четыре). В аручском дворце сохранились две большие капители, а также каменные подножия княжеского престола, находящиеся в центре четырех восточных колон центрального зала.

КРЕПОСТЬ расположена к юго-западу от храма и дворца. Она была построена во времена Аршакидов (IV—V вв.) и обнесена стеной (ширина 1,8—2,0 м), укрепленной башнями с квадратным основанием. При реконструкции крепости Аруч в IX—X вв. были пристроены башни с круглым основанием, а в XVI в., во время последней реконструкции, была восстановлена только северо-западная часть старой крепости.

КАРАВАНТУН находится на расстоянии 1,5 км к северу от храма. Он построен, по всей вероятности, в X—XI вв. Это строение представляет обширную залу (внутренние размеры которой 28,25×15 м) с тремя нефами и шестью парами пилонов. В настоящее время сохранилась только северо-западная часть сооружения.

Другими средневековыми памятниками в Аруче являются столбы, наиболее крупные из которых (высота 2,10 м) воздвигнуты на северной стороне храма.

В Аруче и в его окрестностях есть многочисленные ХАЧКАРЫ. Самый ранний из них вставлен в северную стену храма (973 г.). Аручские хачкары относятся к X—XII векам.

В садах Аруча было несколько средневековых давлен виноград, камни которых часто были украшены декоративной резьбой и имели надписи.

ՑԱՆԿԵՐ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աբրահամ Երևանցի**, Պատմություն պատերազմացն, Երևան, 1938:
- Ալիշան Ղ.**, Այրարատ, Վեճեսիկ, 1890:
- Առաքելյան Բ.**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ, հ. Ա, Երեվան, 1958:
- Արեշյան Գ.**, Հին Շամիրամի անեղծվածները, «Գիտություն և տեխնիկա», 1980, № 4:
- Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901:
- Կիվան հայ վիճագրության, պր. I, Երևան, 1966:
- Եղիշե**, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Թիֆլիս, 1913:
- Եղիազարյան Հ.**, Գրիգոր Մամիկոնյան իշխանի կառուցած սաճալը և պալատը Թալիշ գյուղում և վերջինիս հնագիտական պեղումները, «Էջմիածին», 1955, № 2:
- Թորամանյան Թ.**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու, Երևան, 1942, աշխ. երկրորդ ժողովածու, Երևան, 1948:
- Կիրիկոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, Երևան, 1961:
- Կոտանյան Կ.**, Վիճական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913:
- Հասարայան Մ.**, Ռիմանցեի VII դարի գմբեթավոր դահլիճը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, № 1:
- Հարությունյան Վ.**, VII դարի աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ» 1953, № 8:
- Հարությունյան Վ.**, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960:
- Հովհաննես Դրասխանակերտցի**, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912:
- Ղևոնդ**, Արշաունք արարաց ի Հայս, Փարիզ, 1857:
- Մաթևոսյան Կ.**, Արուհի տաճարի 666 թ. որմնակալարը. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1981, № 3:
- Մեսրոպ Մաշտոցի անվ.** Մատենադարան, ձեռագիր № 1521 (Ճառընտիր), № 5619 (Ժողովածու), № 6326 (Մաշտոց):
- Մխիթար Անեցի**, Մատենա աշխարհավէպ հանդիսարանաց, Երևան, 1983:
- Մխիթար Այրիվանեցի**, Պատմություն Հայոց, Մոսկվա, 1860:
- Մխիթարյան Ա.**, «Տեղագրություն կաթողիկէ եկեղեցու Արուն աւանի», Տեղագրություն Մարմաշինոյ վանացն ի Շիրակ, Վաղարշապատ, 1870:
- Մնացականյան Ս.**, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Երեվան, 1982:
- Մովսես Կաղանկատացի**, Պատմություն Աղուանից աշխարհի, Երևան, 1963:
- Ծահինյան Ա.**, Արուհի VII դարի շինարարական արձանագրության վերծանման առթիվ. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 1:
- Ծահխարությունյան Հ.**, Ստորագրություն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, հ. I, Էջմիածին, 1842:

- Պատմություն Սեբեոսի**, Երևան, 1979:
- Սադոյան Բ.**, Արուճի վաղ միջնադարյան հուշարձանները, ՊԲՀ, 1985, № 4:
- Ստեփանոս Տարոնացի**, Պատմություն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:
- Սամվել Անեցի**, Հաւարմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:
- «Հաւարումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վեցնտիկ, 1862:**
- Տեր Ղևոնդյան Ա.**, «Հայոց իշխան տիտղոսի ծագումը և Հայոց տերությունը VII դարում», «Բանբեր Երևանի համալսարան», 1969, № 1:
- Օրմանյան Մ.**, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912:
- Արությունյան Վ.**, По поводу датировки храма в Аруче. Ереван, 1946.
- Դурново Л.**, Стенная живопись в Аруче. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1952, № 1:
- Դурново Л.**, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957.
- Կотанджян Н.**, Художественный язык аручской росписи и фрески Армении раннего средневековья, II Международный симпозиум, по армянскому искусству, Ереван, 1978.
- Մարր Н.**, Армянская церковь в Аруче («Известия Археологической комиссии», 1904, вып. 12).
- Մեսրոպ Վարդապետ**, Эчмиадзин и древнейшие армянские церкви, СПб, 1905.
- Մещанинов И.**, Новая халдейская надпись из села Талыш, «Известия АН СССР», VII серия отд. общ. наук. 1932, № 4.
- Օրбели И.**, Избранные труды, Ереван, 1963.
- Թեր-Գեвоնդյան А.**, Армения и арабский халифат, Ереван, 1977.
- Թոքարский Н.**, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961.
- Եյոբсон А.**, Очерки истории зодчества Армении V—XVIII веков, М.-Л., 1950.
- Der Nersessian S.**, L'art arménien, Paris, 1977.
- Strzygowski J.**, Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918.
- Hasratian M. M.**, La salle a coupole de Ville siècle de Dedmachène et les monuments similaires du Haut Moyen Age en Arménie, „Revue des E'tudes arméniennes“, t. X, Paris, 1973—74.

ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐ

- Աբրահամ Աղքաթանցի 10
Աբրահամ Երևանցի 7
Աբրահամյան Ա. 56
Աբդլլահ 27
Աբդլարիբ Պահլավունի 31
Ադամ քահանա 53
Ազարյան Լ. 81
Այիշան Ղ. 4, 7, 16, 33, 62, 76
Ալի-Ղլիթվեր 22
Անաստաս Ակոտեցի 11, 14, 15, 25, 26, 37, 52, 58, 59
Անանիա Շիրակացի 26—27
Աշոտ Ա Բագրատունի 60—61
Աշոտ Բագրատունի (VII դ.) 15, 25
Աշոտ Ողորմած 16
Ատաբեկյան Բ. Ն. 19—23, 28, 30, 55
Աստվածատուր 33
Ավագյան Ա. 31, 61
Ավգերյան Մ. 27
Ավթան աղա 62
Արգամ 72
Արեշյան Գ. 5, 6
Արղուն խան 61
Արտավազդ Դիմաքսյան 10, 11
Բալասանյան Ա. 44
Բալիձոր 21
Բաղդասարյան Վ. 45
Բառաբա 19
Բարխուդարյան Ա. 57
Գազիկ Արծրունի 73
Գասպարյան Հ. 66
Գիորգիս 10, 70
Գրիգոր Լուսավորիչ 16, 22
Գրիգոր Մամիկոնյան 3, 11—23, 25—28, 37, 40, 47, 48, 52—58, 59, 64, 70, 75, 78
Գրիգոր որդի Վռամի 29, 59, 60
Գրիգոր քահանա 33
Գորամ 43, 60, 83
Գևորգ 30, 31
Գևորգյան Ա. 49
- Դավիթ 60
Դավիթ Դվինցի (Սուրբան) 14, 16, 26, 27, 37
Դավիթ Մամիկոնյան 17
Դավիթ Սահառունի 15
Դավիթ Սուպան 30
Դավիթ քահանա 63
Դեմետրե 61
Դուրնովո Լ. 4, 45—50, 73
Եգիտ 21
Եղևվոն 63
Եղիազարյան Հ. 55, 61, 65, 67, 7ս
Եղիազարով Ա. 61
Եղիշե 10, 76
Երեմիա 33
Զաքարիա Ջազեցի 60
Զաքարիա Սարկավազ 33
Էփրիկյան Ա. 4
Թամանյան Յու. 44
Թամար թագուհի 30
Թեոդորոս Ռշտունի 15, 17, 18, 25
Թորամանյան Թ. 3—5, 37, 38, 64, 81
Իսահակ 82
Իսրայել Էպիսկոպոս 21—24, 75
Իսրայել Ռոմեցի 19, 25
Իսքանդար Մուճշի 7
Իվանե 61
Լեո 6, 18, 24
Լիմշ Խ. 4, 8, 37, 45
Խալփախչյան Հ. 65, 73, 84
Խաչատուր 43, 63
Խեչումյան Վ. 51
Խոզդեղ 63
Խուշուշ 30—31
Խուսան 35, 61
Կիրակոս Գանձակեցի 13, 14, 37, 56
Կոստանդին Բ. 54—56, 59
Կոստանդին Պազունատ 54
Կոստանյան Կ. 55
Կորիմազյան Է. 45
Հաբիբ իբն Մալամա 11, 76

Հակոբյան Թ. 79
Հակոբյան Հ. 8
Համազասպ Մամիկոնյան 15, 17, 18
Հասարթյան Մ. Մ. 39, 74
Հարությունյան Ա. 44
Հարությունյան Վ. Մ. 4, 38, 54, 55, 64—
68, 71, 73, 75, 79, 80
Հարությունյան Վ. 82
Հեղինե 22, 24, 25, 27, 48, 54
Հերակլ 55, 57
Հովհաննես (Ովնես) 61
Հովհաննես ավետարանիչ 47
Հովհաննես Ակարիչ 51
Հովհաննես Դրասխանակերտցի 12—15, 18,
23, 25, 26, 34, 59, 64, 75
Հովհաննեհիյան Մ. 76
Հովհաննեհիյան Ա. 45
Հովսեփյան Գ. 53, 55, 57
Ղազան խան 7
Ղաֆադարյան Կ. 74
Ղևոնդ 11—15, 18, 21, 23, 24, 46
Մաթեոս 63
Մաթևոսյան Ա. 26, 63, 83, 84
Մաթևոսյան Ռ. 16
Մամախաթուն 62
Մանանդյան Հ. 12, 30, 61
Մանկլի 35, 61
Մառ Ն. 4, 37, 45, 46, 54—56, 64
Մարգարյան Հ. 84
Մարկար կազմող 62
Մարեմտուր Կողբացի 32
Մելիք-Բախշյան Ա. 18
Մելիքշվիլի Գ. 6
Մելքոնյան Մ. 44
Մեշչանցինով Ի. 6
Մծեժ Գնունի 15
Միքայել Աղջեցի 10
Մխիթար 63
Մխիթար Այրիվանցի 15
Մխիթար Անցի 15
Մխիթարյան Ա. 4, 32, 37, 43
Մկրտիչ արեղա 33, 35
Մնացականյան Աս. 20
Մնացականյան Ա. 82
Մնացականյան Ստ. 38, 40, 55, 72

Մովսես Կաղանկատվացի 11, 15, 18, 22,
24, 25, 52, 53
Մուսվիս 15, 17—19, 21, 22
Մուշեղ Մամիկոնյան 12
Մուշեղյան Խ. 30
Մուսես քահանա 83
Յակոբսոն Ա. 38, 39, 48
Յուսուֆ 13, 29
Ներսես Կամարական 15
Ներսես վրաց իշխան 19
Ներսես Գ Տալեցի 17, 22, 25, 28, 52
Շահ Աբաս 7
Շահինյան Ա. 56—58
Շահխաթունյանց Հ. 4, 7, 37, 4-, 62, 76,
79
Չուրիմաշվիլի Գ. 38, 55, 56
Ջվանշիր 11, 20, 21, 24—26, 52, 53
Ռադ 33, 35
Ռոբերտ Կեր Փոքրոս 4, 7, 81
Սաղոյան Բ. 77—78
Սամվել Անցի 13—15, 37, 57—59
Սահակ Գ Չորափորեցի 25
Սահինյան Ա. 39
Սպինաթ բեկ 63
Սարգիս Փառշկյան 31
Սարգսյան Բ. 35
Սարգսյան Ն. 32, 43
Սարդուր Բ 6
Սաֆարյան Ա. 39
Սեբեոս 10, 11, 18
Սելիմ 7, 76
Սիրամարզ 63
Սմբատ Ա Բագրատունի 13, 29, 30, 60
Սմբատ Բ Բագրատունի 57
Սմբատ Բագրատունի (VII դ.) 18
Սմբատ Բագրատունի (VIII դ.) 15
Սմբատ պարոն 84
Սմբատ սպարապետ 29, 59, 60
Սմիռնով Յա. 47
Սոսթենես արուճեցի 30
Սոսթենես 33
Ստեփանոս Ակարիչ 28, 50—53
Ստեփանոս Տարոնացի 13, 15, 28
Ստրժիգովսկի Յ. 4, 38, 55
Վախթանգ իշխան 33

Վասակ Այունցի 10, 76
Վարազ Տրդատ 20—22, 25
Վարդան 51
Վ. սրդան Արևելցի 15, 24
Վարդան Մամիկոնյան 15
Վրթանես Քերթոզ 49
Տե՛ր Ղևոնդյան Ա. 17—19, 25, 27
Տե՛ր Մովսիսյան Մ. 54
Տե՛ր Ներսիսյան Ա. 4, 46, 49
Տիգրան Հունցի 31, 32

Տոկարսի Ն. 4, 38, 40, 41, 80
Տրդատ քահանա 30, 31
Ուլուքաբյան Բ. 20
Փավստոս Բուզանդ 74
Փիրուզյան Ա. 43
Քյուսեյան Հ. 49
Քրթանջյան Ն. 46—51
Քրիստոս 30, 32, 47, 49, 52
Օրբելի Հ. 4, 31, 54—56
Օրմանյան Մ. 26

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Ալայազ 57
Ակոռիի ս. Հակոբ եկեղ. 26
Աղբրի ձոր 4 76
Աղթամարի ս. Խաչ եկեղ. 49, 73
Աղվանք 11, 20—25, 52, 53, 75
Այրարատ 3, 7, 11, 28
Անդրկովկաս 5
Աճի 3, 4, 16, 28—31, 34, 79, 81 84
Աճիի Գր. Լուսավորչի եկեղ. 32
Աճիի կաթողիկե 57
Աճիի ս. Փրկչի եկեղ. 30, 31, 49
Աշնակ 10, 11, 79
Աշտարակի շրջան 3
Ասորիք 18, 19
Ավանի պալատ 65
Ատրպատական 13
Արարատյան երկրամաս 7, 22, 34
Արագած լեռ 4, 13
Արագածոտն գավառ 3, 7, 10, 12, 81, 85
Արթիկի եկեղ. 41 44, 47
Արծն 28
Արմավիր 6
Արուն 3—10 և այլուր
Արուն գետակ 4
Արունի պալատ 3, 12, 64—75, 82
Արունի ս. Գրիգոր եկեղ. 3, 4, 12—15, 34,
37—64, 82
Արփաչայ 7
Բագավան 12, 57
Բագարան 57
Բայազետ 8
Բասեն 8

ԲԷԽԵՆԸ արտ 31, 32, 34
Բլխենց վանք 81
Բյուզանդիա 19, 21, 25
Բյուրականի ս. Հովհաննես եկեղ. 12
Գառնահովիտ 82
Գառնի 10
Գավառ 29, 59
Գարդման 53
Գյուրջու խոր ձոր 4, 5, 82, 83
Գոմուր 57
Դամասկոս 17, 19, 20
Դարսնառյաց գավառ 22, 25
Դարույնք 23
Դղմաշեն 38, 39
Դվին 10, 12, 14, 17, 27—29, 70, 79
Դվինի Արշակունյաց պալատ 65 74
Դվինի կաթողիկոսական պալատ 65, 70—75
Եղվարդի բազիլիկ 68
Եղվարդի ս. Ջորավար եկեղ. 12—15 28,
40, 41, 51, 70, 73
Երամոք 10
Երևան 5, 7, 32, 79
Ջովունի 38, 39
Զվարթնոց 17, 22, 25, 26, 40, 41, 43, 65
73
Էջմիածին 7, 81
Թալին 33, 58, 79, 81, 82
Թալինի կաթողիկե 40, 41, 44
Թալիշ 7, 8
Թորդան 22
Իրան 7
Լենինական 79

Լմբատավանք 44
Խաչիկի բլուր 31, 34
Կարս 28, 79
Կոզովիտ գավառ 12
Կոշ (Կուաշ) 10, 29, 32, 59
Կոշի ս. Ստեփանոս եկեղ. 44
Կոստանդնուպոլիս 19, 24
Կովարած 31 34
Կոտայք գավառ 26
Հաղբաստ 49
Հայաստան 3, 5, 10, 13, 16—22, 27, 28,
46, 54, 73, 75, 81
Հառիճ 4, 33, 34, 83
Հոռոմոս 4, 29, 32—35, 83
Հովհանավանք 33
Հոփսիսմե 58
Ձագ գյուղ 28
Մազոտն 32, 34
Մակու 8
Մարաղա 7
Մաստարա 79
Մարմաշեն 33
Ինձկողմանք 21—22
Մրեն 32
Մուշ 8
Ներքին Ջրարփի 79
Շամիրամաձոր 5
Շամիրամ գյուղ 5, 6, 60
Շիրակ 7, 8, 28
Շլիկ 31, 34
Պտղնի 38—40, 42
Սաղար 31, 34
Սանահին 33
Սարդարապատ 8, 84
Սև ծով 79
Սիսիանի եկեղ. 41
Վաղարշապատ 21, 22, 25
Վանքաձոր 4, 82, 83
Վերին թաղ 33
Վրաստան 4, 8
Տեկոր 57, 68
Տրոմի 47
Ուրարտու (Արարատ) 6
Օշական 32

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

ՀՈՎԱՆԳԱԿՈՒՅՈՒՆ

Ներածություն	3
ՄԱՍՆ Ա ԱՐՈՒՃԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՅՅԱԼԸ	
Մատենագրական տեղեկություններ Արուճի մասին	10
Գրիգոր Մամիկոնյանի կառավարման շրջանը	16
Արուճը IX—XIII դդ.	28
ՄԱՍՆ Բ ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ	
Արուճի տաճարը	87
Շալատը	64
Բերդ	76
Ջարթաղատունը	79
Միջնադարյան ալի հուշարձաններ	81
ԲՅՅՈՒՄ	83
Ցանկեր	88
Լուսանկարներ	85

Կարեն Արտաշեսի Մաթևոսյան

ԱՐՈՒՃ

Карен Арташесович Матевосян

ԱՐՄԿ

(На армянском языке)

Ереван «Айастан» 1987

Խմբագիր՝ Ռ. Վ. Սարգսյան

Նկարիչ՝ Լ. Խ. Խաչատրյան

Գեղ. խմբագիր՝ Գ. Ա. Գապոյան

Լուսանկարիչ՝ Զ. Սարգսյան

Տեխն. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան

Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Վ. Խաչատրյան

ԷԼ/Կ

Հանձնված է շարվածքի 22.04.1987 թ.: Խտրագրված է տպագրության 26.08.1987 թ.:
ՎՋ 00700: Ֆորմատ՝ 70×90^{1/16}: Թուղթ՝ կավնապատ: Տպատեսակ՝ «Նորք»: Տպագրու-
թյուն՝ օֆսեթ: Զ,94 պլավ. տպագր. մամ., 10,52 պլավ. Երկ թելք, 7,49 հրատ. մամ.:
Տպաքանակ՝ 3000: Պատվեր 1040: Գինը 85 կոպ.:

Հաշտտան հրատարակչություն, Երևան—9, Իսահակյան 28:

Издательство «Айтаган», ул. Исаакяна, 28.

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արուսյան փող. № 52:

Типография Ереванского университета, Ереван, ул. Лбовяна, 52.

191 19995

